


ԱՍ Փարթնըրգ Բոնսալթինգ Քամփինի
2/21/2011

ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԾՐՁԱՆՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԸՆԿԱԼՄԱՆ ԵՎ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹԻ ԾՈՒԿԱՅԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ



ԱՄՆ Միջազգային Զարգացման
Գործակալություն

CAPS

Մրցունակ Մասնավոր Հատված
Հայաստանում Ծրագիր

MPI
UNION

Հեղ արտադրողների եւ
Ներմուծողների միություն



ԱՄ Փարթնըրգ
Բոնսալթինգ Քամփինի

Բովանդակություն

1 ՆԱԽԱԲԱՆ	4
1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ	4
1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ	5
1.2.1 Հիմնական սահմանումները	5
1.2.2 Հետազոտության անցկացման տեխնիկան	7
1.2.3 Հետազոտության աշխարհագրական ծածկույթը	7
1.2.4 Հետազոտության ընտրանքը	8
2 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
2.1 ԲՆԱԿԻՉ-ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	9
2.2 ԲԺԻՃԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	11
2.3 ԴԵՂԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ	12
3 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ	13
3.1 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ	13
3.1.1 Բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին.....	13
3.1.2 Բժիշկների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին	15
3.1.3 Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին ...	17
3.2 ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ	19
3.2.1 Հայկական դեղագործական արտադրանքի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները.....	19
3.2.2 Հայկական դեղագործական արտադրանքի մասին բժիշկների տեղեկացվածության աղբյուրները	20
3.2.3 Հայկական դեղագործական արտադրանքի մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները.....	21
3.3 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	22
3.3.1 Բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին....	22
3.3.2 Բժիշկների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին	23
3.3.3 Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին	25
3.4 ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՈՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ	27
3.4.1 Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները.....	27
3.4.2 Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բժիշկների տեղեկացվածության աղբյուրները	28
3.4.3 Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները	29
4 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄ	31
4.1 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՐՁԸ	31
4.1.1 Բնակիչ-սպառողների կողմից դեղերի օգտագործման (սպառման) փորձը	31
4.1.2 Բժիշկների կողմից դեղերի օգտագործման (ևշանակելու/դուրս գրելու) փորձը.....	33
4.1.3 Դեղատների աշխատողների կողմից դեղերի օգտագործման (վաճառքի) փորձը.....	34
4.2 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՄԸ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ	35
4.2.1 Ովքե՞՞ր Եւ ինչո՞ւ՝ առ այսօր չեն օգտագործել հայկական դեղագործական արտադրանք	35
4.2.2 Օգտագործողների շրջանում դեղերի ծագման կարեւորությունը Եւ նախընտրությունները	36
4.2.2.1 Դեղերի ծագման կարեւորությունը բնակիչ-սպառողների շրջանում	36

4.2.2.2 Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում	38
4.2.2.3 Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում	40
4.3 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏՐՎԱԾ ԳՆԱՐԱՏԱԿԱՆՆԵՐԸ	42
4.3.1 Բնակիչ-սպառողների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տրված գնահատականները	43
4.3.2 Բժիշկների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տրված գնահատականները	44
4.3.3 Դեղատների աշխատողների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տրված գնահատականները	46
5 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ԿԱՄ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱԳՃԻ ՈՐՈՇ ԱՌԱՋԱՆԱՌԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	48
5.1 ԲՆԱԿԻՉ-ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՂԵՐԻ ԳՆՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱՇԴՈՂ ԳՈՐԾՈՂՆԵՐԸ	48
5.2 ԲԺԻՇԿՆԵՐԻ ՎԱՐՁԱԳՃԻ ՈՐՈՇ ԱՌԱՋԱՆԱՌԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	50
5.3 ԴԵՂԱՏՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱԳՃԻ ՈՐՈՇ ԱՌԱՋԱՆԱՌԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	52
6 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ «ԱՌՈՂ ԱՇԳ, ԱՌՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՔԱՐՈՉԱՐԵԱԿԻ ՄԱՍԻՆ	56
7 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՌԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՏԱՇՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ	60
7.1 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՌԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒԵՌՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ	60
7.2 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՌԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՌՈՂ ԱՇԳ, ԱՌՈՂ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՔԱՐՈՉԱՐԵԱԿԻ ՄԱՍԻՆ	65
8 ԱՄՓՈՓՈՒՄ	66
8.1 ԵՇՐԱՋԱՆԳՈՒՄՆԵՐ	66
8.2 ԱՌԱՋԱՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	68
Այլուսակների ցանկ	
Այլուսակ 1 - Նետագործության ընտրանքը, նրա թիրախային խմբերը Եւ աշխարհագրական բաշխվածքը	8
Այլուսակ 2 - Նարցմանը մասնակցած բնակիչ-սպառողների նկարագիրը	9
Այլուսակ 3 - Նարցմանը մասնակցած բժիշկների նկարագիրը	11
Այլուսակ 4 - Նարցմանը մասնակցած դեղատների աշխատողների նկարագիրը	12
Այլուսակ 5 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները	14
Այլուսակ 6 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.	14
Այլուսակ 7 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.	15
Այլուսակ 8 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները	16
Այլուսակ 9 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.	17
Այլուսակ 10 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.	17
Այլուսակ 11 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները	18
Այլուսակ 12 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.	18
Այլուսակ 13 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.	19
Այլուսակ 14 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական դեղագործական ծեռարկությունների ճանաչվածությունը	23
Այլուսակ 15 - Հայկական դեղագործական ծեռարկությունների դասակարգումը օստ բժիշկների շրջանում ճանաչվածության	23
Այլուսակ 16 - Բժիշկների շրջանում հայկական դեղագործական ծեռարկությունների ճանաչվածությունը	24
Այլուսակ 17 - Բժիշկների շրջանում հայկական դեղագործական ծեռարկությունների ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.	25
Այլուսակ 18 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական դեղագործական ծեռարկությունների ճանաչվածությունը	26
Այլուսակ 19 - Հայկական դեղագործական ծեռարկությունների մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության 3 գլխավոր աղյուրները	27
Այլուսակ 20 - Հայկական դեղագործական ծեռարկությունների մասին տեմինարներին չմասնակցած բժիշկների տեղեկացվածության 3 գլխավոր աղյուրները	28
Այլուսակ 21 - Հայկական դեղագործական ծեռարկությունների մասին տեմինարներին մասնակցած բժիշկների տեղեկացվածության 3 գլխավոր աղյուրները	29
Այլուսակ 22 - Հայկական դեղագործական ծեռարկությունների մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության 3 գլխավոր աղյուրները	29
Այլուսակ 23 - Հայկական դեղեր օգտագործելու բնակիչ-սպառողների փորձի առկայությունը 2008-2011թթ.	32

Այլուսակ 24 - Հայկական դեղեր Նշանակելու / դուրս գրելու բժիշկների փորձի առկայությունը.....	33
Այլուսակ 25 - Հայկական դեղեր Նշանակելու / դուրս գրելու բժիշկների փորձի առկայությունը 2008-2011թթ.....	34
Այլուսակ 26 - Դեղերի ծագման կարեւորությունը բնակիչ-սպառողների շրջանում.....	36
Այլուսակ 27 - Բնակիչ-սպառողների շրջանում դեղերի ծագման և ախցնությունների հիմնավորումները	37
Այլուսակ 28 - Դեղերի ծագման կարեւորությունը Եւ բնակիչ-սպառողների շրջանում 2008-2011թթ.....	37
Այլուսակ 29 - Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում.....	38
Այլուսակ 30 - Բժիշկների շրջանում դեղերի ծագման և ախցնությունների հիմնավորումները	39
Այլուսակ 31 - Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում 2008-2011թթ.....	39
Այլուսակ 32 - Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում.....	40
Այլուսակ 33 - Դեղատների աշխատողների շրջանում դեղերի ծագման և ախցնությունների հիմնավորումները	40
Այլուսակ 34 - Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում 2008-2011թթ.....	42
Այլուսակ 35 - Օգտագործողների կողմից դեղերի բնորոշիչների գնահատման համար օգտագործված սանդղակ	42
Այլուսակ 36 - Բնակիչ-սպառողների մասնաբաժինը, որում կարողացել են հանդես գալ դեղերի բնորոշիչների գնահատականներով	43
Այլուսակ 37 - Բնակիչ-սպառողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.....	44
Այլուսակ 38 - Բժիշկների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.....	45
Այլուսակ 39 - Դեղատների աշխատողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.....	47
Այլուսակ 40 - Բժիշկների կողմից դեղատում դուրս գրելու շարժամիջները	51
Այլուսակ 41 - Դեղատներում դեղերի վաճառքի հարցում դեղատների աշխատողների վարքագիծը բնութագրող հարցերի պատասխանները	52
Այլուսակ 42 - Բնակիչ-սպառողների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները	56
Այլուսակ 43 - Սեմինարներին չմասնակցած բժիշկների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները	57
Այլուսակ 44 - Դեղատների աշխատողների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները	57
Այլուսակ 45 - Սեմինարներին մասնակից բժիշկների կողմից մասնակցություն բերված միջոցառումները Եւ դրանց արդյունավետության գնահատականները	58
Այլուսակ 46 - Քարոզարշավի միջոցառումների արդյունքում սեմինարներին մասնակից բժիշկների շրջանում հայկական արտադրության դեղերի ընկալումների փոփոխությունները	59
Այլուսակ 47 - Հայկական արտադրության դեղերի առաջման համար անհրաժեշտ գործողություններն զստ դեղերի օգտագործողների 68	

Նկարների ցանկ

Նկար 1 - Օգտագործողների շրջանում դեղերի մասին տեղեկությունների տարածման հիմնական ուղին	19
Նկար 2 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները	20
Նկար 3 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին բժիշկների տեղեկացվածության աղբյուրները	20
Նկար 4 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին բարոզարշավի սեմինարներին մասնակցած բժիշկների տեղեկացվածության աղբյուրները	21
Նկար 5 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները	22
Նկար 6 - Բնակիչ-սպառողների կողմից դեղատներ այցելելու հաճախականությունը հետազոտության նախորդող 4 ամիսների ընթացքում	31
Նկար 7 - Հարցման պահին բնակիչ-սպառողների կողմից գնված դեղերի ծագումը	32
Նկար 8 - Բնակիչ-սպառողների կողմից երբեւ ձեռք բերված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը	33
Նկար 9 - Բժիշկների կողմից նշանակված / դուրս գրված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը հետազոտության նախորդող 4 ամիսների (2010թ. սեպ.-դեկ.) ընթացքում.....	34
Նկար 10 - Դեղատների աշխատողների կողմից վաճառված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը հետազոտություններին նախորդող 4 ամիսների ընթացքում	35
Նկար 11 - Բնակիչ-սպառողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ	43
Նկար 12 - Բժիշկների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ	44
Նկար 13 - Դեղատների աշխատողների կողմից դեղերի դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ	46
Նկար 14 - Բնակիչ-սպառողների դեղերի գնման որոշման վրա ազդող գործոնները	48
Նկար 15 - Դեղերի գնելու հարցում բնակիչ-սպառողների որոշման վրա ազդող տարրեր գործոնների կարեւորության գնահատականները	49
Նկար 16 - Բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին.....	56
Նկար 17 - Սեմինարներին չմասնակցած բժիշկների տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին..	57
Նկար 18 - Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին.....	57

1 ՆԱԽԱԲԱՆ

«Օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի ընկալման եւ վերաբերմունքի շուկայական հետազոտություն» (այսուհետ՝ հետազոտություն) իրականացվել է ԱՄՆ Միջազգային Զարգացման Գործակալության (այսուհետ՝ USAID) կողմից ֆինանսավորվող «Մրցունակ Մասնավոր Հատված Հայաստանում» Ծրագրի¹ (այսուհետ՝ CAPS Ծրագրի) շրջանակներում: Պատվիրատուն Ե՝ Nathan Associates Inc. AB, որը հանդիսանում է CAPS Ծրագրի իրականացնողը: Հետազոտությունն իրականացվել է «ԱՄ Փարթևըզ Ջոնսալթինգ Քամփինի» ՍՊԸ-նը² կողմից: Հետազոտությունն իրականացվել է 2010 դեկտեմբեր - 2011 փետրվար ժամանակահատվածում:

1.1 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ

Սույն հետազոտությունը CAPS Ծրագրի կողմից նախաձեռնված նմանատիպ երկրորդ հետազոտությունն է: Առաջին հետազոտությունն իրականացվել է 2008թ.-ի ապրիլ-հունիս ամիսներին³: 2008թ.-ը հանդիսանում է Հայաստանի դեղագործության բնագավառում CAPS Ծրագրի ինտերվենցիաների ինտենսիվացման ժամանակաշրջան: Այդ ինտերվենցիաները ներառում են դեղագործության բնագավառի աջակցության տարրեր ծրագրեր, այդ թվում՝

1. *ինստիտուցիոնալ զարգացման ծրագրեր*, որի շրջանակներում տեխնիկական աջակցություն է ստացել Հայաստանի Դեղ Արտադրողների եւ Ներմուծողների Միությունը (ԴԱՄ Միություն),
2. *տեխնիկական աջակցության ծրագրեր*, որոնց շրջանակներում դեղագործության բնագավառի ձեռնարկությունները ստացել են դրամաշնորհներ, մասնագիտական աջակցություն, մասնակցել են սեմինարների եւ ուսուցողական ծրագրերի,
3. *ընդհանուր շուկայավարման ծրագրեր*, որոնք միտված են եղել Հայաստանի դեղերի շուկայում հայկական դեղագործական արտադրանքի խթանմանը, գնորդների եւ սպառողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի տեղեկացվածության բարձրացմանը, դրական ընկալումների եւ վերաբերմունքի ձեւավորմանը:

Օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի ընկալման եւ վերաբերմունքի 2008թ.-ի եւ 2011թ.-ի հետազոտություններն իրականացվել են CAPS Ծրագրի վերոհիշյալ ինտերվենցիաների երրորդ խմբի շրջանակներում: 2008թ.-ի հետազոտությունը թույլ տվեց հասկանալ, թե ինչպիսին է հայկական դեղագործական արտադրանքի մասին օգտագործողների տեղեկացվածության մակարդակը եւ վերաբերմունքը՝ CAPS-ի ծրագրերի մեկնարկային փուլում: 2011թ.-ի սույն հետազոտությունը պատասխանում է նոյն հարցերին՝ արդեն CAPS Ծրագրի ավարտական փուլում:

Վերը շարադրվածի ենթատեքստում սույն հետազոտությունը չպետք է դիտել որպես CAPS Ծրագրի գնահատում: Սույն հետազոտության արդյունքները չեն պատասխանում այն հարցին, թե օգտագործողների տեղեկացվածության կամ վերաբերմունքի փոփոխությունը որքանով է պայմանավորված CAPS Ծրագրի ինտերվենցիաներով: Սույն հետազոտությունը դասական իմաստով շուկայական հետազոտություն է: Նրա կարեւորությունը կայանում է նրանում, որ այն հայկական դեղագործական ձեռնարկություններին, նրանց միությանը (ԴԱՄ Միություն) եւ անգամ ներմուծողներին առաջարկում է թարմ տվյալներ՝ սպառողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի տեղեկացվածության եւ վերաբերմունքի մասին: Ընդ որում՝ սույն հետազոտության արդյունքների օգտագործողները հնարավորություն ունեն դեղերի գնորդների եւ

¹ www.caps.am

² www.ampartners.am

³ Առաջին հետազոտությունը եւս իրականացվել է «ԱՄ Փարթևըզ Ջոնսալթինգ Քամփինի» կողմից

սպառողների տեղեկացվածության եւ վերաբերմունքի տվյալները դիտել համեմատության մեջ՝ 2011թ.-ը համեմատած 2008թ.-ի հետ:

Սույն հետազոտությունը կարեւորություն է ներկայացնում մեկ այլ պատճառով եւս: Ընդամենը վերջերս է ավարտվել CAPS Ծրագրի կողմից նախաձեռնված «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավը: Այդ լայնածավալ միջոցառման շրջանակներում իրականացվել է տեղեկատվական արշավ՝ միտված օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի տեղեկացվածության բարձրացմանը: Գործի են որպես տեղեկատվական քարոզարշավի բազմաթիվ լծակներ՝ ընդունելություններ եւ շնորհանդեսներ, հեռուստա- եւ ռադիոհաղորդումներ, մամուլի ասուլիսներ, իրապարակումներ մամուլում, ինտերնետում, սեմինարներ բժիշկների շրջանում Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում: Սույն հետազոտության շրջանակներում հարցումներ են իրականացվել այդ քարոզարշավի շրջանակներում իրականացված սեմինարներին ինչպես մասնակցած, այնպես ել չմասնակցած բժիշկների շրջանում: Յայկական դեղագործական արտադրանքի մասին նրանց տեղեկացվածության եւ վերաբերմունքի տարբերություններից կարելի է կարծիք կազմել քարոզարշավի արդյունավետության եւ ազդեցության վերաբերյալ: Դա շատ կարեւոր է հատկապես հետազայում նմանատիպ քարոզարշավներ կազմակերպելու նպատակահարմարության տեսանկյունից:

Սույն հետազոտության կողմից թիրախված մեկ այլ կարեւոր խնդիր է հայկական դեղագործական ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշների փոփոխությունը 2008-2011թթ.-ին: Այսուշտ, կարելի է կարծել, որ 3-4 տարի շարունակ հայկական ձեռնարկություններին տրամադրված աջակցությունը ունեցել է իր դրական հետեւանքները եւ ազդեցությունը՝ ձեռնարկությունների գործունեության վրա: Սակայն, մյուս կողմից, պետք է հաշվի առնել, որ դիտարկված ժամանակահատվածը համընկնում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, որը ծանր ազդեցություն է ունեցել Յայաստանի տնտեսության վրա: 2009թ.-ին արձանագրվել է ՀՆԱ-ի 14.4% անկում, արտահանումը կրճատվել է 30%-ով, աղքատությունը աճել է՝ հասնելով 34.1%-ի: Այս խնդիրներն, անշուշտ, իրենց բացասական ազդեցությունն են ունեցել նաև հայկական դեղագործական ձեռնարկությունների վրա: Այս իմաստով շատ դժվար է գնահատել, թե որքանով են CAPS Ծրագրի ինտերվենցիաների դրական հետեւանքները մեղմել ճգնաժամի բացասական ազդեցությունը:

Այսպիսով, օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի ընկալման եւ վերաբերմունքի շուկայական հետազոտությունը հետապնդել է հետեւյալ 4 նպատակները.

1. պարզել 2011թ.-ի սկզբի դրությամբ օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի տեղեկացվածության աստիճանը, ընկալման եւ վերաբերմունքի առանձնահատկությունները,
2. 2011թ.-ի տվյալները 2008թ.-ի հետ համեմատելու միջոցով գնահատել օգտագործողների տեղեկացվածության եւ վերաբերմունքի դիմամիկան,
3. ընդհանուր կարգով գնահատել CAPS Ծրագրի կողմից 2010թ.-ին իրականացված «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի կարեւորությունը եւ արդյունավետությունը,
4. պարզել հայկական դեղագործական ձեռնարկությունների գործունեության ցուցանիշների դիմամիկան 2008-2010թթ.-ին:

1.2 ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՈԼՈԳԻԱՆ

1.2.1 Յիմնական սահմանումները

Գլխավոր երկու ձեւակերպումները, որոնք շատ հաճախ են հանդիպում սույն հետազոտության հաշվետվության մեջ եւ որոնց վրա մենք իրավիրում ենք ընթերցողի ուշադրությունը,

«դեղագործական արտադրանք» եւ «դեղագործական արտադրանքի օգտագործողներ» բառակապակցություններն են:

☞ **«Դեղագործական արտադրանք»**

Դեռևս առաջին հետազոտության ժամանակ է նշվել, որ քսագավառի ներկայացուցիչների կողմից մեզ հետաքրքրող ապրանքը բնորոշվել է տարբեր ձեւակերպումներով, ինչպես օրինակ «դեղագործական արտադրանք», «դեղեր», «դեղամիջոցներ», «դեղորայք»: Չմանրամասնելով այդ տերմինների տարբերությունը, պետք է արձանագրենք, որ բոլոր դեպքերում **խոսքը գնում է դեղատնային ապրանքներից միայն դեղերի մասին եւ չի վերաբերվում բժշկական նշանակության, հիվանդի խնամքի, սանիտարային եւ հիգիենայի ապրանքներին:** Ուստի սույն հետազոտության տեսանկյունից՝

! հաշվետվության մեջ հանդիպող «դեղագործական արտադրանք», «դեղամիջոցներ», «դեղորայք» կամ «դեղեր» տերմինների տակ պետք է հասկանալ միայն «ԴԵՂԵՐ» ապրանքների խումբը իր բոլոր ձեւերով՝ հաբեր, պատիճներ, կաթիլներ, սրվակներ, ներարկման հեղուկներ եւ պինդ, մածուցիկ, հեղուկ եւ գագանման վիճակով:

☞ **«Դեղագործական արտադրանքի օգտագործողներ»**

Սույն հետազոտության տեսանկյունից **դեղագործական արտադրանքի օգտագործողներ** են համարվում բոլոր այն սուրբեկտները, որոնք իրականացնում են դեղագործական արտադրանքի գնումներ, անկախ այն բանից, թե հետո ինչ նպատակով են դրանք օգտագործում: Այս տրամաբանությամբ սույն հետազոտության օբյեկտներն են ընդունվել հետեւյալ թիրախային խմբերը.

1. **Հայաստանի քնակիչներ (քաղաքացիներ).** - Մարդիկ, որոնք կատարում են (կամ կատարել են) դեղերի գնումներ, անկախ այն բանից, թե դրանք նախատեսված են սեփական սպառման, թե մեկ ուրիշի օգտագործման համար: Հաշվետվության մեջ այս խումբը առանձին ներկայացնելիս օգտագործվել է «քնակիչ-սպառողներ» բառեզրը:
2. **Բժիշկներ.** - Բնակչությանն առողջապահական ծառայություններ մատուցելու համար դեղերի գնումներ են իրականացնում եւ պաշարներ են ստեղծում բուժիմարկները, այդ թվում հիվանդանոցները, ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկները, ստոմատոլոգիական պոլիկլինիկաները: Բուժիմարկներում դեղերի շրջանառությանն անմիջական առնչություն ունեն դեղատոմսեր դուրս գրող բժիշկները: Նրանք իրենց մասնագիտական պարտականությունների կատարման արդյունքում եւս հանդիսանում են դեղերի օգտագործողներ: Դեղատոմսեր դուրս գրող բժիշկները կազմել են հետազոտության ռեսպոնդենտների 2-րդ խումբը: Այս խումբը մենք պայմանականորեն բաժանել ենք 2 ենթախմբի. ա) բժիշկներ, որոնք չեն մասնակցել «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի սեմինարներին, եւ բ) բժիշկներ, որոնք մասնակցել են այդ սեմինարներին (այսպես կոչված ստուգողական խումբ): Այս տարբերակով մենք գնահատել ենք քարոզարշավի սեմինարների ազդեցությունը բժիշկների տեղեկացվածության մակարդակի փոփոխության հարցում:
3. **Դեղատների աշխատողներ.** - Դեղատները հանդիսանում են դեղերի առաջարկողների (արտադրողների եւ ներմուծողների) եւ վերջնական սպառողների (քնակչության) միջնորդ օղակ: Ինչպես բուժիմարկների դեպքում, դեղատները եւս հանդիսանում են դեղերի գնորդներ եւ վերավաճառողներ: Դեղերի շրջանառության գործընթացում դեղատների աշխատողները որոշ ընդհանրություններ ունեն բժիշկների հետ: Նրանք, բացի դեղերի սուկ վաճառող լինելուց, երբեմն նաև խորհուրդներ են տալիս իրենց հաճախորդներին, ուղղորդում են նրանց: Ուստի նրանք ընդունվել են որպես հետազոտության ռեսպոնդենտների 3-րդ խումբ:

Հաշվետվության մեջ վերը թվարկված բոլոր 3 խմբերը⁴ միասին ներկայացված են «դեղագործական արտադրանքի կամ դեղերի օգտագործողներ» ընդհանուրացնող բառակապակցությամբ:

1.2.2 Հետազոտության անցկացման տեխնիկան

Հաշվի առևելով այն հանգամանքը, որ սույն հետազոտության արդյունքները պետք է համեմատվեին 2008թ.-ի արդյունքների հետ, մենք կիրառել ենք առաջին հետազոտության ժամանակ հիմք ընդունված մոտեցումները: Առաջին հերթին դա վերաբերվում է հետազոտության գործիքներին՝ **հարցաշարերին**: Մենք օգտագործել ենք առաջին հետազոտության հարցաշարերը, որոնք համարվել են մի քանի հարցերով՝ կապված «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի հետ: Դեղերի օգտագործողների խմբերից յուրաքանչյուրի համար օգտագործվել է առանձին հարցաշար: Դրանցում եղել են ինչպես ընդհանուր (նույնանման) հարցեր, այնպես ել յուրաքանչյուր խմբի համար հատուկ հարցեր:

Հետազոտության անցկացման ընթացքում դեղերի օգտագործողներից տվյալները հավաքագրվել են **դեմ առ դեմ հարցազրույցների** միջոցով: Չնայած այն բանին, որ ռեսպոնդենտների մի զգակի մասը (մասնավորապես՝ բժիշկները եւ դեղատների աշխատողները) խնդրել է, որ հարցաշարերը փոխանցվեն իրենց, որպեսզի իրենք լրացնեն եւ վերադարձնեն, այսուամենայնիվ հետազոտության իրականացնողները տվյալների հավաքման ամբողջ ընթացքում հավատարիմ են մնացել որդեգրված մեթոդոլոգիային եւ բոլոր հարցաշարերը լրացվել են դեմ առ դեմ հարցազրույցների արդյունքում, որոնք թույլ են տվել հավաքագրել նաեւ հարցաշարից դուրս, սակայն կիրառական արժեք ունեցող այլ տեղեկություններ: Դրանց մեծ մասը տեղ է գտել հետազոտության հաշվետվության մեջ:

Բնակիչ-սպառողների դեպքում հարցազրույցներն իրականացվել են ոչ թե պատահական մարդկանց, այլ դեղերի իրական օգտագործողների շրջանում: Հարցազրույցներն իրականացվել են դեղատների ներսում կամ դրանց մոտակայքում: Ուսապոնդենտներն ընտրվել են դեղատներից ամեն 30 դույն դուրս եկող այցելուների թվից: Դա թույլ է տվել գրուցել դեղերի իրական (փաստացի) օգտագործողների հետ, միեւնույն ժամանակ պահպանելով ընտրանքի ձեւավորման պատահականության սկզբունքը:

Դեղագործական ձեռնարկությունների հետազոտության իրականացման համար եւս օգտագործվել են ստանդարտացված հարցաշարեր, ինչը թույլ է տվել ստանալ նույնատիպ տեղեկություններ եւ կատարել համադրություններ: Տեղեկությունները հավաքագրվել են ձեռնարկությունների դեկավարների հետ հանդիպումների ընթացքում՝ դեմ առ դեմ հարցազրույցների միջոցով:

1.2.3 Հետազոտության աշխարհագրական ծածկույթը

Օգտագործողների շրջանում հայկական դեղագործական արտադրանքի ընկալման եւ վերաբերմունքի շուկայական երկրորդ հետազոտության աշխարհագրական ծածկույթը թելադրվել է հետազոտության պատվիրատուի կողմից: Անհրաժեշտ տվյալների հավաքագրում իրականացվել է Երեւանում եւ Յայաստանի 2 մարզերում, որոնք են Շիրակը եւ Լոռին: Այդ մարզերի ընտրությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մասնավորապես այդտեղ են անցկացվել «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի միջոցառումները: Մարզերում հարցումներն իրականացվել են մարզկենտրոններում՝ Գյումրի եւ Վանաձոր քաղաքներում:

⁴ Առաջին հետազոտության ժամանակ հարցումներին ներգրավված են եղել նաեւ բուժիմարկներում գնումների պատասխանատունները եւ դեղատների դեկավարները, որոնք այս անգամ բացառվել են պատվիրատուի կողմից

1.2.4 Հետազոտության ընտրանքը

Հետազոտության ընտրանքի ձեւավորման հիմքում ընկած է եղել հետազոտության թիրախային խմբերից բավարար ներկայացուցչական խումբ առանձնացնելու սկզբունքը: Որպես ընտրանքի հաշվարկման բազա հիմք են ընդունվել թիրախային խմբերի քանակները: Օրինակ՝ բնակիչ-սպառողների դեպքում դա եղել է հետազոտության աշխարհագրական արեալի բնակչության թվաքանակը, բուժիմության դեպքում՝ հետազոտության աշխարհագրական արեալում դրանց թիվը: Թիրախային խմբերի համախմբությունից ընտրվել է այնպիսի քանակություն, որպեսզի հնարավոր լիներ կատարել հետեւյալ հայտարարությունները:

1. բնակիչ-սպառողների դեպքում՝ 95%-ով կարելի է պնդել, որ հետազոտության արդյունքները ճիշտ են բնակիչ-սպառողների ողջ համախմբության համար, ընդ որում հնարավոր սխալը չի անցնում 5%-ից,
2. բուժիմության դեպքում՝ 95%-ով կարելի է պնդել, որ հետազոտության արդյունքները ճիշտ են բոլոր բուժիմության դեպքում՝ համար, ընդ որում հնարավոր սխալը չի անցնում 10%-ից:

Այս տրամաբանությամբ ձեւավորվել է հետազոտության հետեւյալ ընտրանքը.

Այլուսակ 1 - Հետազոտության ընտրանքը, նրա թիրախային խմբերը եւ աշխարհագրական բաշխվածքը

Ընտրանքն ըստ հետազոտության թիրախային խմբերի	Ընտրանքի մեջությունն ըստ աշխարհագրական բաշխվածքի			Ընդամենը
	Երեւան	Շիրակ (Գյումրի)	Լոռի (Վանաձոր)	
Բնակիչ-սպառողներ	252	66	66	384
Բժիշկներ*	43	14	14	71
Դեղատների աշխատողներ	76	5	4	85
Ընդամենը	371	85	84	540

(*) - Սրանք այն բժիշկներն են, որոնք չեն մասնակցել քարոզարշավի սեմինարներին

Ինչպես նշվել է, «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի միջոցառումների կարեւորության եւ արդյունավետության գևահատման համար հավելյալ հարցազրույցներ են անցկացվել դրանց սեմինարներին մասնակից բժիշկների շրջանում: **Բժիշկների այս ստուգողական խմբում հարցազրույցներ են վարվել 30 հոգու հետ**, որոնք հավասար (10-ական հոգի) բաժանվում են Երեւանի, Գյումրիի եւ Վանաձորի միջեւ:

Դեղագործական ձեռնարկությունների հետազոտությունն իրականացվել է հետազոտության պահին առկա թվով 17 ձեռնարկություններից 9-ի շրջանում: Ընտրանքում տեղ են գտել Յայաստանի բոլոր խոշոր դեղագործական ձեռնարկությունները:

2 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Սույն հետազոտության շրջանակներում իրականացված հարցումներն ունեցել են հստակ ուղղորդում: Այն իրականացվել է դեղերի այն օգտագործողների շրջանում, ովքեր անմիջականորեն առնչվում են դեղերի շրջանառության գործընթացին: Դրանք են դեղերի գնումներ կատարող բնակիչ-սպառողները, դեղերի նշանակումներ իրականացնող բժիշկները եւ դեղատներում վաճառք իրականացնող աշխատողները: Դա նշանակում է, որ սույն հետազոտության շրջանակներում հարցված ռեսպոնդենտներն ընտրվել են ոչ թե պատահականորեն, այլ ընտրանքային մեթոդով: Հետազոտության արդյունքները վկայում են, որ ապահովվել է բոլոր սեռատարիքային խմբերի, կրթական մակարդակով, բնակության վայրով եւ գրաղվածությամբ բնորոշվող խմբերի ընդգրկվածությունը:

Բժիշկների եւ դեղատների աշխատողների դեպքում եւս ապահովվել է տարբեր սեռատարիքային, մասնագիտական եւ աշխատանքային ստաժով բնորոշվող խմբերի ներկայությունը: Ստորև ներկայացված է դեղերի օգտագործողների նկարագրերը, որոնք ներգրավված են եղել սույն հետազոտության մեջ:

2.1 ԲՆԱԿԻՉ-ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այլուսակ 2 - Հարցմանը մասնակցած բնակիչ-սպառողների նկարագիրը

1. Սեռային կազմը

Ըստիանութը, որից →	Արական	Իգական
100%	35%	65%

2. Տարիքային կազմը

Ըստիանութը, որից →	<25 տ.	26-40 տ.	41-60 տ.	>61 տ.
100%	21%	37%	33%	10%

3. Կրթական մակարդակը

Ըստիանութը, որից →	Կրթումայուն չունեն	Միջնակարգ մասնագիտ.	Մերի բարձրագույն	Բարձրագույն	Գիտ. աստիճան
100%	0%	28%	15%	7%	48%

4. Բնակության վայրը

Ըստիանութը, որից →	Երեւան	Գյումրի	Վանաձոր
100%	66%	18%	16%

5. Մասնագիտությունները (384 հարցվածների բաշխվածքը)

Մասնագիտություն	Քանակ	Մասնագիտություն	Քանակ	Մասնագիտություն	Քանակ
Տնտեսագետ	43	Մենեջեր	3	Բիորիսմիկոս	1

Մանկավարժ	29	Վարսահարդար	3	Գազամատակարար	1
Ինժեներ	24	Ապրանքագետ	2	Գրադարանավար	1
Բժիշկ	21	Վաճառող	2	Դիմահարդար	1
Իրավաբան	16	Արեւելագետ	2	Էլեկտրիկ	1
Յաշկապահ	13	Գյուղատնտես	2	Կապավոր	1
Բանասեր	12	Դաստիարակ	2	Յրուշակագործ	1
Լեզվաբան	12	Դերձակ	2	Մարզիկ	1
Արվեստագետ	8	Բնապահպան	2	Ոստիկան	1
Ծրագրավորող	8	Թարգմանիչ	2	Էներգետիկ	1
Արհեստավոր	6	Լոգոպետ	2	Ռեժիսոր	1
Խոհարար	5	Կիրեռնետիկ	2	Սոցիոլոգ	1
Դիզայներ	4	Ջոգերան	2	Քաղաքագետ	1
Կենսաբան	4	Մաթեմատիկոս	2	Քիմիկոս	1
Տեխնոլոգ	4	Միջազգայնագետ	2	Օդաչու	1
Դեղագետ	3	Շինարար	2	Օպերատոր	1
Դիվանագետ	3	Պատմաբան	2	Չունենչեն պատասխանել	108
Լրագրող	3	Վարորդ	2	Ընդհանուրը	384
Ֆիզիկոս	3	Անասնաբույժ	1		

6. Զբաղվածությունը

Ընդհանուրը, որից →	Ուսեն աշխատանք	Չունենչեն պատասխանել
100%	50%	50%

6.1. Աշխատանք ուսեցողների զբաղվածության ոլորտները

Ընդհանուրը, որից →	Բիզնեսմեն	Պետական ծառայող	Պետական հիմնարկի աշխատող	Մասնավոր հիմնարկի աշխատող
100%	4%	5%	39%	52%

6.2. Աշխատանք չունեցողները

Ընդհանուրը, որից →	Ուսանող	Անաշխատունակ	Գործազուրկ	Թոշակառու
	100%	17%	1%	66%

7. Ընտանիքների կազմը

Ընդհանուրը, որից →	1-2 անդամ	3-4 անդամ	5-6 անդամ	7-8 անդամ	9-10 անդամ	11 անդամ
	100%	10%	49%	32%	7%	1%

2.2 ԲԺԻՇԿՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Այլուսակ 3 - Նարցմանը մասնակցած բժիշկների նկարագիրը

1. Մեռային կազմը

Ընդհանուրը, որից →	Արական	Իգական
100%	28%	72%

2. Տարիքային կազմը

Ընդհանուրը, որից →	<25 տ.	26-40 տ.	41-60 տ.	>61 տ.
100%	1%	38%	49%	11%

3. Կրթական մակարդակը

Ընդհանուրը, որից →	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն
100%	3%	97%

4. Գիտական աստիճան

Ընդհանուրը, որից →	Չունեն	Օրդինատուրա	Դոցենտ	Գիտ. թեկնածու	Պրոֆեսոր
100%	89%	3%	1%	4%	3%

5. Մասնագիտությունները (71 հարցվածների բաշխվածքը)

Մասնագիտություն	Քանակ	Մասնագիտություն	Քանակ	Մասնագիտություն	Քանակ
Արտաքան	10	Էնդոկրինոլոգ	2	Դիմածնոտ. վիրաբույժ	1
Թերապևտ	8	Ինֆեկցիոնիստ	2	Մաշկավեներաբան	1
Նյարդաբան	8	Յոգերույժ	2	Նեֆրոլոգ	1
Ակնաբույժ	5	Ուռնիմատոլոգ	2	Մանկաբույժ	1
Վտանաբույժ	4	Վիրաբույժ	2	Մաշկաբան	1
Բժիշկ	4	Այրվածքաբան	1	Ուսմատոլոգ	1
Գիսեկոլոգ	4	Անոթային վիրաբույժ	1	Սերսապաթոլոգ	1
Վնասվածքաբան	3	Վուդիոլոգ	1	Սոնգրաֆիստ	1
Դատաբժշկ. փորձագետ	2	Գաստրոէնտերոլոգ	1	Ֆիզիատոր	1
Ընդհանուրը					71

6. Աշխատանքային ստաժը

Ընդհանուրը, որից →	<5 տ.	6-10 տ.	11-15 տ.	16-20 տ.	21-25 տ.	26-30 տ.	31-35 տ.	36-40 տ.	> 41 տ.
100%	11%	13%	17%	14%	11%	14%	4%	11%	4%

2.3 ԴԵՂԱՏՆԵՐԻ ԱՃԽԱՏՈՂՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Աղյուսակ 4 - Նարցմանը մասնակցած դեղատների աշխատողների նկարագիրը

1. ՄԵՇԱՋԻՆ ԿԱԳՄԸ

Ընդհանուրը, որից →	Արական	Իգական
100%	20%	80%

2. Տարիքային կազմը

Ընդհանուրը, որից →	<25 տ.	26-40 տ.	41-60 տ.	>61 տ.
100%	28%	48%	18%	6%

3. Կրթական մակարդակը

Ընդհանուրը, որից →	Միջնակարգ մասնագիտական	Բարձրագույն
100%	38%	62%

4. Գիտական աստիճան

Ընդհանուրը, որից →	Չունեն	Օրդինատուրա	Դոցենտ	Գիտ. թեկնածու	Պրոֆեսոր
100%	96%	1%	-	1%	2%

5. Մասնագիտությունները

Ընդհանուրը, որից →	Դեղագետ	Դեղագործ	Բժիշկ
100%	39%	58%	4%

6. Աշխատանքային ստաժը

Ընդհանուրը, որից →	<5 տ.	6-10 տ.	11-15 տ.	16-20 տ.	21-25 տ.	26-30 տ.	31-35 տ.	36-40 տ.	> 41 տ.
100%	47%	20%	8%	0%	13%	2%	1%	4%	5%

3 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԸ

3.1 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Դեղերի օգտագործողների առաջին հետազոտությունը ցույց է տվել, որ դեղերի բոլոր տիպի օգտագործողներին հնարավոր չէ դիտարկել մեկ ամբողջություն եւ խումբ: Դեղեր օգտագործելու նրանց շարժառիթները խիստ տարբեր են, ինչն էլ շատ մեծ տարբերություններ է առաջացնում նրանց տեղեկացվածության մակարդակներում: Ուստի **հաշվետվության մեջ բոլոր հարցերը վերլուծվել են ըստ հետազոտության առանձին թիրախային խմբերի:** Դա թույլ է տվել հասկանալ օգտագործողների տարբեր խմբերի նկարագրերը, դեղերի շրջանառության մեջ նրանցից յուրաքանչյուրի դերակատարությունը:

3.1.1 Բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին

Նախքան դեղերի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության վերլուծությանն անցնելը պետք է նկատի ունենալ մի կարեւոր հանգամանք, որին անդրադարձ է կատարվել նաեւ 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Բնակչության լայն շրջանակների համար դեղերը ամենօրյա սպառման ապրանք չեն: Մեծ մասամբ դրանց կարիքն առաջանում է հիվանդությունների ի հայտ գալուն պես եւ վերանում այդ հիվանդությունների բուժման արդյունքում: Կախված դեղերի նշանակությունից, տարբեր է նաեւ նրանց օգտագործման հաճախականությունը: Կան դեղեր, որոնք մարդիկ օգտագործում են հաճախ եւ նրանց անունները մեկ ընդ միշտ հիշվում են, ինչպես օդինակ ասպիրինը, անալգինը, ասկոֆենը: Կան նաեւ դեղեր, որոնք մարդիկ իրենց ամբողջ կյանքում կարող են օգտագործել 1-2 անգամ կամ ընդհանրապես չօգտագործել: Այդպիսի դեղերի անունները մարդիկ կարող են չիշել կամ ընդհանրապես չիմանալ: Պատկերավոր ասած՝ *որքան առողջ է մարդը (եւ նրա հարազատները), այնքան ցածր է դեղերի մասին նրա տեղեկացվածությունը:*

Մի հանգամանք եւս. շատ հաճախ մարդիկ ոչ թե իրենք են կայացնում այս կամ այն դեղամիջոցը օգտագործելու որոշումը, այլ դա արվում է առողջապահության հարցերով պրոֆեսիոնալների, այն է՝ բժիշկների նշանակմամբ կամ խորհրդով: Այս պարագայում բնակիչ-սպառողները, օգտագործելով դեղատնից ձեռք բերված դեղամիջոցը, երբեմն չեն ել իմանում դրա անունը: Ելեկով այս իրողությունից, բնակիչ-սպառողներին կարելի է պայմանականորեն կոչել «ոչ գիտակ» կամ հետազոտության մյուս թիրախային խմբերի նկատմամբ «համեմատաբար անտեղյակ» սպառողների խումբ:

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչ-սպառողների 53%-ը չի կարողացել նշել հայկական արտադրության որեւէ դեղամիջոցի անուն: Առևազն մեկ դեղամիջոցի անուն են տվել հարցված բնակիչ-սպառողների 47%-ը: Եթե այս հարցին նայենք դինամիկայի մեջ, ապա դա բավականին լավ ցուցանիշ է. 2008թ.-ին նույն ցուցանիշը կազմել է ընդամենը 23%: Այսպես կոչված «տեղյակ» բնակիչ-սպառողները միասին հիշատակել են 523 դեղերի անուններ (մեկ «տեղյակ» բնակիչ-սպառողը միշտն հաշվով գիտի հայկական արտադրության 2.89 դեղամիջոցի անուն): 2008թ.-ի համեմատությամբ ավելացել են ինչպես «տեղյակ» բնակիչ-սպառողների քանակը, այնպես էլ նրանց տեղեկացվածության մակարդակը:

Բնակիչ-սպառողների կողմից հիշատակված հայկական արտադրության դեղերի ամենահաճախ հանդիպող տասնյակն իրենից ներկայացնում է հետեւյալ պատկերը:

Աղյուսակ 5 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները

Դեղեր	Կոնկրետ դեղամիջոցի մասին տեղյակ բնակիչ-սպառողների մասնաբաժնը	
	Բնակիչ-սպառողների ընդհանուր թվից	Առևազն մեկ դեղամիջոցի մասին իմացող բնակիչ-սպառողների թվից
	A	B
1. Ասպիրին	9.1%	19.3%
2. Ասկոֆեն	8.9%	18.8%
3. Պարացետամոլ	6.5%	13.8%
4. Անալգին	6.3%	13.3%
5. Նարինե	5.7%	12.2%
6. Ալբուցիդ	3.4%	7.2%
7. Եսկարոդ	3.1%	6.6%
8. Ցիտրամոն	2.6%	5.5%
9. Յոդ	2.3%	5.0%
10. Կորվալոլ	1.8%	3.9%

(A) - Յաշվարկված է հետազոտված բնակիչ-սպառողների ընդհանուր թվից (384-ից)

(B) - Յաշվարկված է այն բնակիչ-սպառողների թվից, որոնք տեղյակ են հայկական արտադրության գոնե մեկ դեղամիջոցի մասին (47.1%-ից)

Բնակիչ-սպառողների կողմից առավել ճանաչված են այն դեղերը, որոնք հիմնականում առկա են ցանկացած տան դեղատություն: Դրանք հիմնականում առանց բժշկի ցուցումի օգտագործվող եւ առաջին բուժօգնության միջոցներ են, որոնք օգտագործվում են ցավազրկման, ներողի հանգստացման, սրտի աշխատանքի եւ ճնշման կարգավորման նպատակներով:

2011թ.-ին բնակիչ-սպառողների շրջանում ամենահայտնի 10 դեղերի կազմը ի տարբերություն 2008թ.-ի փոխվել է: 2008թ. ամենաճանաչված 10 դեղերից միայն 6-ն են տեղ գտնել 2011թ.-ի ճանաչված դեղերի տասնյակում: Ստորեւ ներկայացված է 2 ժամանակահատվածների համադրությունը.

Աղյուսակ 6 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.

Ճանաչվածության ռեյտինգը 2008թ.-ին		Ճանաչվածության ռեյտինգը 2011թ.-ին
1. Կատվախոտի ոգեթուրմ (Վալերիանա)		1. Ասպիրին
2. Ասկոֆեն	→	2. Ասկոֆեն
3. Նարինե	→	3. Պարացետամոլ
4. Յոդ	→	4. Անալգին
5. Ալոճենու ոգեթուրմ (Բոյարիշնիկ)	→	5. Նարինե
6. Վոյուծագու ոգեթուրմ (Պուստիրնիկ)	→	6. Ալբուցիդ
7. Ալբուցիդ	→	7. Եսկարոդ
8. Անալգին	→	8. Ցիտրամոն
9. Երիցուկ	→	9. Յոդ
10. Ասպիրին	→	10. Կորվալոլ

Աղյուսակ 6-ի տվյալներից ուշադրության է արժանի հետեւյալը: 2008թ.-ի ամենահայտնի դեղերի առաջին տասնյակից դուրս են մնացել ոգեթուրմերը, որոնք 2011թ.-ի հետազոտության մեջ հանդես են եկել ի դեմս Եսկարոդի (որն այդ ոգեթուրմերի խառնուրդն է): Ոգեթուրմերը

հիշատակվել են հիմնականում ավագ տարիքի ներկայացուցիչների կողմից, իսկ ավելի երիտասարդները ոգեթուրմերը նկատի ունենալով նշում են Եսկարո՞ի անունը:

Ամենահայտնի դեղերի առաջին տասնյակի կազմի փոփոխությունը բնավ չի նշանակում, որ 2011թ.-ի ցանկից դուրս մնացած դեղերը կորցրել են իրենց ճանաչվածությունը: Պարզապես դիտարկվող եռամյա ժամանակահատվածում դեղերի շուկայում տեղի են ունեցել զարգացումներ, որոնց արդյունքում բնակիչ-սպառողները տեղեկացել են նոր դեղերի մասին կամ բարելավել են իրենց տեղեկացվածության մակարդակը նախորդ տարիների համեմատ: Ասպածի ապացուցև է Աղյուսակ 7-ը, որտեղ կատարվել է բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության դեղերի ճանաչվածության համեմատական վերլուծություն (2008 vs. 2011): Համեմատությունն իրականացվել է 6 դեղերի օրինակով, որոնք միաժամանակ առկա են ինչպես 2008թ.-ի, այնպես էլ 2011թ.-ի ամենահայտնի դեղերի առաջին տասնյակում:

Աղյուսակ 7 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.

Դեղեր	Ույտինգը Top 10-ում			Ճանաչվածությունը բնակիչ-սպառողների շրջանում					
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ազոնֆեն	2	2	=	2.9%	8.9%	↑	12.6%	18.8%	↑
Նարինե	3	5	↓	2.6%	5.7%	↑	11.5%	12.2%	↑
Յոդ	4	9	↓	2.3%	2.3%	=	10.3%	5.0%	↓
Ալբուցիդ	7	6	↑	1.6%	3.4%	↑	6.9%	7.2%	↑
Անալգին	8	4	↑	1.6%	6.3%	↑	6.9%	13.3%	↑
Ասպիրին	10	1	↑	1.0%	8.9%	↑	4.6%	18.8%	↑

(*) - A եւ B սյունյակները պետք է հասկանալ Աղյուսակ 2-ում բերված իմաստով

Աղյուսակ 7-ի տվյալները ցույց են տալիս, որ 2008-2011թթ. ժամանակահատվածում հայկական արտադրության դեղերի ճանաչվածությունը բնակիչ-սպառողների շրջանում զգալիորեն բարձրացել է: Դա միանշանակ է 6 դեղերից 5-ի դեպքում: Կարելի է ենթադրել, որ հայկական դեղագործական ձեռնարկությունների, դեղագործության բնագավառի հասարակական կազմակերպությունների եւ զարգացման ծրագրերի (այդ թվում՝ CAPS Ծրագրի) շանթերը լուրջ արդյունքներ են ապահովել:

3.1.2 Բժիշկների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին

Դեղերի օգտագործողների մեջ բժիշկները կազմում են առավել պրոֆեսիոնալ օգտագործողների խումբը: Դա օբյեկտիվ իրողություն է, քանի որ դա ուղղակիորեն կապված է նրանց մասնագիտական պարտականությունների հետ: Դեղերի օգտագործման հետ կապված հարցերում բժիշկների բացարձիկ դերակատարությունը ընդունվում է օգտագործողների բոլոր խմբերի եւ հատկապես՝ բնակիչ-սպառողների շրջանում: Ուստի դեղերի մասին բժիշկների տեղեկացվածության մակարդակը պետք է ընդունել որպես դեղերի շրջանառության վրա ազդող կարեւոր գործոն:

Յետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բժիշկների ճնշող մեծամասնությունը շատ կամ քիչ տեղեկացված է հայկական արտադրության դեղերի մասին, ընդ որում յուրաքանչյուրը գիտի առնվազն 6.6 դեղամիջոցի անուն (2008թ.-ին՝ 4.6 դեղամիջոց): Բժիշկների միայն 2.8%-ը տեղյակ չի հայկական արտադրության դեղերի մասին (2008թ.-ին՝ 4%): Այս հարցում կա մի հանգամանք, որին պետք է ուշադրություն դարձնել. բժիշկների կողմից թվարկվել են ինչպես պարզապես դեղեր (Ոխնգեռ, Ենալապրիլ H, Ամլոդիպին եւ այլն), այնպես էլ դեղերի խմբեր՝

Ինֆորմացիոն լուծույթներ, վիտամիններ, անտիբիոտիկներ: Մենք ընդունում ենք, որ այսքան էլ ճիշտ չէ, որպեսզի նույն ցանկում իրար կողքի ներկայացվեն դեղեր եւ դեղերի խմբեր: Սակայն մենք որոշել ենք հավատարիմ մնալ սկզբնաղբյուրից (տվյալ դեպքում՝ բժիշկներից) ստացված տվյալները անփոփոխ ներկայացնելու մոտեցմանը՝ առանց դրանց ձեւափոխման կամ վերահսկագրման: Նաև անավանդություն, որ բժիշկների մեծ մասը նշելով իրենց ծանոթ դեղերի խմբերը՝ չեն մասնավորեցրել, թե կոնկրետ ինչ դեղեր իրենք նկատի ունեն:

Ստորեւ բերված աղյուսակի տվյալները վկայում են այն մասին, որ հայկական արտադրության դեղերի մասին բժիշկների տեղեկացվածությունը բավականին բարձր է, ընդ որում 2008թ.-ի համեմատ այն զգալիորեն բարելավվել է:

Աղյուսակ 8 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները

Սեմինարներին չմասնակցած բժիշկներ		Սեմինարներին մասնակցած բժիշկներ	
Դեղեր	Բժիշկների շրջանում ճանաչվածության մակարդակը*	Դեղեր	Բժիշկների շրջանում ճանաչվածության մակարդակը*
1. Ինֆորմացիոն լուծույթներ	36.6%	1. Ինֆորմացիոն լուծույթներ	43.3%
2. Ֆիզ. լուծույթ	32.4%	2. Ռինգեռ	30.0%
3. Ռինգեռ	21.1%	3. Ֆիզ. լուծույթ	26.7%
4. Ամլոդիպին	19.7%	4. Պարացետամոլ	23.3%
5. Նարինե	16.9%	5. Եսկարդ	23.3%
6. Յեքսիլոկ	15.5%	6. Ամլոդիպին	23.3%
7. Եսալապրիլ Հ	12.7%	7. Մոքսիցին	20.0%
8. Ցեֆտրիաքսոն	12.7%	8. Վիտամիններ	16.7%
9. Եսկարդ	11.3%	9. Ցեֆտրիաքսոն	16.7%
10. Պարացետամոլ	11.3%	10. Նարինե	13.3%

(*) - Յաշվարկված է հետազոտված բժիշկների ընդհանուր թվից

Յետազոտությունն իրականացվել է տարբեր մասնագիտացում ունեցող բժիշկների (թերապեւտներ, վիրաբույժներ, մանկաբարձ-գինեկոլոգներ) շրջանում: Նրանցից յուրաքանչյուրը առավել տեղյակ է այն դեղերի մասին, որոնք օգտագործելի եւ կիրառելի են իրենց անմիջական մասնագիտացման տեսանկյունից: Այս իմաստով դժվար է գնահատական տալ Աղյուսակ 8-ում ներկայացված ցուցանիշներին՝ դրանք բարձր են, թե ոչ: Առավել օբյեկտիվ հիմքեր կան գնահատելու բժիշկների տեղեկացվածությունը, եթե նրանց բաժանենք «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քաղոզարշավի սեմինարների մասնակիցների եւ ոչ մասնակիցների: Պարզվում է, որ սեմինարներին մասնակցած բժիշկների շրջանում հայկական արտադրության դեղերի ճանաչվածությունն ավելի բարձր է: Դա կարելի է բացատրել այն հանգամանքով, որ այդ սեմինարները անցկացվել են ոչ շատ վաղուց եւ մասնակիցների շրջանում սեմինարներից ստացված տեղեկությունները դեռեւս թարմ են: Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ սեմինարները ապահովել են կարեւոր արդյունք. դրանց մասնակիցները դարձել են հայկական արտադրության դեղերի մասին ավելի տեղեկացված: Սեմինարներին մասնակցած բժիշկների տեղեկացվածությունը 24.7%-ով ավելի բարձր է, քան սեմինարների չմասնակցած բժիշկներինը:

Եթե հետազոտության արդյունքները վերլուծվեն դիևամիկայի մեջ, ապա կարելի է ականատես լինել երկակի պատկերի: Դրանում համոզվելու համար պետք է համադրել բժիշկների շրջանում ամենահայտնի 10 դեղերի 2008թ.-ի եւ 2011թ.-ի ցանկերը.

Աղյուսակ 9 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.

ճանաչվածության ռեյտինգը 2008թ.-ին		ճանաչվածության ռեյտինգը 2011թ.-ին	
1. Ինֆուզիոն լուծույթներ	→	1. Ինֆուզիոն լուծույթներ	
2. Անալգին	→	2. Ֆիզ. լուծույթ	
3. Լիդոկային	→	3. Ոհնգեռ	
4. Անտիբիոտիկներ	→	4. Ամլոդիպին	
5. Ոհնգեռ	→	5. Նարինե	
6. Վիտամիններ	→	6. Հեթանուկ	
7. Նարինե	→	7. Ենալապրիլ Հ	
8. Մետրոնիդազոլ	→	8. Ցեֆտրիաքսոն	
9. Ֆիզ. լուծույթ	→	9. Եսկարդ	
10. Ցեֆտրիաքսոն	→	10. Պարացետամոլ	

5 անուն դեղերի օրինակը, որոնք ինչպես 2008թ.-ին, այսպէս էլ 2011թ.-ին եղել են բժիշկների շրջանում ամենահայտնի 10 դեղերի շարքում, ցույց է տալիս, որ դրանց ճանաչվածությունը բարձրացել է (տես Աղյուսակ 10)։

Աղյուսակ 10 - Բժիշկների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.

Դեղեր	Ռեյտինգը Top 10-ում			Տեղեկացվածություն		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ինֆուզիոն լուծույթներ	1	1	=	35.1%	36.6%	↑
Ոհնգեռ	5	3	↑	12.2%	21.1%	↑
Նարինե	7	5	↑	9.5%	16.9%	↑
Ֆիզ. լուծույթ	9	2	↑	8.1%	32.4%	↑
Ցեֆտրիաքսոն	10	8	↑	6.8%	12.7%	↑

2011թ.-ի ամենահայտնի դեղերի շարքում տեղ զբարձր դեղերը (անալգին, լիդոկային, մետրոնիդազոլ) կորցրել են ճանաչվածության հարցում իրենց դիրքերը։ Ավելի ճանաչված դարձած կամ ճանաչվածությունը կորցրած հայկական դեղերի ցանկը վերը նշվածներով չի ավարտվում։ Դա նշանակում է, որ շուկայական բնականոն գործընթացների արդյունքում որոշ դեղեր ունեցել են հաջողություն՝ ձեռք բերելով ավելի մեծ ճանաչվածություն, իսկ որոշները ինչ-ինչ պատճառներով կորցրել են այն։ Այդպիսի պատճառներ կարող են լինել որակի, ներգործման ազդեցության, փաթեթավորման, զնի կամ մարկետինգային շանքերի վատթարացումը կամ մրցակցության մեջ պարտությունը։

3.1.3 Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական արտադրանքի մասին

Հայկական արտադրության դեղերի մասին ամենատեղեկացված խումբը կազմում են դեղատների աշխատողները։ Իրենց տեղեկացվածության մակարդակով դեղատների աշխատողները զգալիորեն գերազանցում են անգամ բժիշկներին։ Այդ երեսույթը բացատրվում է հետեւյալով։ Բժիշկներն իրենց գործունեության մեջ սահմանափակված են իրենց ներ մասնագիտացման ուղղությունների մեջ։ Նրանք շատ լավ տիրապետում են իրենց մասնագիտացման հետ կապ ունեցող դեղերի փնտին, բայց ինարավոր են, որ չտիրապետեն դրանից դուրս օգտագործվող մյուս

Դեղերի շատ անունների: Միևնույն դեղատների աշխատողները, անկախ դեղերի նպատակային օգտագործման ուղղություններից, գրեթե անգիր տիրապետում են բոլոր այն դեղերի անուններին, որոնք վաճառվում են իրենց դեղատանը:

Դրանք կարող են լինել հարյուրավոր անուններ դեղեր: Ուստի դեղատների աշխատողներին պետք է դիտել ոչ միայն որպես բժշկությունից կամ դեղագործությունից հասկացող մարդկանց, այլ նաև որպես առեւտրի կետի վաճառողներ, որոնք ի պաշտոնե գիտեն իրենց կողմից վաճառվող բոլոր ապրանքատեսակները:

Դեղատների աշխատողները թվարկել են 469 անուն հայկական դեղեր (յուրաքանչյուրի կողմից նշվել է միշին հաշվով 5.5 անուն): Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության առավել հայտնի 10 դեղերի ցանկը բերված է Աղյուսակ 11-ում: Այդ ցանկը վերջին երեք տարիներին կիսով չափ փոփոխվել է (տես Աղյուսակ 12): 5 անուն դեղեր լրել են ամենահայտնի դեղերի առաջին տասնյակը, որոնց փոխարինել են 5 նոր դեղեր (կամ դրանց խմբեր), որոնց ճանաչվածությունը երեք տարվա ընթացքում զգալիորեն բարձրացել է:

Աղյուսակ 11 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները

Դեղեր	Դեղատների աշխատողների շրջանում ճանաչվածության մակարդակը*
1. Ամլոդիպին	54.1%
2. Ենալապիլ Հ	38.8%
3. Էսկարդ	30.6%
4. Տառֆոն	17.6%
5. Լիզոնոպրիլ	12.9%
6. Նատրիումի քլորիդ	11.8%
7. Ալբուցիդ	9.4%
8. Նարինե	9.4%
9. Վիտամիններ	8.2%
10. Ցիարոֆլոքսային	8.2%

(*) - Յաշվարկված է հետազոտված դեղատների աշխատողների ընդհանուր թվից

Աղյուսակ 12 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղամիջոցները 2008-2011թթ.

Ճանաչվածության ռեյտինգը 2008թ.-ին		Ճանաչվածության ռեյտինգը 2011թ.-ին
1. Ամլոդիպին	→	1. Ամլոդիպին
2. Ենալապիլ Հ	→	2. Ենալապիլ Հ
3. Երիթրոմիցին		3. Էսկարդ
4. Տառֆոն	→	4. Տառֆոն
5. Նավթիզին		5. Լիզոնոպրիլ
6. Էսկարդ	→	6. Նատրիումի քլորիդ
7. Ոինգեռ		7. Ալբուցիդ
8. Ցեքսիլոկ		8. Նարինե
9. Լիզինոպրիլ		9. Վիտամիններ
10. Թեյմուրովի մածուկ		10. Ցիարոֆլոքսային

Դեղերի քանակը, որոնք միաժամանակ տեղ են գտել 2008թ.-ի եւ 2011թ.-ի հայկական արտադրության ամենահայտնի 10 դեղերի ցանկում, հինգն ե: Դեղատներում հայկական արտադրության ամենաճանաչված դեղամիջոցը մնում է Ամլոդիպինը, իսկ մյուս անունների դեպքում արձանագրվել են փոփոխություններ, ընդ որում 3-ի դեպքում՝ ճանաչվածության անկում (Աղյուսակ 13):


**Աղյուսակ 13 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական արտադրության ամենահայտնի դեղերի
ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.**

Դեղեր	Ռեյտինգը Top 10-ում			Տեղեկացվածություն*		
	2008	2011	Փոփոխ.	2008	2011	Փոփոխ.
Ամլոդիպին	1	1	=	54.1%	54.1%	=
Էնալապրիլ Ի	2	2	=	42.0%	38.8%	⬇
Տառիֆոն	4	4	=	33.3%	17.6%	⬇
Էսկարդ	6	3	↑	18.0%	30.6%	↑
Լիզինոպրիլ	9	5	↑	15.0%	12.9%	⬇

3.2 ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Վերլուծելով հայկական արտադրության դեղերի մասին տեղեկատվության տարածման ուղիները, մենք արձանագրում ենք դրանց ոչ մեծ բազմազանությունը: Միեւնույն ժամանակ հստակ առանձնանում է դեղերի մասին տեղեկությունների տարածման հիմնական (գլխավոր) ուղին, որը ներկայացված է Նկար 1-ում:

Նկար 1 - Օգտագործողների շրջանում դեղերի մասին տեղեկությունների տարածման հիմնական ուղին




Այս, որ տեղեկությունների տարածման ներկայացված ուղին գերակայող է՝ օբյեկտիվ հանգամանքների հետեւածք է: Տեղեկությունների տարածման շղթայի մասնակիցներից յուրաքանչյուրը դեղերի օգտագործման հարցում որոշակի հարաբերությունների մեջ է այդ շղթայի մեկ այլ մասնակցի հետ, որտեղ մեկ կողմը հանդես է գալիս որպես տեղեկատվություն տրամադրող, իսկ մյուս կողմը՝ տեղեկատվություն ստացող:

3.2.1 Հայկական դեղագործական արտադրանքի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները

Բնակիչ-սպառողները դեղերի օգտագործման հարցում ուղղակի կախվածության մեջ են բժիշկներից եւ դեղատների աշխատողների կողմից ստացված տեղեկատվությունները: Դա բնական է, քանի որ բնակիչ-սպառողները դեղեր օգտագործելու հարցում մշտական շփման մեջ են բժիշկներից եւ դեղատների աշխատողների հետ: Այդ իրողությունը արտացոլված է Նկար 2-ի տվյալների մեջ:

Նկար 2 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները



↑ Համեմատություն 2008 / 2011 ↓


Տեղեկատվության աղբյուրներ	2008	2011	Փոփ.
Դեղատներ	48.9%	82.9%	↑
Ծանոթներ (ընկերներ, բարեկամներ)	26.1%	69.1%	↑
Բժիշկներ	31.8%	36.5%	↑
Հեռուստագովազդ	5.7%	17.7%	↑
Առողջապահական հեռուստահաղորդումներ	14.8%	9.9%	↓

Որ բնակիչ-սպառողների համար տեղեկատվության 2-րդ աղբյուրը ծանոթներն են, վկայում է այն մասին, որ նրանց շրջանում առկա է միմյանց միջեւ դեղերի մասին տեղեկությունների փոխանակման ինտենսիվ պրակտիկա: Նկար 2-ից երեւում է, որ վերջին երեք տարիներին հայկական արտադրության դեղերի մասին բնակիչ-սպառողների շրջանում տեղեկություններ տարածելու հարցում կտրուկ մեծացել է դեղատների նշանակությունը: Եթե 2008թ.-ին դեղատները տեղեկության աղբյուր էին հանդիսանում բնակիչ-սպառողների ոչ լրիվ կեսի համար, ապա 2011թ.-ին այդ ցուցանիշը կազմում է արդեն 82.9%:

3.2.2 Հայկական դեղագործական արտադրանքի մասին բժիշկների տեղեկազմածության աղբյուրները

Ինչպես արդեն նշվեց, բժիշկների համար հայկական արտադրության դեղերի մասին տեղեկությունների ստացման հիմնական աղբյուրը արտադրողներն են՝ դեղագործական ձեռնարկությունները: Վյդ հարաբերություններում նախաձեռնող կողմը արտադրողներն են: Վերջիններս հստակ գիտակցում են, որ դեղերի օգտագործման հարցում վերջնական սպառողները՝ բնակչությունը մեծ կախվածության մեջ է բժիշկների կարծիքից եւ վարքագծից: Ուստի արտադրողներն իրենց արտադրանքի խթանման հարցում հիմնական շանքերը ուղղում են հենց բժիշկների հանրության «նվաճմանը»: Վյդ են վկայում ստորեւ բերված նկարի տվյալները.

Նկար 3 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին բժիշկների տեղեկացվածության աղբյուրները




→ Համեմատություն 2008 / 2011 ←

Տեղեկատվության աղբյուրներ	2008	2011	Փոփ.
Արտադրողներ	50.0%	73.9%	↑
Ծնորհանդեսներ	20.0%	36.2%	↑
Թերթեր եւ ամսագրեր	(*)	13.0%	↑
Գործընկերներ	39.0%	10.1%	↓
Ինտերնետ	(*)	5.8%	↑
Գովազդային լոյութեր	20.0%	0.0%	↓
Բազային կոթություն	14.0%	4.3%	↓

(*) - 2008թ.-ին նշված աղբյուրները չեն եղել տեղեկատվության աղբյուրների առաջին հնգյակի մեջ

Նկար 4 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին քարոզարշավի սեմինարներին մասնակցած թիվների տեղեկացվածության աղյուրները



Նկար 3-ում ներկայացված են միայն «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի սեմինարներին չմասնակցած թիվների պատասխանները: Սեմինարներին մասնակից թիվների պատասխանները (տես Նկար 4) այսքան ել չեն տարբերվում իրենց մյուս գործընկերների պատասխաններից: Ուշադրության է արժանի թերեւս այն հանգամանքը, որ քարոզարշավի շրջանակներում կազմակերպված շնորհանդեսները եղել են արդյունավետ, ինչի պատճառով դրանք, որպես տեղեկատվության աղբյուր, ավելի շատ են հիշատակվել (76.7%), քան քարոզարշավի սեմինարներին չմասնակցած թիվների դեպքում (36.2%):

Բժիշկների 1/3-ից ավելին նշել են, որ հայկական արտադրության դեղերի մասին իրենք տեղեկություններ են ստացել շնորհանդեսների ժամանակ: Նրանք չեն մասնակորեցուել, թե ինչ շնորհանդեսներ են դրանք: Սակայն հիմնավելով արտադրողների հետազոտության արդյունքների վրա, կարելի է ենթադրել, որ այդ շնորհանդեսները մեծ մասամբ կազմակերպվել են նույն արտադրողների կողմից: Դա նշանակում է, որ շնորհանդեսների տակ, որպես տեղեկատվության աղբյուրի, պետք է հասկանալ արտադրողներին:


Նկար 3-ից կարելի է հասկանալ, որ 2008-2011թթ. ժամանակահատվածում արտադրողներն ընդլայնել են իրենց արտադրանքի մասին թիվներին տեղեկություններ հաղորդելու ջանքերը: Ըստ թիվների տեղեկությունների, հայկական դեղագործական ծերոնարկություններից հատկապես ակտիվ է Լիկվորը: Փոխարենը գրեթե նվազագույնի են հասել թիվների տեղեկացման բարձրացմանն ուղղված ֆարմատեկի շանքերը: Յետաքրքիր է հիշել, որ 2008թ.-ին այս 2 ծերոնարկությունները գլխավորում եին շուկայավարման առավել ակտիվ քայլեր իրականացնող հայկական դեղագործական ծերոնարկությունների ցանկը:

2011թ.-ին թիվների 74%-ը արտադրողներին նշել է որպես հայկական արտադրության դեղերի մասին տեղեկատվության աղբյուր (2008թ.-ին այդ ցուցանիշը եղել է 50%): Այս հարցում կարեւոր տեղեկություն է այն, որ գովազդային նյութերը դուրս են մղել թիվների տեղեկատվության աղբյուրների ցանկից: Փոխարենը թիվները տեղեկությունների ստացման նպատակով սկսել են ավելի հաճախ օգտվել ինտերնետից, ինչպես նաև ավելի հաճախ են կարդում առողջապահական/թժկական թերթերը եւ ամսագրերը:

3.2.3 Հայկական դեղագործական արտադրանքի մասին ոեղատների աշխատողների տեղեկացվածության աղյուրները

Վերլուծելով դեղատների աշխատողների տեղեկատվության աղբյուրները, կարելի է նկատել, որ այստեղ կրկին, ինչպես թիվների դեպքում, հիմնական դերակատարումն ունեն արտադրողները: Սակայն ի տարբերություն թիվների, արտադրողները կարծես թե թուլացրել են դեղատների տեղեկացվածության բարձրացմանն ուղղված իրենց շանքերը: Այդ եզրահանգումը կառուցված է Նկար 5-ում բերված 2008թ.-ի եւ 2011թ.-ի ցուցանիշների համեմատության վրա.

Նկար 5 - Հայկական դեղագործական արտադրանքի մասին դեղատողների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները



Տեղեկատվության աղբյուրներ	2008	2011	Փոփ.
Արտադրողներ	73.0%	58.8%	↓
Դեղատուփերի վրայի տվյալներ	(*)	22.4%	↑
Թերթեր եւ ամսագրեր	52.0%	17.6%	↓
Բազային կրթություն	60.0%	14.1%	↓
Ընորհանդեսներ	51.0%	10.6%	↓
Գործընկերներ	51.0%	7.1%	↓

(*) - 2008թ.-ին նշված աղբյուրը չի եղել տեղեկատվության աղբյուրների առաջին հնգյակի մեջ

Դեղատողների աշխատողների մոտ նկատվող ուշագրավ փաստն այն է, որ զգալիորեն կրճատվել են արտաքին աղբյուրներից (թերթեր եւ ամսագրեր, շնորհանդեսներ, գործընկերներ) ստացվող տեղեկությունները: Արդյունքում նրանց համար հայկական արտադրության տեղեկությունների հիմնական աղբյուրը մնում է դեղատուփերի տվյալները, որոնց հետազոտությունը կազմում է դեղատողների աշխատողների ամենօրյա աշխատանքի մի մասը:

3.3 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵԽԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Դեղագործական արտադրանքի այս կամ այն հայկական դեղագործական ձեռնարկության մասին օգտագործողների ուսեցած տեղեկությունների հավաքման նպատակով կիրառվել է նույն մոտեցումը, ինչ 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Սկզբից փորձ է արվել պարզել, թե օգտագործողները առանց հուշելու քանի՞ եւ ո՞ր ձեռնարկության մասին գիտեն: Որից հետո այդ հարցը տրվել է դեղագործական ձեռնարկությունների անունները թվարկելով:

3.3.1 Բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին

Հետազոտության արդյունքները վկայում են այն մասին, որ բնակիչ-սպառողների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին տեղեկացվածությունը գտնվում է ցածր մակարդակի վրա: Բնակիչ-սպառողների ընդամենը 24%-ն է կարողացել առանց հուշելու տալ որեւէ ձեռնարկության անուն: Բնակիչ-սպառողների մի մասը տվել է նաեւ մի քանի ներմուծողների անուններ (առավել հաճախ՝ Նատալի Ֆարմ, Ալֆա Ֆարմ), կարծելով, թե դրանք արտադրող ձեռնարկություններ են: Բոլոր դեպքերում, հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածությունը 2008թ.-ից հետո զգալիորեն բարելավվել է. 2008թ.-ին բնակիչ-սպառողների միայն 3%-ն է կարողացել առանց հուշելու տալ որեւէ դեղագործական ձեռնարկության անուն: Բնակիչ-սպառողների կողմից առանց հուշելու առավել հաճախ տրվել է Էսկոլապի եւ Արփիմենի անունները: Այս բանից հետո, երբ հարցազրուցաբարները սկսել են թվարկել հայկական դեղագործական ձեռնարկությունների անունները, բնակիչ-սպառողներից ումանք ճանաչել են կամ հիշել են այս կամ այն ձեռնարկությանը: Հուշելու արդյունքում բնակիչ-սպառողները նշել են թվով 3-4 անգամ ավել ձեռնարկություններ, քան առանց հուշելու:

**Աղյուսակ 14 - Բնակիչ-սպառողների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների
ճանաչվածությունը**

Դեղագործական ձեռնարկություններ	Դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները . . .											
	. . . առանց հուշելու						. . . հուշելուց հետո					
	Ռեյտինգը			Ճանաչվածությունը			Ռեյտինգը			Ճանաչվածությունը		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ֆարմատեկ	4	4	=	0.3%	1.8%	↑	1	1	=	6.8%	29.7%	↑
Արփիմետ	2	2	=	0.8%	6.0%	↑	3	2	↑	6.3%	29.2%	↑
Էսկոլապ	1	1	=	1.0%	6.3%	↑	5	3	↑	3.9%	25.8%	↑
Վիտամաքս-Ե	8	6	↑	0.0%	1.6%	↑	2	4	↓	6.5%	23.2%	↑
Երեւանի ԶԴՖ	3	8	↓	0.5%	0.5%	=	4	5	↓	4.9%	16.9%	↑
Լիկվոր	5	3	↑	0.3%	2.3%	↑	8	6	↑	1.0%	10.4%	↑
Անթառամ	6	5	↑	0.3%	1.6%	↑	7	7	=	1.0%	9.1%	↑
Հագենաս	7	9	↓	0.3%	0.5%	↑	6	8	↓	1.6%	4.9%	↑
Արսեմի	-	7	↑	0.0%	0.8%	↑	11	9	↑	0.3%	4.4%	↑
Ղազարոս	-	10	↑	0.0%	0.3%	↑	9	10	↓	0.5%	3.6%	↑
Մեղիքալ-Յորիզոն	-	11	↑	0.0%	0.3%	↑	10	11	↓	0.3%	2.9%	↑
Բիզոն-1-1	-	-	=	-	-	=	12	12	=	0.0%	1.8%	↑
Նոկի / ՆՕԶԻ	-	-	=	-	-	=	13	13	=	0.0%	1.3%	↑

Աղյուսակ 14-ի տվյալները վկայում են, որ տարիների ընթացքում բնակչության շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունները դառնում են ավելի ու ավելի ճանաչված:

**3.3.2 Բժիշկների տեղեկացվածությունն հայկական դեղագործական ձեռնարկությունների
մասին**

Արդեն նշվել է, որ դեղերի շրջանառության հարցում բժիշկներն ունեն բացառիկ դերակատարություն: Նրանց խորհուրդը, կարծիքը կամ դիրքորոշումը առաջնորդում են բնակիչ-սպառողներին, որոնք դեղեր օգտագործելիս/սպառելիս հոգեբանական մեծ կախվածության մեջ են գտնվում բժիշկներից: Այս իրողությունը հաստատվել է դեռեւ 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Սա քաջ գիտակցում են հայկական դեղագործական ձեռնարկությունները: Հայաստանի շուկայի նվաճման իրենց քաղաքականության մեջ ձեռնարկություններն առաջին հերթին թիրախում են բժիշկներին: Ուստի զարմանալի չէ, որ բժիշկների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բավականին բարձր է:

Ինչպես բնակիչ-սպառողների դեպքում, բժիշկների դեպքում եւս ձեռնարկությունների ճանաչվածությունը խիստ տարբեր է՝ առանց նախապես հուշելու եւ հուշելուց հետո: Եթե հիմք ընդունենք հուշելուց հետո ձեռնարկությունների ճանաչվածության

I խումբ՝ ճանաչվածության բարձր մակարդակ (>90%)	→ → 1. Լիկվոր
II խումբ՝ ճանաչվածության միջին մակարդակ (50-90%)	→ { 2. Արփիմետ 3. Էսկոլապ 4. Վիտամաքս-Ե 5. Ֆարմատեկ
III խումբ՝ ճանաչվածության ցածր մակարդակ (<50%)	→ { 6. Արսեմի 7. Մեղիքալ-Յորիզոն 8. Նոկի / ՆՕԶԻ 9. Երեւանի ԶԴՖ 10. Ղազարոս 11. Հագենաս 12. Անթառամ 13. Բիզոն-1-1

ցուցանիշները, ապա դրանց կարելի է բաժանել 3 խմբի (տես Աղյուսակ 15): Նախքան ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները առանձին ներկայացնելը, անդրադառնանք մի շփոթմունքի, որը կապված է Նոկի եւ ՆՕԶԻ ձեռնարկությունների անվան հետ:

Նոկին համեմատաբար նոր ստեղծված հայ-գերմանական համատեղ ձեռնարկություն է, իր արտադրությունը կազմակերպում է Մասիս քաղաքում եւ իր անունից գրանցված ունի 9 անուն դեղամիջոց⁵: ՆՕԶԻ-ս, որը բացվում է որպես Մշշոյանի անվան Նուբր Օրգանական Քիմիայի ինստիտուտ, գոյություն ունի դեռևս խորհրդային տարիներից եւ իր անունից գրանցված ունի 3 անուն դեղամիջոց⁶: Ժամանակին (3-4 տարի առաջ) այս երկու ձեռնարկությունները տեղակայված են Եղել Ներկայիս ՆՕԶԻ-ի տարածքում, որոշակի կապեր են ունեցել միմյանց հետ եւ, ըստ ամենայնի, նրանց անունների նմանությունը կապված է դրա հետ: Առանձնացումից հետո երկու ձեռնարկություններն ել կան, գործում են, սակայն օգտագործողների (բժիշկների եւ դեղատների աշխատողների) պատկերացումներում դրանց անունները խառնված են իրար: Ասելով Նոկի կամ ՆՕԶԻ, բժիշկների մեծ մասը հստակ չգիտի, թե որ մեկին նկատի ունի: Որոշ դեպքերում, երբ Նշումը է «Մշշոյան» անունը, կարելի է հասկանալ, որ խոսքը գնում է ՆՕԶԻ-ի մասին: Յակառակ դեպքում պարզ չէ, թե որ մեկի մասին է խոսք գնում: Այս պատճառով հնարավոր չի եղել բժիշկների պատասխանները տարանշատել ըստ Նոկիի եւ ՆՕԶԻ-ի: Ուստի մենք ստիպված ենք եղել այդ ձեռնարկությունների մասով ստացված պատասխանները ներկայացնել միասին:

Բժիշկների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները ներկայացված են ստորեւ.

Աղյուսակ 16 - Բժիշկների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածությունը

Դեղագործական ձեռնարկություններ	Դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները . . .			
	. . . սեմինարներին չմասնակցած բժիշկների շրջանում		. . . սեմինարներին մասնակցած բժիշկների շրջանում	
	Առանց հուշելու	Հուշելուց հետո	Առանց հուշելու	Հուշելուց հետո
Լիկվոր	60.6%	91.5%	90.0%	96.7%
Արփիմեն	53.5%	83.1%	66.7%	96.7%
Էսկոլապ	18.3%	80.3%	26.7%	86.7%
Վիտամաքս-Ը	18.3%	70.4%	-	63.3%
Արսեմի	9.9%	22.5%	-	20.0%
Մեղիքալ-Ցորիզոն	8.5%	22.5%	-	46.7%
Երեւանի ԶԴՖ	4.2%	19.7%	6.7%	36.7%
Ֆարմատեկ	2.8%	60.6%	-	66.7%
Նոկի / ՆՕԶԻ	2.8%	26.8%	-	23.3%
Բիզոն-1	1.4%	4.2%	-	6.7%
Անթառամ	-	9.9%	-	10.0%
Յագենաս	-	19.7%	-	10.0%
Ղազարոս	-	16.9%	-	10.0%

Բժիշկների շրջանում իրենց ուսեցած ճանաչվածությամբ հստակ աչքի են ընկնում Լիկվորը եւ Արփիմենը: Առանց որեւէ հուշման բժիշկների կեսից ավելին հայտել է այդ ձեռնարկությունները

⁵ Ամօքսացիլին, Անտիմիկ-Նյու, Բետադիսոնկ, Իբունոկ, Կարոֆիո-ԱՍ, Մետրոնիդազոլ 500մգ, Ներալգին, Տետրացիլին, Օմեպրազոլ: Աղբյուր՝ www.practic.am

⁶ Գանգլերոն, Թիոդին, Կալանխոտի հյութ: Աղբյուր՝ www.practic.am

ճանաչելու մասին: Հուշելուց հետո, բնականաբար, բժիշկները հիշել են շատ ավելի մեծ թվով ձեռնարկությունների մասին: Բարձ ճանաչվածությամբ առանձնանում են հայկական դեղագործական ձեռնարկությունների առաջատար վեցյակը՝ Լիկոր, Արփիմեդ, Եսկուլապ, Վիտամաքս-Ե, Ֆարմատեկ եւ Երեւանի ԶԴՖ: Վերջին երկուսը, սակայն, 2008-2011թթ.-ին զգալիորեն զիշել են իրենց ճանաչվածության հարցում: Հատկապես ակնառու է Երեւանի ԶԴՖ-ի ճանաչվածության անկումը, որը կազմել է 2.5 անգամ: Այդ է վկայում 2008թ.-ի եւ 2011թ.-ի համեմատական տվյալների ներկայացումը (տես Աղյուսակ 17):

Աղյուսակ 17 - Բժիշկների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության փոփոխությունը 2008-2011թթ.

Դեղագործական ձեռնարկություններ	Դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները . . .											
	. . . առանց հուշելու									. . . հուշելուց հետո		
	Ույտինգը			Ճանաչվածությունը			Ույտինգը			Ճանաչվածությունը		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Լիկոր	1	1	=	55.4%	60.6%	↑	1	1	=	86.5%	91.5%	↑
Արփիմեդ	2	2	=	45.9%	53.5%	↑	3	2	↑	78.4%	83.1%	↑
Եսկուլապ	5	3	↑	10.8%	18.3%	↑	4	3	↑	64.9%	80.3%	↑
Վիտամաքս-Ե	6	4	↑	8.1%	18.3%	↑	5	4	↑	60.8%	70.4%	↑
Արսեմի	9	5	↑	4.1%	9.9%	↑	8	7	↑	13.5%	22.5%	↑
Մեդիքալ-Յորիզոն	12	6	↑	0.0%	8.5%	↑	13	8	↑	5.4%	22.5%	↑
Երեւանի ԶԴՖ	4	7	↓	14.9%	4.2%	↓	6	9	↓	47.3%	19.7%	↓
Ֆարմատեկ	3	8	↓	20.3%	2.8%	↓	2	5	↓	79.7%	60.6%	↓
Նոկի / ՆՕԶԻ	7	9	↓	8.1%	2.8%	↓	11	6	↑	10.8%	26.8%	↑
Բիզոն-1	10	10	=	1.4%	1.4%	=	12	13	↓	10.8%	4.2%	↓
Ալթառամ	11	11	=	1.4%	-	↓	9	12	↓	13.5%	9.9%	↓
Հագենաս	13	12	↑	-	-	=	10	10	=	12.2%	19.7%	↑
Ղազարոս	8	13	↓	5.4%	-	↓	7	11	↓	18.9%	16.9%	↓

Բժիշկների շրջանում իրենց ճանաչվածության մակարդակը զգալիորեն բարելավել են Արսեմին եւ Մեդիքալ-Յորիզոնը: Վերջինս 2008թ.-ի հետազոտության ժամանակ նոր հիմնված ձեռնարկություն էր, եւ ինչպես կարելի է նկատել Աղյուսակ 17-ից, 3 տարիների ընթացքում այն արդեն զգալի ճանաչում է ձեռք բերել բժիշկների շրջանում:

3.3.3 Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին

Դեղատների աշխատողները հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին ամենագիտակ եւ ամենատեղեկացված խումբն է: Ինչպես եւ 2008թ.-ի հետազոտության ժամանակ, այս անգամ եւս դեղատների աշխատողների շրջանում ճանաչվածության ամենաբարձր ռեյտինգն ունի Արփիմեդը: Վերջինս մասին տեղյակ են բոլոր դեղատների աշխատողները: Հայկական դեղագործական արտադրանքի մասին դեղատների աշխատողները պարզապես պարտավոր են իմանալ բոլոր այն ապրանքները, որոնք առկա են իրենց տաղավարներում: Ըստ որում՝ նրանք գիտեն ինչպես արտադրող ձեռնարկությունների անունները, այսպես էլ նրանց արտադրանքի տեսականին:

2008թ.-ի համեմատությամբ, 2011թ.-ին հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածությունը որոշակի անկում է ապրել: Մենք դժվարանում ենք բացատրել այդ երեւությը: Դա կարող էր կապված լինել դեղատների աշխատողների փորձառության եւ որակավորման պակասի հետ, սակայն հետազոտության արդյունքները ցույց են տալիս հակառակը.

- 1) 2011թ.-ի հետազոտությանը մասնակցած դեղատների աշխատողները իրենց **աշխատանքային փորձով ավելի փորձառու են**, քան 2008թ.-ին: Մասնավորապես, 2011թ.-ին դեղատների աշխատողների միջին աշխատանքային ստաժը դեղատներում կազմել է 10.5 տարի, այն դեպքում, եթե 2008թ.-ին նույն ցուցանիշը կազմել էր 8.6 տարի:
- 2) 2011թ.-ի հետազոտությանը մասնակցած դեղատների աշխատողների մեջ բարձրագույն կրթություն ստացածները կազմել են 62%, իսկ 2008թ.-ին՝ 58%, այսինքն՝ կրթական **մակարդակով եղել են ավելի որակավորված**:

Ստորեւ ներկայացված են հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները դեղատների աշխատողների շրջանում.

Այլուսակ 18 - Դեղատների աշխատողների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածությունը

Դեղագործական ձեռնարկություններ	Դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության ցուցանիշները . . .											
	. . . առանց հուշելու						. . . հուշելուց հետո					
	Ույտինգը			Ճանաչվածությունը			Ույտինգը			Ճանաչվածությունը		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Արփիմեր	1	1	=	97.6%	95.3%	⬇	1	1	=	100.0%	100.0%	=
Լիկվոր	3	2	⬆	87.1%	71.8%	⬇	2	2	=	100.0%	98.8%	⬇
Էսկուլապ	2	3	⬇	90.6%	62.4%	⬇	3	3	=	100.0%	98.8%	⬇
Ֆարմատեկ	5	4	⬆	44.7%	30.6%	⬇	4	5	⬇	94.1%	94.1%	=
Արսեմի	4	5	⬇	56.5%	28.2%	⬇	5	7	⬇	94.1%	90.6%	⬇
Երեւանի ԶԴՖ	6	6	=	27.1%	23.5%	⬇	12	12	=	68.2%	70.6%	⬆
Մեղիքալ-Յորիզոն	13	7	⬆	1.2%	22.4%	⬆	13	10	⬆	7.1%	75.3%	⬆
Վիտամաքս-Ե	8	8	=	10.6%	14.1%	⬆	6	4	⬆	92.9%	96.5%	⬆
Նոկի / ՆՕԶԻ	9	9	=	10.6%	9.4%	⬇	10	9	⬆	78.8%	77.6%	⬇
Բիզոն-1	10	10	=	7.1%	4.7%	⬇	11	11	=	72.9%	75.3%	⬆
Ալթառամ	11	11	=	7.1%	4.7%	⬇	7	6	⬆	90.6%	91.8%	⬆
Հագենաս	7	12	⬇	21.2%	3.5%	⬇	9	13	⬇	81.2%	70.6%	⬇
Ղազարոս	12	13	⬇	3.5%	2.4%	⬇	8	8	=	85.9%	90.6%	⬆

Դեղատների աշխատողների կողմից թվարկված արտադրողների ցանկն ավելի լայն է, քան նշված է վերը բերված այլուսակում: Բացի վերոհիշյալ 13 ձեռնարկություններից, դեղատների աշխատողները տվել են եւս 12 այլ ձեռնարկությունների անուններ՝ կարծելով, թե դրանք արտադրողներ են: Առավել հաճախ տրվել են Ալֆա Ֆարմի եւ Արֆիտոֆարմի անունները: Վյու փաստը խոսում է այն մասին, որ դեղատների աշխատողները ավելի շուտ գիտեն իրենց մոտ վաճառվող դեղերի մատակարարների անունները, սակայն դրանցից որոնք են արտադրողներ եւ որոնք ներմուծողներ՝ նրանք այնքան ել լավ չգիտեն: Հատկանշական է այն, որ 2011թ.-ի հետազոտության ժամանակ դեղատների աշխատողներից եւ ոչ մեկը չի հիշատակել 3 փոքր արտադրողների անունները, որոնք հնչել են 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Խոսքը գնում է Լեյկոյի, Նեկտար Բոնուսի եւ Ինսիի մասին:

3.4 ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԶԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՑՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՆԵՐԸ

3.4.1 Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության աղբյուրները

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ բնակիչ-սպառողները հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին տեղեկություններ են ստանում հետեւյալ աղբյուրներից.

- 1) ծանոթներից՝ ընկերներից, գործընկերներից, բարեկամներից;
- 2) դեղատներից՝ հիմնականում դեղատների աշխատողներից;
- 3) բժիշկներից, որոնք բնակիչ-սպառողների համար դուրս են գրում դեղատոմսեր;
- 4) հեռուստատեսությունից՝ տարբեր TV ալիքներով եթեր հեռարձակվող առողջապահական կամ բժշկական հաղորդումներից;
- 5) գովազդից, որը ներառում է հեռուստա- եւ ռադիոգովազդը;
- 6) դեղատուփերի վրայի տեղեկություններից, ինչպես նաև բաղադրատոմսից;
- 7) ինտերնետից;
- 8) թերթերից, ամսագրերից:

Տեղեկատվության աղբյուրների այս ցանկում առաջին չորսը հանդիսանում են առավել հաճախ հանդիպող, իսկ վերջին չորսը՝ առավել քիչ հանդիպող: Ըստ այդմ՝ մենք կազմել ենք բնակիչ-սպառողների համար տեղեկատվության 3 գլխավոր աղբյուրների ցանկը եւ մասնաբաժինները՝ ըստ ձեռնարկությունների, որը ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

Աղյուսակ 19 - Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության 3 գլխավոր աղբյուրները

Տեղեկատվության աղբյուրներ	Ենկույառ	Աղիսներ	Լիկոր	Ֆարմատեկ	Ալիքատաս	Վիտամիններ	Վիտամինարան	Երեսակ թղթ	Չափանակ	Հազարու	Մերիքալ-Հողիզնը	Նոկի / ՆՕՁ	Բիզուն-1
Ծանոթներ (ընկերներ, բարեկամներ)	20%	26%	28%	31%	22%	23%	24%	48%	10%	43%		17%	
Դեղատներ	21%	16%	14%	18%	42%	20%	24%		30%	36%	18%	50%	67%
Բժիշկներ			12%					12%	25%				
Հեռուստատեսություն		18%				18%	18%	7%			18%	17%	
Գովազդ	23%			17%							18%		
Դեղատուփի տույալներ					14%					7%			33%
Զգիտն / չեն հիշում	8%	10%	5%	16%	14%	6%	12%	13%	5%	7%	18%	17%	

2008թ. հետազոտության արդյունքների համեմատ, 2011թ.-ին արձանագրվել են հետեւյալ ուշագրավ փոփոխությունները.

- մոտ կրկնակի անգամ նվազել է այս բնակիչ-սպառողների քանակը, ովքեր չեն հիշում, թե ինչպես եւ որտեղից են լսել իրենց ծանոթ արտադրողների անունները,
- հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների շրջանում տեղեկություններ տարածելու հարցում կտրուկ մեծացել է դեղատների (պետք է հասկանալ՝ դեղատների աշխատողների) դերակատարությունը. 5 ձեռնարկությունների (հիմնականում՝ շրջանառությամբ փոքր) համար դա տեղեկատվության տարածման գլխավոր ուղին է,
- որպես տեղեկատվության աղբյուրներ՝ բնակիչ-սպառողների շրջանում գգալիորեն նվազել են հեռուստատեսային հաղորդումների եւ հեռուստագովազդի դերակատարությունը,

- հայկական դեղագործական ծեռնարկությունների մասին բնակիչ-սպառողների շրջանում առկա է տեղեկատվության բավականին ինտենսիվ փոխանակում. 7 ծեռնարկությունների (հիմնականում՝ շրջանառությամբ մեծ) համար դա տեղեկատվության տարածման գլխավոր ուղին է:

3.4.2 Հայկական դեղագործական ծեռնարկությունների մասին բժիշկների տեղեկացվածության աղբյուրները

Բժիշկների տեղեկացվածության աղբյուրների կազմում տեղի են ունեցել ուշագրավ փոփոխություններ: 2008թ.-ի հետազոտության ժամանակ պարզվել էր, որ դեղերի շուկայում գործող շատ սուբյեկտներ, հիմնականում ներմուծողները, իրենց ապրանքի վաճառքը խթանելու համար ինտենսիվ շփման մեջ են բժիշկների հանրության հետ: Այդ շփումներն իրականացվում են ներմուծողների իրացման պատասխանատունների կամ այսպես կոչված բժշկական ներկայացուցիչների միջոցով: 2008թ.-ին հայկական դեղագործական ծեռնարկություններից միակը, որ լայնորեն կիրառում էր այդ մեթոդ՝ Լիկվորն էր: Մյուս բոլոր ծեռնարկություններում բժշկական ներկայացուցիչների միջոցով ներկայանալը եւ իրենց մասին տեղեկություն տարածելը ավելի քիչ կիրառվող մեթոդ էր: Համենայն դեպք այդ են վկայում բժիշկների պատասխանները: 2011թ.-ին այդ հարցում իրավիճակը կտրուկ փոխվել է: Բժիշկների վկայությամբ, հայկական դեղագործական ծեռնարկությունների մասին իրենց տեղեկացվածության աղբյուրը հենց իրենք՝ արտադրողներն են եւ/կամ նրանց ներկայացուցիչները (տես Աղյուսակ 20):

Աղյուսակ 20 - Հայկական դեղագործական ծեռնարկությունների մասին սեմինարներին չմասնակցած բժիշկների տեղեկացվածության 3 գլխավոր աղբյուրները

Տեղեկատվության աղբյուրներ	Լինուր	Արդիշներ	Եսպուսպ	Վիտամիններ	Վունի	Սերիուզ-դոկտորներ	Երեսանի թղթեր	Ֆարմացիա	Նորի / Նորի	Բիզուն-1 *	Ալարայ *	Հագենսաս	Հագարու
Բժշկ. ներկայացուցիչներ	58%	48%	34%	31%	31%	53%	36%	35%				53%	
Ծանոթներ, գործընկերներ	4%	10%		13%		7%	14%	8%	21%			7%	
Դեղատներ	7%		17%	15%	31%			21%	11%			7%	55%
Բազային կրթություն									42%				
Դեղատուիչի տվյալներ	4%	6%	5%			13%	14%						9%
Զգիտեն / չեն հիշում	14%	11%	26%	19%	38%	13%	14%	17%	21%			27%	27%

(*) - Բիզուն-1-ի եւ Ալարայի մասով ստացված պատասխանների թիվը շատ փոքր է եւ դրանց արդյունքները չի կարելի հիմք ընդունել բժիշկների ողջ հանդության համար

Բժիշկների շրջանում իր մասշտաբներով ավելի քան 2 անգամ աճել է միմյանց միջեւ տեղեկություններ փոխանակելու պրակտիկան: Ընդհանուր առմամբ սա դրական երեւույթ է, քանի որ վկայում է այն մասին, բժիշկները սկսել են ավելի ու ավելի շատ քննարկել հայկական դեղագործական ծեռնարկություններին: Միեւնույն ժամանակ այդ նույն ծեռնարկությունները պետք է միշտ զգու լինեն եւ գիտակցեն, որ իրենց կամ իրենց արտադրանքի մասին ցանկացած բացասական տեղեկություն կարող է արագորեն մեծ տարածում ստանալ բժիշկների շրջանում:

2008թ.-ի համեմատությամբ մոտ կրկնակի անգամ պակասել է այն բժիշկների թիվը, որոնք չեն հիշում (կամ դժվարացել են պատասխանել), թե ինչպես են տեղեկացել իրենց ծանոթ արտադրողների մասին: Դա բավականին դրական երեւույթ է եւ վկայում է այն մասին, որ հայկական դեղագործական ծեռնարկությունների մասին տեղեկությունների տարածման աղբյուրները դարձել են ավելի հիշվող, հետեւաբար նաեւ՝ ավելի ազդեցիկ եւ արդյունավետ:

Եթե առանձին դիտարկենք «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի սեմինարներին մասնակցած բժիշկների պատասխանները, ապա միտումների առումով այս գրեթե նույն է, ինչ իրենց մյուս գործընկերների դեպքում: Արտադրողների մասին գլխավոր տեղեկատվության աղբյուրը հենց իրենք արտադրողներն են կամ նրանց բժշկական ներկայացուցիչները: Սակայն ուշագրավ է այս, որ սեմինարների մասնակից բժիշկների միջին հաշվով մոտ 20%-ի համար արտադրողների մասին տեղեկատվության աղբյուրը են հանդիսացել այդ սեմինարները: Դա նշանակում է, որ սեմինարները հանդիսանում են իրենց ինտենսիվությամբ տեղեկատվության 2-րդ աղբյուրը (տես Աղյուսակ 21):

Աղյուսակ 21 - Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին սեմինարներին մասնակցած բժիշկների տեղեկացվածության 3 գլխավոր աղբյուրները

Տեղեկատվության աղբյուրներ	Լինուո՞ր	Արդիշներ	Եսկրիվաս	Վիտամիններ	Կուտամաքս-*	Կուտամաքս-*	Մեղքաբարձրություն	Քրեանի թղթափառ	Ֆարմատենկ	Նորի / Նօրի	Բիզուն-1 *	Ավագանում	Հագենսաս	Հազարում
Բժշկ. ներկայացուցիչներ	54%	53%	50%	46%			39%	46%	52%					
«Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի սեմինարներ	15%	19%	19%	13%			22%		20%					
Ծանոթներ, գործընկերներ											14%			
Դեղատներ		6%	6%				15%	8%						
Բազային կրթություն										71%				
Դեղատուի տվյալներ				17%						14%				
Զգիտեն / չեն հիշում	10%	6%	6%	8%			22%	15%	8%					

(*) - Նշված ձեռնարկությունների մասով ստացված պատասխանների թիվը շատ փոքր է եւ դրանց արդյունքները չի կարելի հիմք ընդունել բժիշկների ողջ հանրության համար

Ցավալի է, որ բժիշկների շրջանում որպես հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին տեղեկատվության աղբյուրը, ցածր է մնում բազային կրթության նշանակությունը: Այս առումով միակ բացառությունը ՆՕԹԻ-ն է, որը պայմանավորված է այդտեղ կազմակերպվող բժիշկների պրակտիկաների բարձր ինտենսիվությամբ:

3.4.3 Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները

Թվով փոքր են եւ շատ ավելի հստակ են դեղատների աշխատողների տեղեկացվածության աղբյուրները: Շետագոտության արդյունքները վկայում են, որ դեղատների աշխատողների շրջանում հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին տեղեկությունները տարածվում են 3 հիմնական ուղիներով, որոնք ներկայացված են Աղյուսակ 22-ում.

Աղյուսակ 22 - Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին դեղատների աշխատողների տեղեկացվածության 3 գլխավոր աղբյուրները

Տեղեկատվության աղբյուրներ	Լինուո՞ր	Արդիշներ	Եսկրիվաս	Վիտամիններ	Կուտամաքս-*	Կուտամաքս-*	Մեղքաբարձրություն	Քրեանի թղթափառ	Ֆարմատենկ	Նորի / Նօրի	Բիզուն-1	Ավագանում	Հագենսաս	Հազարում
Արտադրողի ներկայացուցիչներ	33%	34%	36%	43%	32%	40%	35%	31%	35%	35%	35%	37%	34%	33%
Գնացուցակներ, կատալոգներ,	28%	25%	26%	13%	31%	26%	26%	31%	29%	26%	26%	30%	26%	

տեղեկատուներ													
Դեղատուփի տվյալներ	19%	20%	19%	23%	18%	11%	14%	18%	18%	15%	17%	17%	16%

Այս տվյալները համեմատելով 2008թ.-ի հետազոտության արդյունքների հետ կարելի է արձանագրել, որ.

- Հայկական դեղագործական ձեռնարկությունները շարունակում են ինտենսիվորեն աշխատել դեղատների հետ՝ անձամբ ներկայացնելով իրենց ձեռնարկությունը եւ արտադրանքը: Սա ես մի պատճառ է, որ մենք չենք կարողանում բացատրել, թե ինչու է դեղատների աշխատողների շրջանում մասամբ նվազել հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածությունը;
- Արտադրողների մասին տեղեկությունների նշանակած աղբյուրները դարձել են ավելի հիշվող, քանի որ կտրուկ նվազել է այն դեղատների աշխատողների քանակը, ովքեր չեն հիշում, թե ինչպես են տեղեկացել այս կամ այն արտադրողի մասին;
- Դեղատների աշխատողները սկսել են ավելի ու ավելի շատ ուսումնասիրել իրենց կողմից վաճառվող դեղերի տուփերը եւ դեղատումները, որոնց վրայից ել տեղեկություններ են ստանում դրանց արտադրողների մասին:

4 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒԹՅԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

4.1 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՓՈՐՁԸ

Դեղերի օգտագործողների շրջանում հայկական արտադրության դեղերի նկատմամբ վերաբերմունքն ունի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմքեր: Վերաբերմունքի օբյեկտիվ հիմքերը նրանք են, երբ կոնկրետ օգտագործողը կարծիք է հայտնում՝

- բնակիչ-սպառողների դեպքում՝ ելնելով դեղերի օգտագործման իր հարուստ փորձից,
- բժիշկների դեպքում՝ դեղերի որակական հատկանիշների անաչառ եւ պրոֆեսիոնալ գնահատականից,
- դեղատների աշխատողների դեպքում՝ հաճախորդների արձագանքներից եւ կարծիքներից:

Սակայն դեղերի նկատմամբ կարելի է հանդիպել նաեւ վերաբերմունքի, երբ օգտագործողները այսքան էլ օբյեկտիվ չեն: Մասնավորապես՝


- բնակիչ-սպառողները կարող են կարծիք հայտնել ոչ թե դեղերի սպառման սեփական փորձի, այլ անձանցից (օրինակ՝ բժիշկներից) ստացած տվյալների վրա, որոնք երբեմն կարող են ոչ օբյեկտիվ լինել,
- բժիշկները կամ դեղատների աշխատողները կարող են դրական վերաբերմունք եւ կարծիք հայտնել այս դեղամիջոցների մասին, որոնց մատակարարներից իրենք խրախուսվում են:

Դաշվի առևելով վերը նշվածը, և այսպահանջությամբ դեղերի օգտագործողների վերաբերմունքի դրսեւորումներին անդրադառնալը, կարեւոր է գնահատել սպառողների փորձառության աստիճանը:

4.1.1 Բնակիչ-սպառողների կողմից դեղերի օգտագործման (սպառման) փորձը

Բնակիչ-սպառողները դեղամիջոցներ են ձեռք բերում բացառապես դեղատներից: Դասկանալու համար, թե բնակիչ-սպառողները ինչ հաճախականությամբ են այցելում դեղատներ, մեր կողմից ուսումնասիրվել է սույն հետազոտության անցկացմանը նախորդած 4 ամիսները: Ժամանակագրորեն դա համընկնում է 2010թ.-ի սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին: Դա մի ժամանակահատված է, երբ աշնան եւ, հատկապես, ձմռան սկսվելուն զուգահեռ կտրուկ մեծանում են հիվանդացության դեպքերը: Դրանով պայմանավորված՝ այդ ժամանակահատվածում բնակիչ-սպառողների շրջանում զգալիորեն ավելանում են դեղատներ այցելելու եւ դեղեր գնելու դեպքերը: Ենթադրությունը հաստատելու համար կարելի է համեմատություն անցկացնել 2008թ.-ի հետազոտության տվյալների հետ, երբ բնակիչ-սպառողների կողմից դեղատներ այցելելու հաճախականությունն ուսումնասիրվել է 2008թ. հունվար-մարտ ամիսներին:

Նկար 6 - Բնակիչ-սպառողների կողմից դեղատներ այցելելու հաճախականությունը հետազոտությանը նախորդող 4 ամիսների ընթացքում



Նկար 6-ի տվյալները ցույց են տալիս, որ 2011թ.-ի հետազոտության ժամանակ հարցումներն անց են կացվել դեղատուների այցելելու կամ դեղերի օգտագործելու եսանկյունից ավելի փորձառու բնակիչ-սպառողների շրջանում: Ուստի հայկական արտադրության դեղերի նկատմամբ նրանց վերաբերմունքը պետք է համարել առնվազն ոչ պակաս հեղինակավորքան 2008թ.-ի հետազոտության ժամանակ:

2010թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսների ընթացքում մեկ բնակիչ-սպառողը դեղեր ձեռք բերելու նպատակով դեղատուն է այցելել միշին հաշվով 24 անգամ (կշռված միշին ցուցանիշ): Ըստ որում խոսքը գնում է ինչպես սեփական որոշմամբ, այնպես էլ բժիշկների խորհրդով կամ մեկ ուրիշի խնդրանքով դեղատուներ այցելող բնակիչ-սպառողների մասին: Դեղատուն այցելելու այսպիսի հաճախականությունը կարելի է անվանել դեղեր սպառելու հարուստ փորձ (2008թ.-ին այդ փորձը գնահատվել էր բավարար, իսկ դեղատուների միշին հաճախելիությունը կազմել էր 8.3 անգամ): Ամեն անգամ դեղատուն մտնելիս բնակիչ-սպառողներից յուրաքանչյուրը գնել է միշին հաշվով 1.3 դեղամիջոց (կշռված միշին ցուցանիշ, մոտավորապես նույն է, ինչ 2008թ.-ի ցուցանիշը): Այս տվյալները մեզ հուշում են, որ դեղերի ձեռքբերման նպատակով դեղատուներ այցելող բնակիչ-սպառողները ունեցել են հայկական արտադրության դեղերի մասին տեղեկություններ ստանալու բավարար հնարավորություն:

Մյուս կողմից հնարավոր չէ գնահատել, թե դեղատուներ այցելած բնակիչ-սպառողների ո՞ր մասն է գնել հայկական արտադրության դեղեր, օգտագործել դրանք եւ գինվել այդ դեղերի մասին որոշակի տեղեկատվությամբ, ինչն էլ կարող էր նրանց մոտ ձեւավորել որոշակի վերաբերմունք: Դեղատուներ այցելող բնակիչ-սպառողների շրջանում քիչ չեն այն մարդիկ, ովքեր դեղեր են գնում ուրիշների՝ հարազատների, ընտանիքի այլ անդամների կամ ծանոթների համար կամ նրանց խնդրանքով: Այս խմբի մարդիկ կարող են ընդհանրապես չիմանալ, թե ինչ դեղ են իրենք գնել: Ել ավելի քիչ է հնարավոր, որ նրանք իմանան իրենց գնած դեղերի ծագումը (հայկական կամ ներմուծված): Այս հարցը պարզելու համար մենք խնդրել ենք, որպեսզի բնակիչ-սպառողները մեզ հայտնեն այն դեղերի ծագումը, որոնք իրենք գնել են հենց այդ պահին (հարցումից րոպեներ առաջ): Արդյունքը ներկայացված է

Նկար 7 - Հարցման պահին բնակիչ-սպառողների կողմից գնված դեղերի ծագումը



Նկար 7-ում: Այդ տվյալներից կարելի է արձանագրել, որ հարցման պահին բնակիչ-սպառողների միայն 5.7%-ն է (բոլոր հարցվածների 30%-ի 19%-ը) իմացել (գիտակցել), որ իրենք գնել են հայկական արտադրության դեղեր:

Եթե հայկական արտադրության դեղեր օգտագործելու բնակիչ-սպառողների փորձառությունը դիտարկենք ավելի երկար ժամանակահատվածում, ապա պատկերը հետեւյալն է:

Աղյուսակ 23 - Հայկական դեղեր օգտագործելու բնակիչ-սպառողների փորձի առկայությունը 2008-2011թթ.


	2008	2011	Փոփոխությունը
Երեւէ օգտագործել են հայկական դեղեր	26%	52%	+26%
Երեւէ չեն օգտագործել հայկական դեղեր	21%	19%	-2%
Դժվարացել են պատասխանել	53%	29%	-24%
Ըստամենք	100%	100%	-

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս մի կարեւոր եւ դրական փաստ: 2008թ.-ի համեմատ 2011թ.-ին կրկնակի ավելացել է այն բնակիչ-սպառողների քանակը, որոնք միանշանակ

հաստատել են, որ իրենք օգտագործել են հայկական արտադրության դեղեր: Դա հիմնականում տեղի է ունեցել այն բնակիչ-սպառողների հաշվին, որոնք 3 տարի առաջ չեն հիշում, թե իրենք օգտագործել են արդյոք հայկական դեղեր, թե ոչ: Դրա պատճառներից կարող են լինել. ա) բնակիչ-սպառողները սկսել են ավելի լավ մտարել հայկական դեղերը՝ **ավելի հաճախ օգտագործելու արդյունքում**, բ) բնակիչ-սպառողները սկսել են ավելի լավ մտարել հայկական դեղերի լավ (բարձր) կամ ցածր որակական հատկանիշները: Ընդհանուր եզրահանգումն այն է, որ 2011թ.-ի հետազոտության բնակիչ-սպառողները ունեն հայկական արտադրության դեղերի նկատմամբ վերաբերմունք հայտնելու ավելի շատ օբյեկտիվ հիմքեր, քան 2008թ.-ի հարցվածները:

Հայկական արտադրության դեղեր օգտագործած բնակիչ-սպառողների (ընդհանուրի 52%-ը) կողմից նշվել է 85 անուն հայկական դեղեր: Առավել շատ հիշատակված դեղերի առաջին տասնյակը ներկայացված է Նկար 8-ում: 2008թ.-ի համեմատությամբ այս ցանկում իր տեղը պահպանել է միայն Ասկոֆենը: 2008թ.-ին մենք ներկայացրել ենք առավել շատ հիշատակված հայկական արտադրության դեղերի առաջին հնայակը: Այդ ցանկից 4 անուն դեղեր, մասնավորապես Կատվախոտի ոգեթուրմը (Վալերիանան), Ալոճենու ոգեթուրմը (Բոյարիշնիկը), Յողը եւ Վայուժագու ոգեթուրմը (Պուստիրնիկը), դուրս են մնացել 2011թ.-ի առաջին տասնյակից:

Նկար 8 - Բնակիչ-սպառողների կողմից երբեւ ձեռք բերված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը



4.1.2 Բժիշկների կողմից դեղերի օգտագործման (նշանակելու/դուրս գրելու) փորձը

Ի տարբերություն բնակիչ-սպառողների, բժիշկները դեղերի շրջանառությանն առնչվում են ամեն օր՝ իրենց մասնագիտական պարտականությունների կատարման ընթացքում: Այդ պատճառով հայկական արտադրության դեղեր օգտագործելու (նշանակելու կամ դուրս գրելու իմաստով) նրանց փորձը անհամեմատ հարուստ է, իսկ վերաբերմունքը՝ ավելի հիմնավոր եւ պատճառաբանված: Աղյուսակ 24-ի տվյալները վկայում են այդ մասին.

Աղյուսակ 24 - Հայկական դեղեր նշանակելու / դուրս գրելու բժիշկների փորձի առկայությունը

	Սեմինարներին չմասնակցած բժիշկներ	Սեմինարներին մասնակցած բժիշկներ
Երբեւ նշանակել են / դուրս են գրել հայկական դեղեր	93%	86%
Երբեւ չեն նշանակել / դուրս գրել հայկական դեղեր	7%	7%
Դժվարացել են պատասխանել	0%	7%
Ընդամենը	100%	100%

Ներկայացված տվյալները վկայում են ոչ միայն բժիշկների կողմից հայկական արտադրության դեղեր օգտագործելու հարուստ փորձի մասին, այլ նաև վերջին 3 տարիներին այդ փորձի զգալի աճի մասին: 2008թ.-ի համեմատությամբ, 2011թ.-ին 9%-ով պակասել է այն բժիշկների թիվը,

ովքեր իրենց գործունեության ընթացքում երբեւ չեն օգտագործել հայկական արտադրության դեղեր (տես Աղյուսակ 25)։


Աղյուսակ 25 - Հայկական դեղեր նշանակելու / դուրս գրելու բժիշկների փորձի առկայությունը 2008-2011թ.

	2008	2011	Փոփոխությունը
Երբեւ նշանակել են / դուրս են գրել հայկական դեղեր	84%	93%	+9%
Երբեւ չեն նշանակել / դուրս գրել հայկական դեղեր	16%	7%	-9%
Դժվարացել են պատասխանել	0%	0%	-
Ըստամենք	100%	100%	-

Բժիշկների կողմից հայկական արտադրության դեղերի օգտագործման փորձի աճը հիշեցնում է նոյն դեղերի մասին բժիշկների տեղեկացվածության աճի ցուցանիշները (տես Աղյուսակ 10, էջ 17): Ավելացնելով դրանք օգտագործելու բժիշկների փորձը ուղիղ համեմատական են միմյանց:

Սեմինարներին չմասնակցած բժիշկները (71 հոգի) միասին հիշատակել են 97 անուն դեղեր, որոնք նրանք օգտագործել են հետազոտությանը նախորդող 4 ամիսների (2010թ. սեպ.-դեկ.) ընթացքում (մեկ հոգու հաշվով միջինը՝ 1.4 անուն դեղ): Առավել հաճախ հիշատակված դեղերի առաջին տասնյակը ներկայացված է Նկար 9-ում: Վերջին 3 տարիների ընթացքում բժիշկները սկսել են ճանաչել եւ օգտագործել ավելի մեծ թվով հայկական արտադրության դեղեր: Համեմատության համար նշենք, որ 2008թ.-ի հետազոտության ժամանակ բժիշկները հիշատակել են իրենց կողմից օգտագործված ընդամենը 72 անուն դեղեր (մեկ հոգու հաշվով միջինը՝ 1.0 անուն դեղ): Ըստ որում, 2008թ.-ին յուրաքանչյուր երկրորդ բժիշկը իր օգտագործած դեղերի շարքում հիշատակել էր ինֆուզիոն լուծույթները: Այդ առումով 2011թ.-ի պատկերն ավելի դիվերսիֆիկացված է:

Նկար 9 - Բժիշկների կողմից նշանակված / դուրս գրված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը հետազոտությանը նախորդող 4 ամիսների (2010թ. սեպ.-դեկ.) ընթացքում




4.1.3 Դեղատների աշխատողների կողմից ռեղեփի օգտագործման (վաճառքի) միործ

Հայաստանի բոլոր դեղատներում ել վաճառվել կամ վաճառվում են հայկական արտադրության դեղեր: Ուստի բնական է, որ հևարակոր չէ գտնել որեւէ դեղատան աշխատող, որն իր գործունեության ընթացքում չի վաճառել հայկական արտադրության դեղեր: Դեղատների դեպքում նկատելի է առեւտրի կետերին բնորոշ մոտեցումը՝ «որքան շատ ապրանքների տեսականի եւ ընտրության հնարավորություն գնորդներին, այնքան շատ այցելուներ եւ հաճախելիություն»: Դեղատներում կարելի է հանդիպել նոյն դեղամիջոցի բազմաթիվ անալոգներ՝ տարբեր ծագման, արտադրողների եւ գների: Դա արվում է բավարարելու համար

տարբեր գնողունակության բնակիչ-սպառողների պահանջները: Կարծիք կա, որ դա նպատակ ունի նաեւ բավարարել տարբեր բժիշկների պահանջները, որոնք նույն դեղամիջոցի տարբեր անալոգների վերաբերյալ ունեն տարբեր կարծիքներ եւ մոտեցումներ:

Դեղատուների աշխատողների կողմից տրամադրված տեղեկությունների հիման վրա մենք կազմել ենք դեղատուներում առավել շատ իրացվող հայկական արտադրության դեղերի ցանկը: Չուզահեռ ներկայացվել է նաեւ 2008թ.-ի նույն ցուցանիշները՝ հասկանալու համար, թե ինչպես է փոփոխվել առավել շատ իրացվող հայկական դեղերի ցանկը:

Նկար 10 - Դեղատուների աշխատողների կողմից վաճառված հայկական արտադրության դեղերի առաջին տասնյակը հետազոտություններին նախորդող 4 ամիսների ընթացքում



4.2 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

4.2.1 Ովերն եւ ինչո՞ւ՝ առ այսօր չեն օգտագործել հայկական դեղագործական արտադրություն

Հայկական արտադրության դեղերի օգտագործման փորձառության վերլուծությունը ցույց է տալիս, որ վերջին 3 տարիների ընթացքում ավելացել է այն մարդկանց թիվը, ովքեր իրենց կամ ուրիշների առողջական խնդիրները լուծելու համար ավելի ու ավելի հաճախ են օգտվում հայկական դեղերից: Միեւնույն ժամանակ ակնհայտ է, որ առ այսօր կան դեղերի բազմաթիվ օգտագործողներ, որոնք երբեք չեն օգտագործել հայկական արտադրության դեղեր: Այդպիսի մարդիկ կազմում են բնակիչ-սպառողների 19%-ը (2008թ.-ին՝ 21%-ը) եւ բժիշկների 7%-ը (2008թ.-ին՝ 16%-ը): Կարծում ենք, որ շահագրգիռ ընթերցողին կիետաքրքրեր, թե ինչո՞ւ՝ այս մարդիկ չեն օգտագործել հայկական դեղեր:

Երբեւ հայկական արտադրության դեղեր չօգտագործած բնակիչ-սպառողների 1/3-ն ունի հայկական դեղերը չօգտագործելու օբյեկտիվ պատճառներ. Նրանք պարզապես կարիք կամ առիթ չեն ունեցել անելու դա: Մյուս մասը (2/3-ը կամ բոլոր բնակիչ-սպառողների 13%-ը) կազմում են այսպես կոչված քննադատների խումբը: Ըստ նրանց՝

- իրենք ծանոթ չեն հայկական դեղերին եւ այդ պատճառով չեն վստահում կարծում են «քննադատների» 26%-ը

- ուրիշները դժգոհում են եւ խորհուրդ չեն տալիս օգտագործել հայկական դեղեր, քանի որ հայկական դեղերը անորակ են, արդյունավետ չեն, և երմուծվածն ավելի լավն է կարծում են «քննադատների» 21%-ը
- բժիշկները խորհուրդ չեն տալիս օգտագործել հայկական դեղեր՝ հայտարարել են «քննադատների» 7%-ը, եւ՝
- եւս 13%-ը դժվարացել է հիմնավորել իր դիրքորոշումը:

Հայկական արտադրության դեղեր չօգտագործած բժիշկները (ընդհանուրի 7%-ը) հանդիս են եկել գրեթե նույն բացատրություններով, ինչ-որ բնակիչ-սպառողները: Նրանք նշել են, որ «ծանոթ չեն հայկական դեղերին», «վստահ չեն դրանց արդյունավետության մեջ» կամ «հայկական ձեռնարկությունները չեն արտադրում դեղերի իրենց ուզած տեսակները»: Սակայն այս կարծիքներին պետք է մի փոքր վերապահումներով մոտենալ, քանի որ հետազոտության ընտրանքի նկատմամբ նրանց թիվը շատ փոքր է:

4.2.2 Օգտագործողների շրջանում դեղերի ծագման կարեւորությունը եւ նախընտրությունները

4.2.2.1 Դեղերի ծագման կարեւորությունը բնակիչ-սպառողների շրջանում

Ինչպես նախորդ բոլոր դեպքերում, դեղերի ծագման կարեւորության հարցում բնակիչ-սպառողներին հնարավոր չէ դիտարկել մյուս բոլոր սպառողների հետ նույն հարթության մեջ: Դեղերի մասին նրանց ոչ բարձր տեղեկացվածությունը եւ ոչ լիարժեք գիտելիքները թույլ չեն տալիս բնակիչ-սպառողներին հանդիս գալ ծանրակշիռ դատողություններով: Դեղերի ծագման կարեւորության հարցում նրանք հիմնականում տալիս են չպարտավորեցնող պատասխաններ՝ նշելով, որ. ա) դեղերի ծագումը իրենց համար կարեւոր չէ՝ 60%, եւ բ) դժվարացել են պատասխանել՝ 1%:

Աղյուսակ 26 - Դեղերի ծագման կարեւորությունը բնակիչ-սպառողների շրջանում

Դիրքորոշում	Մասնաբաժին
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	31%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը	2%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	60%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	6%
Դժվարացել են պատասխանել	1%
Ընդամենը	100%

Ակնհայտ է, որ հայ հանրության մեջ ներմուծված դեղերն ունեն ավելի բարձր հեղինակություն: Բնակիչ-սպառողների այն 31%-ը, որը միանշանակորեն նախընտրում է ներմուծված դեղերը, իրենց դիրքորոշումը կառուցում են երկու մոտեցումների վրա. ա) նախընտրում են ներմուծված դեղերը, որովհետեւ կարծում են, որ դրանք ավելի որակյալ են, եւ բ) նախընտրում են ներմուծված դեղերը, որովհետեւ դեմ են հայկական դեղերին, որոնք անորակ են կամ վստահելի չեն:

Աղյուսակ 27-ում ներկայացված են բնակիչ-սպառողների կողմից դեղերի ծագման կարեւորությանը տրված բոլոր հիմնավորումները.

Աղյուսակ 27 - Բնակիչ-սպառողների շրջանում դեղերի ծագման նախընտրությունների հիմնավորումները

Բնակիչ-սպառողները նախընտրում են, որ դեղերը լինեն . . .			
... ՆԵՐՄՈՒԾՎԱԾ (31%), որովհետեւ՝	... ՀԱՅԿԱԿԱՆ (6%), որովհետեւ՝		
► Ներմուծված դեղերն ավելի որակյալ են	34%	► հայկական դեղերն ավելի որակյալ են	38%
► Ներմուծված դեղերն ավելի վստահելի են	21%	► հայկական դեղերն ավելի վստահելի են	17%
► Ներմուծված դեղերն ավելի արդյունավետ են	20%	► հայրենասիրությունից ելնելով պետք է խթանել հայրենի արտադրությունը	13%
► հայկական դեղերին չեն վստահում	8%	► հայկական դեղերն ավելի մատչելի են	8%
► հայկական դեղերը արդյունավետ չեն	4%	► հայկական դեղերն ավելի թարմ են	4%
► Ներմուծված դեղերի ներգործման ազդեցությունն ավելի ուժեղ է	3%	► հայկական դեղերի ներգործման ազդեցությունն ավելի ուժեղ է	4%
► Ներմուծված դեղերը քիչ են կերծվում	3%	► հայկական դեղերն ավելի արդյունավետ են	4%
► հայկական դեղերի որակը ցածր է	3%	► Ներմուծված դեղերին չեն վստահում	4%
► ծանոթ չեն հայկական դեղերին	3%	► մեր մասնագետներն ավելի լավս են	4%
► բժիշկները խորհուրդ են տալիս օգտագործել ներմուծված դեղեր	2%		
► ուրիշները դժգոհում են հայկական դեղերից	1%		
► իրենց ուզած դեղերից հայկականը չկա	1%		
► հայկական դեղերը պատրաստվում են նկուղներում	1%		

Եթե դեղերի ծագման կարեւորության հարցը դիտարկենք դիևամիկայի մեջ, ապա մեր առջեւ բացվում է անհանգստացնող պատկեր. 2008-2011թթ. ժամանակահատվածում 12 կետով մեծացել է այն բնակիչ-սպառողների թիվը, որոնք միանշանակորեն նախընտրում են ներմուծված դեղերը: Եվ դա այն դեպքում, երբ հայկական դեղերը նախընտրող բնակիչ-սպառողների թիվը մնացել է գրեթե անփոփոխ.

Աղյուսակ 28 - Դեղերի ծագման կարեւորությունը եւ բնակիչ-սպառողների շրջանում 2008-2011թթ.

Դիրքորոշում	2008	2011	Փոփոխությունը
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	19%	31%	+12%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը	4%	2%	-2%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	56%	60%	+4%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	5%	6%	+1%
Դժվարացել են պատասխանել	16%	1%	-15%
Ըստամենք	100%	100%	-

Աղյուսակ 28-ի տվյալներից կարելի է եզրակացնել, որ ներմուծված դեղերը նախընտրող բնակիչ-սպառողների թիվն աճել է այն մարդկանց հաշվին, ովքեր 3 տարի առաջ դեռևս չեին կարողանում կողմնորոշել իրենց դիրքորոշման մեջ: Յիմսվելով մինչ այս ներկայացված տեղեկությունների վրա, կարելի է կառուցել հետեւյալ տրամաբանական դատողությունը.

Գործընթացներ.

- Վերջին 3 տարիներին աճել է այն բնակիչ-սպառողների թիվը, ովքեր տեղյակ են հայկական արտադրության դեղերի մասին,
- աճել է այդ դեղերի մասին նրանց տեղեկացվածությունը,

- Ներկայում բնակիչ-սպառողները ավելի լավ եւ շատ են տեղեկացված հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին, քան 3 տարի առաջ,
- Վերջին 3 տարիներին բնակիչ-սպառողների շրջանում մեծացել է հայկական արտադրության դեղերի օգտագործումը/սպառումը,
- Վերջին 3 տարիներին զգալիորեն մեծացել է այն բնակիչ-սպառողների թիվը, որոնք նախընտրում են ներմուծված դեղերը, իսկ հայկականը նախընտրողների թիվը մնացել է անփոփոխ:

Հետևողություն.

- Բնակիչ-սպառողները որքան ավելի շատ են տեղեկացել կամ օգտագործել հայկական արտադրության դեղեր, այնքան ավելի շատ են հակվել դեպի ներմուծված դեղերը:

Այս գործընթացները խոսում են հայկական արտադրության դեղերի որակի եւ արդյունավետության հարցում առկա խնդիրների մասին: Այդ խնդիրները առկա են նաև 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Սակայն բնակիչ-սպառողները չեն կարողացել ավելի շատ մասրամասնել, թե ինչ կոնկրետ խնդիրներ են նրանք տեսնում հայկական արտադրության դեղերի հարցում: Նրանց փոխարեն դա անում են բնագավառի պրոֆեսիոնալները՝ բժիշկները եւ դեղատների աշխատողները, որոնց նախընտրություններ վերլուծությունը բերված է հաջորդիվ:

4.2.2.2 Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում

Դեղերի ծագման կարեւորությանը հարցին բժիշկների պատասխանները մասամբ ճշգրտումներ են մտցնում «Ներմուծվածն ընդեմ հայկականի» խնդրի մեջ: Յնարավոր է, որ հայկական արտադրության դեղերի որակի եւ արդյունավետության հարցում խնդիրն այնքան մեծ չէ, ինչպես կարելի է հասկանալ բնակիչ-սպառողների պատասխաններից: Այս ենթադրությունը հիմնված է Աղյուսակ 29-ի տվյալների վրա.

Աղյուսակ 29 - Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում

Դիրքորոշում	Մասնաբաժին	
	Սեմինարներին չմասնակցած բժիշկներ	Սեմինարներին մասնակցած բժիշկներ
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	21%	3%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը	51%	70%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	20%	20%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	8%	7%
Ընդամենը	100%	100%

Բժիշկների մեջ գերակշիռ մաս (51%) են կազմում նրանք, ովքեր կարողանում են տարբերակում մտցնել դեղերի մեջ՝ նշելով, որ որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածները, իսկ որոշների դեպքում՝ հայկականները: Անշուշտ, այդպես վերաբերվելու եւ ավելի հիմնավոր լինելու համար բժիշկներին օգնում են նրանց մասնագիտական գիտելիքները: Ուստի այս հարցում բժիշկների կարծիքները կարելի է համարել ավելի ծանրակշիռ: Ինչ վերաբերվում է միանշանակ դիրքորոշում ունեցող բժիշկների խմբերին, ապա ավելի մեծ թիվ են կազմում ներմուծված դեղերը նախընտրող բժիշկները. Նրանց մասնաբաժինը կազմում է 21%՝ ընդեմ հայկական դեղերը նախընտրող 8%-ի:

Աղյուսակ 30 - Բժիշկների շրջանում դեղերի ծագման նախընտրությունների հիմնավորումները

Բժիշկները նախընտրում են, որ դեղերը լինեն . . .			
. . . ՆԵՐՄՈՒԾՎԱԾ (21%), որովհետեւ՝		. . . ՀԱՅԿԱԿԱՆ (8%), որովհետեւ՝	
► Ներմուծված դեղերն ավելի վստահելի են	20%	► հայկական դեղերն ավելի արդյունավետ են	100%
► Ներմուծված դեղերն ավելի արդյունավետ են	13%		
► Ներմուծված դեղերը փորձված են	13%		
► Ներմուծված դեղերն ավելի որակյալ են	13%		
► ծանոթ չեն հայկական դեղերին	13%		
► հայկական դեղերին չեն վստահում	7%		
► իրենց ուգած դեղերից հայկականը չկա	7%		
► Ներմուծված դեղերի կողմնակի ազդեցությունն ավելի քիչ է	7%		

Դեղերի ծագման հարցում բժիշկների նախընտրությունները դիևամիկայի մեջ դիտարկելիս կարելի նկատել դրական զարգացումներ: Ներմուծված դեղերը միանշանակորեն նախընտրող բժիշկների թիվը վերջին 3 տարիներին նվազել է 10 կետով, որի փոխարեն 13 կետով աճել է տարբերակված մոտեցում ունեցող բժիշկների թիվը, որոնք որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը (տես Աղյուսակ 31)։

Աղյուսակ 31 - Դեղերի ծագման կարեւորությունը բժիշկների շրջանում 2008-2011թթ.

Դիրքորոշում	2008	2011	Փոփոխությունը
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	31%	21%	-10%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը	38%	51%	+13%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	26%	20%	-6%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	1%	8%	+7%
Դժվարացել են պատասխանել	3%	0%	-3%
Ընդամենը	100%	100%	-

Հայկական արտադրության դեղերի հեղինակությունը շատ բանով պայմանավորված է Լիկվորի աշխատանքով, որև իրեն երաշխավորել է որպես որակյալ ապրանքի արտադրողի (հատկապես շեշտվել են աչքի կաթիլները) եւ իր թերությունները շտկելու հարցում խիստ հետեւողական ձեռնարկության: Բացի Լիկվորից, գովեստի խոսքեր են հնչել Եսկուլապի եւ Մեդիչալ-Յորիգոնի հասցեին: Հատկանշական է, որ 2008թ.-ին Եսկուլապի որոշ ապրանքների փաթեթավորման հասցեին արված քննադատությունը 2011թ.-ին արդեն չի հանդիպել:

Աղյուսակ 31-ի տվյալներում նկատվող դրական միտումները չեն նշանակում, որ հայկական արտադրության դեղերի որակի եւ արդյունավետության հարցում խնդիրներ չկան: Դրանում կարելի է համոզվել՝ ծանոթանալով բժիշկների հետեւյալ դժգոհություններին եւ քննադատություններին։

- Հայկական դեղագործական ձեռնարկությունների ցանկը, ում հասցեին բժիշկների կողմից հնչել են առավել մեծ թվով դժգոհություններ՝ գլխավորում է Արփիմենդը: Դժգոհության թիրախ են հանդիսացել ձեռնարկության *հոգեսետ դեղերը*, որոնք աչքի են ընկնում իրենց որակական եւ արդյունավետության ցածր հատկանիշներով: Անհանգստացնող է այն, որ այս խնդիրը գոյություն է ունեցել նաև 3 տարի առաջ եւ դրանում առ այսօր որեւէ առաջընթաց չի արձանագրվել: Բացի որակից, բժիշկների կողմից քննադատվել է նաև հոգեսետ դեղերի փաթեթավորումը: Տարեր հոգեսետ դեղերը փաթեթավորված են նույն տիպի տարաների մեջ, որը շփոթություն է առաջացնում սպառողների շրջանում եւ գնման ժամանակ

- անհարմարություն է առաջացնում: 2011թ.-ի հետազոտության ժամանակ դժգոհություն է հնչել և անհարմարության մասնագետների մոտ 38%-ի մասնագետների հասցեին՝ որպես ցածր որակական հատկանիշներ ունեցող դեղամիջոցներ:
- Դժգոհություն է հնչել Երեւանի ԶԴՖ-ի դեղերի փաթեթավորման, Վիտամաքս-Ե-ի արտադրած Նարիմարսի հասցեներին:

4.2.2.3 Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում

Դեղատների աշխատողների պատասխանների վերլուծությունը ցույց է տալիս, որ դեղերի ծագման կարեւորությունը նրանք գնահատում են ոչ միայն մասնագետների 38%-ի համար դեղերի ծագումը կարեւոր չէ: Այս խմբին ավելի շատ հոգում են դեղերի իրացվելիությունը եւ վաճառքի ծավալները: Որոշակի նախընտրություններ ունեցող դեղատների աշխատողների երկրորդ մեծ խումբը (24%) միանշանակորեն գերադասում է ներմուծված դեղերը, որով նրանք հիշեցնում են բժիշկներին:

Աղյուսակ 32 - Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում

Դիրքորոշում	Մասնաբաժին
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	24%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում՝ հայկականը	28%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	38%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	2%
Դժվարացել են պատասխանել	8%
Ընդամենը	100%

Ներմուծված դեղերի նկատմամբ իրենց նախընտրությունները հիմնավորելիս դեղատների աշխատողները գրեթե կրկնում են բժիշկներին.

Աղյուսակ 33 - Դեղատների աշխատողների շրջանում դեղերի ծագման նախընտրությունների հիմնավորումները

Դեղատների աշխատողները նախընտրում են, որ դեղերը լինեն . . .	
... ՆԵՐՄՈՒԾՎԱԾ (24%), որովհետեւ՝	... ՀԱՅԿԱԿԱՆ (2%), որովհետեւ՝
▶ Ներմուծված դեղերն ավելի որակյալ են	30%
▶ իրենք հայկական դեղերին չեն վստահում	20%
▶ հաճախորդները հայկական դեղերին չեն վստահում	15%
▶ Ներմուծված դեղերն ավելի վստահելի են	15%
▶ Ներմուծված դեղերն ավելի արդյունավետ են	5%
▶ արտասահմանյան ֆիրմաներում աշխատում են ավելի որակյալ մասնագետներ	5%
▶ Ներմուծված դեղերը փորձված են	5%

Դիսամիկայի մեջ դեղերի ծագման կարեւորությունը դիտարկելիս նկատվում է, որ դեղատների աշխատողները աստիճանաբար հակվում են դեպի ներմուծված դեղերը (տես

Աղյուսակ 34).

Աղյուսակ 34 - Դեղերի ծագման կարեւորությունը դեղատների աշխատողների շրջանում 2008-2011թթ.

Դիրքորոշում	2008	2011	Փոփոխությունը
Նախընտրում են, որ դեղերը լինեն ներմուծված	8%	24%	+12%
Որոշ դեղերի դեպքում նախընտրում են ներմուծվածը, որոշների դեպքում հայկականը	35%	28%	-7%
Դեղերի ծագմանը կարեւորություն չեն տալիս	47%	38%	-9%
Նախընտրում են, որ դեղերը լինեն հայկական	5%	2%	-3%
Դժվարացել են պատասխանել	5%	8%	+3%
Ընդամենը	100%	100%	-

Այստեղ պատկերը շատ նման է բնակիչ-սպառողների մոտ գրանցված միտումներին: Կարելի է ենթադրել, որ բնակիչ-սպառողների եւ դեղատների աշխատողների նախընտրությունների նմանությունը նրանց միջեւ փոխադարձ կապի արդյունքն է: Մենք արդեն նշել ենք, որ դեղատները հանդիսանում են դեղերի մասին բնակիչ-սպառողների տեղեկացվածության գիշավոր աղբյուրը (տես Նկար 2, էջ 20): Դրանով կարելի է բացատրել հայկական արտադրության դեղերի նկատմամբ բնակիչ-սպառողների եւ դեղատների աշխատողների կարծիքների հարաբերական նմանությունը:

4.3 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՎԱՔԻՆ ՏՐՎԱԾ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

Օգտագործողների շրջանում դեղերի ծագման կարեւորության գիտակցումը հնարավորություն չի տալիս հասկանալ, թե ի վերջո ի՞նչ կոնկրետ առավելություններ ունեն ներմուծված դեղերը, որոնց պատճառով օգտագործողներն իրենց նախապատվությունը տալիս են դրանց: Դա հասկանալու համար օգտագործողների գնահատմանն են ներկայացվել դեղերի 4 հիմնական բնորոշչիները՝ որակը (ներգործման ազդեցությունը), գինը, փաթեթավորումը, հասանելիությունը: Այդ բնորոշչիները գնահատվել են ինչպես ներմուծված, այնպես էլ հայկական դեղամիջոցների համար՝ այդպիսով ստանալով համեմատական պատկեր: Ըստ որում՝ ներմուծված դեղերն ել ըստ ծագման բաժանվել են 2 խմբերի՝ միջազգային (ամերիկյան եւ եվրոպական դեղամիջոցներ) եւ ռուսական (որպես իր իմիջով միջազգային եւ հայկական դեղամիջոցների միջեւ միջանկյալ դիրք գրադարձնող արտադրանք) դեղագործական արտադրանքների:

Օգտագործողների կողմից դեղերի բնորոշչիները գնահատելու համար կիրառվել է 4 բայանց գնահատման համակարգ, որտեղ՝ «4» գնահատվել է ամենադրական գնահատականը, «1»՝ ամենաբացասական գնահատականը: Գնահատման սանդրակը ունի հետեւյալ սահմանումները:

Աղյուսակ 35 - Օգտագործողների կողմից դեղերի բնորոշչիների գնահատման համար օգտագործված սանդղակ

	Դեղերի բնորոշչիներ			
	Ներգործման ազդեցությունը (որակը)	Գին	Փաթեթավորում	Հասանելիությունը
Գնահատման սանդղակ	4 - շատ արդյունավետ 3 - արդյունավետ 2 - թույլ 1 - անարդյունավետ	4 - շատ եժան 3 - եժան 2 - թանկ 1 - շատ թանկ	4 - գեղեցիկ եւ հարմար 3 - ոչ վատ 2 - ոչ լավ 1 - անշուր եւ անհարմար	4 - միշտ առկա է 3 - հեշտ է ծննդքերկում 2 - դժվար է ծննդքերկում 1 - դեֆիցիտ է

4.3.1 Բնակիչ-սպառողների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տրված գնահատականները

Օգտագործողների բոլոր խմբերի մեջ ել եղել են մարդիկ, որոնք դժվարացել են դեղերի համեմատական գնահատում իրականացնել: Բնակիչ-սպառողների շրջանում դրանք շատ են, պրոֆեսիոնալ հանրության (բժիշկների եւ դեղատների աշխատողների) շրջանում՝ թիվ: Դեղերի համեմատական գնահատում իրականացնելու համար բնակիչ-սպառողների զգալի մասին չեն բավարարում տեղեկությունները, գիտելիքները եւ փորձը: Ուստի նրանց այդ մասը դժվարացել է տալ որոշակի գնահատականներ: Յետազոտության արդյունքներով դեղերի բնորոշիչներին գնահատականներ են տվել բնակիչ-սպառողների հետեւյալ մասը.


Այլուսակ 36 - Բնակիչ-սպառողների մասնաբաժինը, որոնք կարողացել են հանդես գալ դեղերի բնորոշիչների գնահատականներով

Ներգործման ազդեցությունը (որակը)			Գին			Փաթեթավորում			Հասանելիությունը		
Հայ- կական	Ռուսա- կան	Միջազ- գային	Հայ- կական	Ռուսա- կան	Միջազ- գային	Հայ- կական	Ռուսա- կան	Միջազ- գային	Հայ- կական	Ռուսա- կան	Միջազ- գային
72%	83%	88%	75%	84%	91%	66%	80%	87%	77%	87%	90%

Բնակիչ-սպառողների կողմից ներմուծված եւ հայկական դեղերին տրված համեմատական գնահատականներից կարելի է եզրակացնել, որ.

- հայկական արտադրության դեղերն իրենց ներմուծված անալոգներից ավելի էժան են (մատչելի են) եւ ուսեն բարձր հասանելիություն, եւ
- ներմուծված դեղերն իրենց հայկական անալոգների համեմատ ուսեն ներգործման ավելի մեծ ազդեցություն (ավելի որակյալ են) եւ փաթեթավորման ավելի բարձր մակարդակ (տես Նկար 11):

Նկար 11 - Բնակիչ-սպառողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ



Ըստ բնակիչ-սպառողների, տարբեր ծագման դեղերին գնահատականներ տալիս իրենք հիմնվել են մի քանի աղբյուրների վրա: Առավել հաճախ (84%) մարդիկ նշել են, որ իրենց գնահատականները հիմնված են դեղեր օգտագործելու/սպառելու իրենց փորձի վրա: Բնակիչ-սպառողների 30%-ը իր գնահատականները տվել է ծանոթներից (ընկերներից, բարեկամներից) ստացած տվյալների հիման վրա: Ըստ ավելի փոքր թվով բնակիչ-սպառողներ (4%) հղում են արել բժիշկներից եւ դեղատների աշխատողներից ստացած տեղեկությունների վրա:

Հայկական արտադրության դեղերի երկու համեմատական առավելությունները (էժան գներ եւ բարձր հասանելիություն) իրենց կարեւորությամբ զիջում են մյուս բնորոշիչներին (ներգործման ազդեցություն եւ փաթեթավորում): Ըստ բնակիչ-սպառողների, դեղերը առանձևահատուկ ապրանք են եւ կապված են մարդու առողջության վերականգնման հետ: Կյա իմաստով առաջին պլան է մղվում դեղերի որակը (ներգործման ազդեցությունը), իսկ մյուս բնորոշիչները, այդ թվում գինը, անցնում են երկրորդ պլան: Յետեւությունն այն է, որ մարդիկ պատրաստ են առողջության վերականգնման համար ավելի թանկ վճարել:

Բնակիչ-սպառողների կողմից հայկական արտադրության դեղերին տրված գնահատականները վերջին երեք տարիներին փոփոխվել են, ըստ որում՝ դեպի վատը: Թերեւս, դրանով կարելի է բացատրել այն, թե 2008-2011թթ.-ին ինչու է ավելացել ներմուծված դեղերը գերադասող բնակիչ-սպառողների քանակը:

Այլուսակ 37 - Բնակիչ-սպառողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.


Դեղերի բնորոշիչներ	Հայկական			Ուսուական			Միջազգային		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ներգործման ազդեցություն	2.8	2.5	↓	3.1	3.0	↓	3.3	3.3	=
Գին	3.0	2.8	↓	2.4	2.4	=	1.9	2.1	↑
Փաթեթավորում	2.7	2.6	↓	3.1	3.2	↑	3.5	3.7	↑
Քասանելիություն	3.2	3.5	↑	3.1	3.2	↑	2.9	3.1	↑

Յանուն օբյեկտիվության պետք է նշել, որ 2011թ.-ի հետազոտության ժամանակ բնակիչ-սպառողների շրջանում նկատվում էր որոշակի սոցիալական լարվածություն, որն առկա չէր 2008թ.-ի հետազոտության ժամանակ: Այդ լարվածությունը պայմանավորված է Հայաստանի համար համաշխարհային ֆինանսատևսական ճգնաժամի ծանր հետեւանքներով եւ 2010թ.-ին ինֆլյացիայի բարձր տեմպերով: Բնակիչ-սպառողների մոտ նկատվում է հայկական ապրանքների «հեղինակագրկում», ինչը պայմանավորված է 2010թ.-ին առաջին անհրաժեշտության մի շարք տեղական ապրանքների (կարտոֆիլ, մրգեր, ձոլ) գների անսախադեալ թանկացմամբ: Այդ տրամադրությունները մասսմբ ազդում են նաև հայկական դեղերի՝ որպես մեկ այլ առաջին անհրաժեշտության ապրանքների, գնահատականների վրա:

4.3.2 Բժիշկների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տուված գնահատականները

Բժիշկները, որպես դեղերի օգտագործողների մեջ առավել պրոֆեսիոնալ հանրություն, մեծ խնդիրներ չեն ունեցել դեղերը գնահատելու հարցում: Նրանց 90-95%-ը հանդես են եկել հստակ գնահատականներով, նշելով, որ իրենց գնահատականները բացառապես հիմնված են իրենց աշխատանքային փորձի վրա:

Նկար 12 - Բժիշկների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ



Ինչպես եւ բնակիչ-սպառողների դեպքում, բժիշկները եւս կարծում են, որ հայկական արտադրության դեղերն ավելի էժան են եւ հասանելի՝ դա ներկայացնելով որպես միցակցային առավելություն: Իսկ ներմուծված դեղերն, ըստ բժիշկների, ավելի որակյալ են եւ արդյունավետ: Ներմուծված դեղերի նկատմամբ բժիշկների նախընտրությունները ազդում են նաեւ նրանց վարքագծի վրա՝ կապված հիվանդներին այս կամ այս դեղամիջոցը նշանակելու հետ:

Բժիշկների շրջանում դեղերի հիմնական բնորոշիչների գնահատականները եւս ժամանակի ընթացքում (2008-2011թթ.) մի փոքր նվազել են: Սակայն եթե բնակիչ-սպառողների պատասխաններում նկատելի էր որոշակի զգացմունքայնություն, ապա բժիշկներն ունեն որոշակի հիմքեր՝ նվազեցնելու իրենց գնահատականները (տես Այլուսակ 38).

Այլուսակ 38 - Բժիշկների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.

Դեղերի բնորոշիչներ	Հայկական			Ուսուական			Միջազգային		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ներգործման ազդեցություն	2.9	2.8	↓	3.0	2.8	↓	3.8	3.5	↓
Գին	2.9	2.8	↓	2.0	2.2	↑	1.5	1.4	↓
Փաթեթավորում	3.2	2.8	↓	2.9	2.9	=	4.0	3.8	↓
Հասանելիություն	3.9	3.8	↓	3.8	3.6	↓	3.7	3.5	↓

Հայկական արտադրության դեղերի դեպքում գնահատականների նվազումը շատ փոքր է եւ դեղերս անհանգստացնող չէ: Սակայն դեղերի շուկայում կան իրողություններ, որոնք ըստ ամենայնի իրենց արտահայտումն են գտել բժիշկների գնահատականների մեջ: Մասնավորապես կարելի է հիշել բժիշկների կարծիքները Արփիմենի հոգեմետ դեղերի ներգործման ցածր ազդեցության, պարզունակ եւ շփոթություն առաջացնող փաթեթավորման մասին, Երեւանի ԶԵՖ-ի դեղերի փաթեթավորման ցածր որակի մասին: Հայկական արտադրության դեղերի հասանելիության հարցում քննադատության է Ենթարկվել Վիտամաքս-Ե-Ն, որի մի շարք դեղեր վաճառքում են միայն նրան պատկանող դեղատանը:

Ինչ վերաբերվում է ներմուծված դեղերի գնահատականների անկմանը, դա կարող է մասամբ պայմանավորված լինել դեղերի շուկայում տեղի ունեցած գործընթացներով՝ կապված ներմուծման կառուցվածքի փոփոխության հետ: Տարեկան Հայաստանը ներմուծում է 90-100 մլն ԱՄՆ դոլարի դեղագործական արտադրանք՝ ավելի քան 60 Երկրներից: Հայաստանի շուկայում միշտ էլ գերակշռել է ամերիկյան արտադրանքը. 2007թ.-ին ԱՄՆ-ից ներմուծումը կազմել

ՏԵՂԵԿԱՆՔ

**Հայաստանի կողմից դեղագործական արտադրանքի
ներմուծումն ըստ Երկրների 2007-2009թթ.**

Երկրներ (Top 20)	2007		2008		2009	
	հազ. դոլար	%	հազ. դոլար	%	հազ. դոլար	%
Ըստամենը	99,813.6	100.0%	95,565.9	100.0%	92,191.0	100.0%
ԱՄ	42,087.5	42.2%	23,073.5	24.1%	15,408.7	16.7%
Ֆրանսիա	7,534.5	7.5%	11,397.2	11.9%	11,452.8	12.4%
Գերմանիա	6,411.7	6.4%	8,539.6	8.9%	10,166.6	11.0%
Շվեյցարիա	4,512.5	4.5%	5,213.0	5.5%	8,469.1	9.2%
Իտալիա	3,214.6	3.2%	3,924.9	4.1%	5,145.8	5.6%
Ռուսաստան	2,777.3	2.8%	4,064.0	4.3%	4,337.9	4.7%
Չինագարիա	3,852.2	3.9%	4,542.3	4.8%	4,018.7	4.4%
Նիդեռլանդներ	2,050.6	2.1%	2,481.0	2.6%	3,551.7	3.9%
Սլովենիա	2,741.7	2.7%	3,926.4	4.1%	3,255.0	3.5%
Մեծ Բրիտանիա	2,489.8	2.5%	2,307.0	2.4%	2,278.1	2.5%
Բելգիա	1,522.7	1.5%	2,200.5	2.3%	2,190.7	2.4%
Լիհաստան	1,728.4	1.7%	2,179.1	2.3%	2,120.8	2.3%
Ավստրիա	1,663.5	1.7%	1,715.6	1.8%	1,904.9	2.1%
Բուլղարիա	1,277.4	1.3%	1,679.8	1.8%	1,789.2	1.9%
Եղիպատոս	2,292.6	2.3%	2,335.4	2.4%	1,744.8	1.9%
Ռուսաստան	1,597.8	1.6%	2,324.8	2.4%	1,521.0	1.6%
Չինագարիա	1,408.1	1.4%	1,445.2	1.5%	1,221.7	1.3%
Դանիա	1,011.5	1.0%	1,995.9	2.1%	1,212.2	1.3%
Բելառուս	947.4	0.9%	1,091.1	1.1%	1,176.8	1.3%
Իսպանիա	574.5	0.6%	864.1	0.9%	1,176.2	1.3%
ԱՐ (40) Երկրներ	8,117.3	8.1%	8,265.5	8.6%	8,048.3	8.7%

Աղյուսու՝ «ՀՀ արտաքին առևտուրը 2007-2009թթ. ըստ ԱՏԳԱԱ 2-նի դասակարգման», ԿՎԾ, 2008-2010


Ե ամբողջ ներմուծման 42%-ը (տես Տեղեկանքը): Հաջորդ երկու տարիներին, որն արդեն համընկում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի հետ, ԱՄՆ-ից ներմուծումը կրճատվել է 2.7 անգամ: Փոխարենը սկսել են աճել եվրոպական (Ֆրանսիա, Գերմանիա, Շվեյցարիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Բուլղարիա, Խաղանիա), ռուսական, բելառուսական դեղագործական արտադրանքի ներմուծման ծավալները: Հայաստանի դեղերի շուկայում ամերիկյան ապրանքների (որոնք միշտ ունեցել են բարձր համարում) կրճատումը անդրադարձել է ներմուծված դեղագործական արտադրանքին բժիշկների կողմից տրված գնահատականների վրա՝ նվազեցնելով դրանք: Միաժամանակ ոչ բոլոր եվրոպական երկրների դեղագործական արտադրանքն է վստահություն վայելում հայ բժիշկների շրջանում: Թևադադարություն է հնչել բուլղարական եւ ուկրաինական դեղերի հասցեին: Ավելի սուր քննադատություն է բաժին հասել հնդկական, վրացական, չինական դեղերի հասցեին:

Չնայած հայկական արտադրության դեղերի կարեւոր քննորոշիչների գնահատականների անկմանը, բժիշկների 72%-ը նշել է, որ իրենք իրենց հարազատներին եւ մտերիմներին խորհուրդ կտան օգտագործել հայկական արտադրության դեղեր, եւ միայն 28%-ը չի անի այդպիսի բան: Վյու դեպքում խոսքը գտնում է սեմինարներին չմասնակցած բժիշկների մասին: Սեմինարներին մասնակցած բժիշկները ավելի մեծ վստահություն ունեն դեպի հայկական արտադրության դեղերը. նրանց 80%-ն է նշել, որ մտերիմներին խորհուրդ կտան օգտագործել հայկական դեղեր: Համեմատության համար նշենք, որ 3 տարի առաջ բժիշկներն ավելի ծայրահեղ են տրամադրված եւ նրանց միայն 54% էր պատրաստ մտերիմներին խորհուրդ տալու օգտագործել հայկական դեղեր:

4.3.3 Դեղատների աշխատողների կողմից հայկական դեղագործական արտադրանքին տրված գնահատականները

Դեղատների աշխատողների գնահատականները գալիս են հաստատելու դեղերի մյուս օգտագործողների գնահատականները: Ըստ դեղատների աշխատողների, հայկական արտադրության դեղերն համեմատաբար եժան են եւ ավելի հասանելի, քան ներմուծված դեղերը: Փոխարենը վերջիններս ավելի որակյալ եւ արդյունավետ են (ներգործման ազդեցության տեսանկյունից) եւ ավելի գեղեցիկ են փաթեթավորված (տես Նկար 13): Իրենց պատասխաններում դեղատների աշխատողների ճնշող մեծամասնությունը (96%) հիմնվել է իր աշխատանքային փորձի վրա, որի հիմքում էլ ընկած է հայկական եւ ներմուծված դեղերի վաճառքի ծավալների համեմատական տվյալները եւ հաճախորդների արձագանքները:

Նկար 13 - Դեղատների աշխատողների կողմից դեղերի որոշ քննորոշիչներին տրված գնահատականներ



Դիսամիկայի մեջ դեղատների աշխատողների գնահատականները մասամբ են փոխվել: Ուրախալի է, որ հայկական արտադրության դեղերը «պահպանել են իրենց դիրքերը».

Աղյուսակ 39 - Դեղատների աշխատողների կողմից դեղերի որոշ բնորոշիչներին տրված գնահատականներ 2008-2011թթ.

Դեղերի բնորոշիչներ	Հայկական			Ռուսական			Միջազգային		
	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.	2008	2011	Փոփ.
Ներգործման ազդեցություն	2.6	2.6	=	2.9	3.1	↑	3.5	3.6	↑
Գին	2.7	3.0	↑	2.7	2.6	↓	2.1	1.8	↓
Փաթեթավորում	2.4	2.2	↓	2.7	2.8	↑	4.0	3.9	↓
Հասանելիություն	3.7	3.7	=	3.3	3.3	=	3.2	3.0	↓


Դեղատների աշխատողների 66%-ը նշել է, որ իրենք իրենց հարազատներին եւ մտերիսներին խորհուրդ կտան օգտագործել հայկական արտադրության դեղեր: 2008թ.-ին այդպիսի պատրաստակամություն ունեին դեղատների աշխատողների 63%-ը:

5 ԴԵՂԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՎԱՆ ԿԱՄ ՆՃԱՆԱԿՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ՎԱՐՅԱԳԾԻ ՈՐՈՇ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1 ԲՆԱԿԻՉ-ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԴԵՂԵՐԻ ԳՆՄԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՎՐԱ ԱՇԴՈՂ ԳՈՐԾՈՂՆՆԵՐԸ

Դեղերը բնակչության շրջանում լայն սպառում ունեցող այն բացառիկ ապրանքներից են, որոնց գնման հարցում բնակիչ-սպառողները կարիք ունեն խորհուրդներ ստանալ այլ անձանցից: Այդ «խորհրդատունների» բանակը կազմում էն բժիշկները եւ դեղատների աշխատողները, որոնք հանդիսանում են դեղերի մասին տեղեկության, դրանց կիրառական նշանակության եւ օգտակարության գծով պրոֆեսիոնալներ: Եվ քանի որ դեղերի կիրառական նշանակությունը կապված է մարդկանց առողջության վերականգնման հետ, ուստի բնակիչ-սպառողները ծգոտում են դեղերի օգտագործման վերաբերյալ որոշումը կայացնել ոչ թե ինքնուրույն, այլ դիմել բժիշկներին եւ դեղատների աշխատողներին: Այս հանգամանքի պատճառով վերջիններս դեղերի շրջանառության բնագավառում ունեն բացարիկ կարեւոր դեր. **Նրանք հանդիսանում են բնակիչ-սպառողների կողմից դեղերի գնման որոշման կայացման գլխավոր գործոնները.**

Նկար 14 - Բնակիչ-սպառողների դեղերի գնման որոշման վրա ազդող գործոնները



Բնակիչ-սպառողները ... ↓	2008	2011	Փոփ.
Գնում են այն, ինչ հուշում են բժիշկները	71%	77%	↑
Գնում են այն, ինչ հուշում են դեղատների աշխատողները	18%	37%	↑
Գնում են այն, ինչ հուշում է կինը/ամուսինը	11%	17%	↑
Գնում են այն, ինչ գրված է դեղատումում	23%	16%	↓
Գնում են այն, ինչ հարմար են գտնում	17%	9%	↓
Դժվարացել են պատասխանել	0%	2%	↑

↗ Համեմատություն 2008 / 2011

Նկար 14-ի տվյալներից կարելի է հասկանալ, որ դեղեր գնելու հարցում բնակիչ-սպառողներն իրենց որոշումները կայացնում են՝ օգտվելով միաժամանակ տարբեր աղբյուրներից: Ծանր կամ միջին բարդության հիվանդությունների բուժման համար, որտեղ մարդիկ չունեն բավարար գիտելիքներ կամ ինքնուրույն որոշման ռիսկն ավելի մեծ է, բնակիչ-սպառողները դիմում են բժիշկներին: Յամեմատաբար թեթեւ հիվանդությունների (գլխացավ, ճնշման տատանում, գրիպ) դեպքում բնակիչ-սպառողները դիմում են դեղատների աշխատողներին, խորհուրդ են հարցում հարազատից կամ ինքնուրույն կայացնում են դեղ գնելու որոշում: Եթե համեմատենք դեղերի գնման հարցում բնակիչ-սպառողներին խորհուրդ տվողներին, ապա **առաջին անառարկելի հեղինակությունը վայելում են բժիշկները:** Կարելի է ասել, որ գրեթե բոլոր դեպքերում նրանց տված խորհուրդը (նշանակումը, դուրս գրած դեղամիջոցը) բնակիչ-սպառողի համար անբեկանելի է: Նկար 14-ի տվյալները հստակ ցույց են տալիս բնակիչ-սպառողների կողմից դեղերի գնման որոշման վրա ազդող գլխավոր գործող անձանց՝ բժիշկներին:

Վերջին 3 տարում դեղերի գնման որոշման կայացման հարցում բժիշկների դերակատարությունն ել ավելի է մեծացել (71%-ից դառնալով 77%): Աճել է նաև դեղատների աշխատողների կշիռը (մոտ 2 անգամ) եւ կրծատվել է ինքնուրույն որոշում կայացնող բնակիչ-սպառողների թիվը (մոտ 2


անգամ): Ըստհանուր եզրակացությունն այն է, որ վերջին 3 տարում դեղերի գնման հարցում **մեծացել է բնակիչ-սպառողների կախվածությունը բժիշկներից եւ դեղատևների աշխատողներից**:

Դեղերի գնման բնակիչ-սպառողների որոշման կայացման գործընթացը չի ավարտվում բժշկի նշանակմամբ կամ դեղատան աշխատողի խորիրողվ: Դրանցի հետո բնակիչ-սպառողների որոշման ծեւավորմանը մասնակցում են մի շարք նոր գործոններ, որոնք են:

- **դեղամիջոցի գինը.** - դեղամիջոցները տարբեր դեղատևներում կարող են ունենալ տարբեր գներ, որանք կարող են ունենալ անալոգներ, որոնց գները կարող են եապես տարբերվել նշանակված դեղամիջոցի գնից,
- **բժիշկի երաշխավորությունը.** - բնակիչ-սպառողի համար բժիշկի երաշխավորությունը կարող է այնքան կարեւոր նշանակություն ունենալ, որ նա դեղամիջոցը գնի անգամ արտասահմանից՝ միայն թե դա լինի հենց բժիշկի նշանակածը (չնայած որ դրա անալոգը վաճառվում է իր տան մոտակա դեղատանը),
- **դեղամիջոցի փաթեթավորումը.** - բնակիչ-սպառողը կարող է ընտրության հնարավորություն ունենալու դեպքում գնել առավել գեղեցիկ ապրանքային տեսք ունեցող դեղամիջոցը,
- **դեղատան մոտիկությունը.** - բնակիչ-սպառողը կարող է չունենալ բավարար ժամանակ եւ իրեն նշանակված դեղամիջոցը փոխարինի անալոգով՝ ծեռք բերելով այն իրենից ամենամոտ գտնվող դեղատանից,
- **դեղատան սպասարկման որակը.** - բնակիչ-սպառողը կարող է այցելի միայն այն դեղատևները, որտեղ իրեն սպասարկում են բարձր որակով,
- **դեղամիջոցի գովազդված լինելը.** - բնակիչ-սպառողը կարող է ընտրություն ունենալու պարագայում գնի այն դեղամիջոցը, որն իրեն ծանոթ է գովազդներից:

Թվարկված գործոնների կարեւորությունը բնակիչ-սպառողների կողմից գնահատվել է 3 բալանց գնահատման համակարգով, որտեղ՝ «3» նշանակում է շատ կարեւոր, «2»՝ կարեւոր եւ «1»՝ ոչ կարեւոր: Գործոնների գնահատման արդյունքները ներկայացված են ստորեւ:

Նկար 15 - Դեղեր գնելու հարցում բնակիչ-սպառողների որոշման վրա ազդող տարբեր գործոնների կարեւորության գնահատականները



Գործոններ	2008	2011	Փոփ.
Բժշկի երաշխավորությունը	2.8	2.6	↓
Ներգործման ազդեցությունը	3.0	2.6	↓
Սպասարկման որակը	2.4	1.7	↓
Դեղի գինը	1.9	1.7	↓
Դեղատան մոտիկությունը	2.0	1.6	↓
Գովազդը	1.8	1.3	↓
Փաթեթավորումը	1.8	1.2	↓

Այս գնահատականները կրկին անգամ վկայում են դեղերի շրջանառության բնագավառում բժիշկների բացարիկ դեղակատարության մասին: Բժիշկների կարծիքը (երաշխավորությունը) բնակիչ-սպառողների համար վերջին 3 տարիներին ընթացքում դարձել է ավելի ծանրակշիռ, քան դեղերի ներգործման ազդեցության ընկալումը: Նկար 15-ից կարելի է հասկանալ նաեւ, որ հայկական արտադրության դեղերի այն բնորոշիչները, որոնք համարվում են մրցակցային առավելություն (Էժան գները եւ բարձր հասանելիությունը), բնակիչ-սպառողների համար ունեն ցածր կարեւորություն: Կարելի է եզրակացնել, որ բնակիչ-սպառողները պատրաստ են վճարել

ավելի բարձր գին՝ միայն թե ճեղք բերեն ներգործման ազդեցությամբ առավել որակյալ եւ արդյունավետ դեղամիջոց:

Բժիշկներն իրենք եւս շատ լավ գիտեն այս մասին, թե ինչ կարեւորություն ունի իրենց կարծիքը կամ երաշխավորությունը բնակիչ-սպառողների համար: Ոստի թիւ չեն դեպքերը, երբ նրանք փորձում են օգտվել այդ հանգամանքից: Բնակիչ-սպառողների 50%-ը (2008թ.-ին՝ 34%-ը) հայտարարել է, որ իրենք առնչվել են այնպիսի փաստի, երբ բժիշկները դեղամիջոցներ նշանակելիս իրենց «խորհուրդ» են տվել, որ նա «ապրուարի պետք է զնի այսինչ երկրի կամ այսինչ արտադրողի (կամ ապրանքանշանի) արտադրության դեղամիջոցը»: Բնակիչ-սպառողների 8%-ը նման երեւույթի հետ առնչվում է միշտ, իսկ 24%-ը՝ շատ հաճախ: 2008թ.-ին նոյն ցուցանիշները եղել են համապատասխանաբար 2% եւ 14%: Ավելի այսպէս է, որ վերջին 3 տարիներին մեծացել է բնակիչ-սպառողների կախվածությունը բժիշկներից, իսկ վերջիններս ել սկսել են ավելի շատ շահարկել այդ իրավիճակը:

Բնակիչ-սպառողների 76%-ը (2008թ.-ին՝ 88%-ը) հայտարարել է, որ **իրենք առանց երկմտելու հետեւում են բժիշկի խորհրդին:** Բնակիչ-սպառողների մասած մասը իրեն այլ կերպ է պահում: Նրանց 7%-ը (2008թ.-ին՝ 5%-ը), վրորվելով այդ փաստից, դիմում է այլ բժիշկների, 7%-ն էլ նախքան գնում կատարելը խորհրդակցում է դեղատների աշխատողների եւ այլ մասնագետների հետ:

Դարձավոր է, սակայն, որ բժիշկի դուրս գրած դեղամիջոցը բնակիչ-սպառողները չգտնեն դեղատանը: Ինչպես են վարչում նրանք այդ դեպքում: Նրանց 61%-ը (2008թ.-ին՝ 83%-ը) հայտարարել է, որ սկսում են միջոցներ ճեղք առնել այդ դեղամիջոցը գտնելու ուղղությամբ՝ փնտրում են այլ դեղատներում, դիմում են մասնավոր անձանց՝ ընդհուպ մինչեւ արտասահմանում բնակվող իրենց հարազատներին: Բնակիչ-սպառողների 30%-ը (2008թ.-ին՝ 14%) հակված է բժիշկի նշանակած եւ չճարվող դեղամիջոցը փոխարինել իր անալոգով: Այսպիսով, չնայած դեղերի գնման հարցում բնակիչ-սպառողների ինքնուրույնության մասնակի աճին, նրանք շարունակում են «գործել» բժիշկի խորհրդի շրջանակներում՝ ձգտելով ամեն գնով գտնել այն դեղը, որը նշանակել է բժիշկը:

5.2 Բժիշկների ՎԱՐՁԱԳՃԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բժիշկներն իրենց պատասխաններով հաստատել են բնակիչ-սպառողների բոլոր հայտարարությունները՝ կապված սպառողների կողմից դեղերի օգտագործման հարցում իրենց դեղակատարության հետ: Բժիշկների 61%-ը չի թաքցրել (2008թ.-ին՝ 62%), որ դեղատոմս դուրս գրելիս իրենք նշում են դեղի արտադրողի եւ ապրանքանշանի անունները: Ըստ որում 35%-ը դա անում է ոչ շատ հաճախ, իսկ 26%-ը՝ շատ հաճախ (6%-ը այդպես է վարչում միշտ): Բժիշկների 32%-ը հայտնել է, որ դեղատոմս դուրս գրելիս իրենք երբեք չեն նշում դեղի արտադրողի եւ ապրանքանշանի անունները: Եվս 7%-ը չեն կարողացել կամ չեն ցանկացել պատասխանել այն հարցին, թե դեղատոմս դուրս գրելիս իրենք նշու՞մ են արոյոք դեղի արտադրողի եւ ապրանքանշանի անունները:

Դեղատոմսեր դուրս գրելիս իրենց վարչագիծը բժիշկները բացատրում են այն փաստով, որ իրենց նպատակը միայն հաճախորդին ամենաորակյալ դեղամիջոցի մատնանշելն է: Ստորև ներկայացված են այն շարժառիթները, որոնք դեղատոմսեր դուրս գրելիս առաջնորդում են բժիշկներին:

Աղյուսակ 40 - Բժիշկների կողմից դեղատոմս դուրս գրելու շարժառիթները

Ծարժառիթներ	Մասնաբաժին	
	Սեմինարներին չմասնակցած բժիշկներ	Սեմինարներին մասնակցած բժիշկներ
Նշանակում են տվյալ հիվանդության դեմ ամենաարդյունավետ դեղերը՝ անկախ նրանց ծագումից կամ անալոգների թվից	75%	77%
Ելնում են հիվանդի տոցիալական կամ ֆինանսական վիճակից	10%	20%
Նշում են բոլոր անալոգների անունները, իսկ ընտրությունը թողնում են հաճախորդին	8%	10%
Նշանակում են այն դեղերը, որոնց մատակարարների կողմից խրախուսվում են (այդ թվում՝ դրամական)	3%	-
Ելնում են դեղամիջոցի գին/որակ համակցությունից	3%	-
Ելնում են դեղերի ծագումից (պիտի լինի ներմուծված)	3%	-
Ելնում են հիվանդի օրգանիզմի առանձնահատկություններից	1%	-
Ելնում են դեղերի ծագումից (պիտի լինի հայկական)	1%	-
Ելնում են դեղերի փորձված լինելուց	1%	3%
Ելնում են դեղերի մատչելի լինելուց	1%	7%

Նայելով ներկայացված տվյալներին, դժվար է պնդել, որ բժիշկներն իրենց պատասխաններում եղել են բացարձակ անկեղծ: Ինչպես եւ 2008թ.-ի հետազոտության ժամանակ, այս անգամ եւս դեղերի շուկայի մեծ թվով մասնակիցներ, այդ թվում արտադրողներ, դեղատների ներկայացուցիչներ եւ հենց իրենք՝ բժիշկները հայտնել են, որ բուժիմնարկներում շատ տարածված են դեղագործական արտադրանքի մատակարարների՝ ներմուծողների/արտադրողների եւ բժիշկների համագործակցության երեւոյթները: Համագործակցությունը կայանում է նրանում, որ իբր դեղագործական արտադրանքի մատակարարների կողմից բժիշկները խրախուսվում են, որպեսզի իրենց նշանակումներով եւ խորհուրդներով նպաստեն կոնկրետ «խրախուսողի» դեղամիջոցների վաճառքին: Ուշագրավն այն է, որ երբ որ բժիշկները խոսում են խրախուսման երեւոյթների մասին, իրենք նկատի ունեն ուրիշ բժիշկների եւ ոչ թե իրենց: Բժիշկների միայն 3%-ն է անկեղծորեն խոստովանել, որ իրենք խրախուսվում են դեղերի մատակարարների կողմից (տես Աղյուսակ 40):

Որպես խրախուսման ձեւեր՝ օրինակ են բերվում դրամական պարգևները: Ըստ բժիշկների, դեղերի ցանկացած մատակարարի համար այդ եղանակը Հայաստանի դեղերի շուկա մտնելու ամենաարդյունավետ միջոցն է: Ներկայումս հատկապես մեծ ակտիվություն են ցուցաբերում վրացական դեղերի մատակարարները, նման ոճի մեջ մշտապես աջքի են ընկնում Վորլդ Սեփիսինի ներկայացուցիչները: 2008թ.-ին բժիշկների պատասխաններից հակացվում էր, որ այդ հարցում գերակտիվ էին հատկապես ներմուծողները, սակայն 2011թ.-ին ներմուծողների եւ արտադրողների միջեւ առանձնապես մեծ տարբերություններ չի հայտնվել: Ըստ ամենայնի, հայկական դեղագործական ձեռնարկությունները եւս իրենց շուկայավարման գործիքների մեջ են ընդգրկել բժիշկների խրախուսման մեթոդը:

Ըստ մասնագետների, մատակարարների հետ գործարքի մեջ մտնող բժիշկները խախտում են մի շաբթ բարոյական նորմեր, քանի որ դեղն ուղղակի առնչություն ունի մարդկանց առողջության հետ, եւ այդ պատճառով բժիշկը պետք է նշանակի ամենաարդյունավետ դեղամիջոցը եւ ոչ թե այն, որի վաճառքից ինքը շահ ունի: Ի՞նչ հակափաստարկներ են բերում բժիշկները այս հայտարարություններին: Բժիշկների 8%-ը (2008թ.-ին՝ 4%-ը) նշել է, որ իրենք դեղատումնում նշում են մի քանի անալոգների անուններ, իսկ ընտրությունը թողնում են հաճախորդին: Նրանց 75%-ը (2008թ.-ին՝ 89%-ը), չհաստատելով, բայց եւ չմերժելով այն, որ իրենք հայտնվել են՝ դեղամիջոցների մատակարարների հետ, հայտնել է, որ իրենք իրենց հիվանդներին նշանակում են ամենաարդյունավետ եւ ամենաորակյալ դեղամիջոցները՝ անկախ դրանց ծագումից, գնից,

անալոգների առկայությունից: 2011թ. հետազոտության արդյունքները վկայում են, որ բժիշկների առևտության 10%-ը նշանակում է անելիս ելնում է հիվանդի սոցիալական վիճակից եւ վճարունակության աստիճանից: Սրանք հիմնականում պոլիկլինիկաներում աշխատող բժիշկներն են:

Այսպիսով՝ պետք է արձանագրել, որ առ այսօր Հայաստանի առողջապահության համակարգում առկա է այն երեւություն, երբ բուժիմարդության դեղերի մատակարարները (ներմուծողները եւ արտադրողները) բժիշկների հետ գտնվում են որոշակի համագործակցային հարաբերությունների մեջ, ինչը թույլ է տալիս վերջիններիս «ջանքերով» խթանել սեփական ապրանքների իրացումը: Հասկանալի պատճառներով միակ բանը, որ հնարավոր չէ գնահատել՝ դրա մասշտաբներն են:

5.3 ԴԵՂԱՏՆԵՐԻ ԱՃԽԱՑՈՂՆԵՐԻ ՎԱՐՁԱԳԾԻ ՈՐՈՇ ԱՌԱՋԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինչպես արդեն հասկացանք, բնակիչ-սպառողների համար դեղատների աշխատողները հանդիսանում են հայկական արտադրության դեղերի մասին տեղեկացվածության երկրորդ գլխավոր աղբյուրը (բժիշկներից հետո): Դեղատների աշխատողների կողմից տեղեկության փոխանցումը բնակիչ-սպառողներին ինքնանպատակ չէ. Նրանք բնակիչ-սպառողներին խորհուրդ են տալիս օգտագործել (գնել) այս կամ այն դեղամիջոցը, որի հետ միասին փաստորեն տեղեկություն են փոխանցում կոնկրետ դեղերի մասին: Այսպիսի ֆունկցիոնալ դերակատարությունը դեղատների աշխատողներին դարձնում է դեղերի շրջանառության գործընթացում երկրորդ կարեւոր դերակատարը (բժիշկներից հետո): Սա շատ լավ գիտեն նաև դեղերի մատակարարները (ներմուծողները եւ արտադրողները), որոնք, ինչպես բժիշկների դեպքում, դեղատների աշխատողների համար եւս մշակել են խրախուսման որոշակի մեթոդներ, որպեսզի խթանեն իրենց ապրանքների իրացումը դեղատների ցանցում: Այս դեպքում եւս դժվար է գնահատել այդ երեւությի մասշտաբները, սակայն որ այն առկա է՝ դա փաստ է:

Դեղատների աշխատողների վարչագիծը վերլուծելու համար մենք նրանց տվել ենք տրամաբանական շղթա կազմող մի շարք հարցեր: Դեղատների աշխատողների պատասխանները լավագույնս բնութագրում են այն դերակատարությունը, որը նրանք ունեն դեղերի իրացման (վաճառքի) հարցում:

Այլուսակ 41 - Դեղատներում դեղերի վաճառքի հարցում դեղատների աշխատողների վարչագիծը բնութագրող հարցերի պատասխանները

Դարձ.

Զեր դեղատան այցելուների ո՞ր մասն է Զեզանից խորհուրդ հարցնում, թե կոնկրետ հիվանդության դեմ ի՞նչ դեղամիջոց գնի կամ ո՞ր դեղամիջոցն է օգտակար

Պատասխաններ		Պատասխանողների մասնաբաժինը
1	Այցելուների մինչեւ 50%-ը խորհուրդ է հարցնում	15%
2	Այցելուների 50-75%-ը խորհուրդ է հարցնում	39%
3	Այցելուների 76-100%-ը խորհուրդ է հարցնում	34%
4	Ոչ ոք, բոլորը խնդրում են կոնկրետ դեղեր	1%
5	Դժվարացել են պատասխանել	11%
Ընդամենը		100%

Դարց 2.

Նեղերի ձեռքբերման հարցում Ձեզանից խորհուրդ հարցուող այցելուների ո՞ր մասն է հետեւում Ձեր խորհրդին [Դարց 1-ի առաջին 3 սողերի բաշխվածքը]

Պատասխաններ		Պատասխաննողների մասնաբաժինը
1	Այցելուների մինչեւ 50%-ը հետեւում է դեղատան աշխատողի խորհրդին	23%
2	Այցելուների 50-75%-ը հետեւում է դեղատան աշխատողի խորհրդին	36%
3	Այցելուների 76-100%-ը հետեւում է դեղատան աշխատողի խորհրդին	36%
4	Դժվարացել են պատասխաննել	5%
Ընդամենը		100%

Դարց 3.

Ճա՞ն են դեպքերը, երբ այցելուի մոտ եղած դեղատոմսում բժիշկը միանշանակ Աշել է, որ պարտադիր պետք է գնել այսինչ երկրի եւ այնինչ ապրանքանիշի դեղը

Պատասխաններ		Պատասխաննողների մասնաբաժինը
1	Գրեթե բոլոր դեղատոմսերն ել այդպիսի միանշանակ ուղղորդմամբ են	48%
2	Դեպքերի գրեթե կեսը	40%
3	Նման դեպքերը քիչ են	8%
4	Այդպիսի դեպքեր չկան	4%
Ընդամենը		100%

Դարց 4.

Եթե դեղատանը այցելուի ուզած դեղը չի լինում, այդ դեպքում ինչպե՞ս եք վարկում Դուք (դեղատների աշխատողները)

Պատասխաններ		Պատասխաննողների մասնաբաժինը
1	Դեղատների աշխատողները առաջարկում են դրա մեկ այլ անալոգ	92%
2	Դեղատների աշխատողները հուշում են, թե որտեղից է հիսարակոր այն ճարել	6%
3	Դեղատների աշխատողները ասում են չունենք եւ վերջ	2%
Ընդամենը		100%

Դարց 5.

Ինչպե՞ս են վարկում այցելուները, երբ Դուք (դեղատների աշխատողները) նրանց առաջարկում եք իրենց ուզած դեղամիջոցի անալոգը [Դարց 4-ի առաջին տողի բաշխվածքը]

Պատասխաններ		Պատասխաննողների մասնաբաժինը
1	Միանշանակ գնում են դեղատան աշխատողի խորհուրդ տված դեղամիջոցը	4%
2	Հիմնականում գնում են դեղատան աշխատողի խորհուրդ տված դեղամիջոցը	31%
3	Երբեմն գնում են, իսկ երբեմն՝ ոչ	57%
4	Հիմնականում չեն գնում են դեղատան աշխատողի խորհուրդ տված դեղամիջոցը	7%
5	Միանշանակ չեն գնում են դեղատան աշխատողի խորհուրդ տված դեղամիջոցը	1%
Ընդամենը		100%

Դարց 6. **Եթե՞ Ձեր դեղատանը առկա է այցելուի ուզած դեղի մի քանի անալոգ, Դուք (դեղատների աշխատողները) դրանք բոլորն ել առաջարկո՞ւմ եք, թե՞ ոչ**

Պատասխաններ		Պատասխանողների մասնաբաժինը
1	Բոլորն ել առաջարկում են	54%
2	Առաջարկում են այն, որը հարմար են գտնում	34%
3	Առաջարկում են՝ ելնելով հաճախորդի ֆինանսական վիճակից	5%
4	Դժվարացել են պատասխանել	7%
	Ընդամենը	100%

Դարց 7. **Կա՞ն արդյոք դեղեր, որոնց վաճառքից Դուք խրախուսվում եք (այդ թվում՝ դրամական)**

Պատասխաններ		Պատասխանողների մասնաբաժինը
1	Այո	14%
2	Ոչ, բայց կցանկանային, որ խրախուսվեն	20%
3	Ոչ, եւ չեն ցանկանա, որ խրախուսվեն	58%
4	Ոչ, եւ դժվարացել են պատասխանել, թե կուգեի՞ն արդյոք խրախուսվել	8%
	Ընդամենը	100%

Արձանագրելով այս, որ դեղատների աշխատողները եւս մասնակից են դեղեր գնելու բնակիչ-սպառողների որոշման կայացմանը, մենք փաստում ենք, որ այդ հարցում նրանց եւ բժիշկների շահերը որոշակիորեն բախվում են: Խնդիրը կայանում է նրանում, որ բնակիչ-սպառողների մեծ մասը (տես Այլուսակ 41, Դարց 3), որոնք դեղատուն են այցելում բժիշկի կողմից դուրս գրված դեղատումսով, հստակ ուղղողոված են. Նրանց ասվել է, որ **պետք է գնեն միայն այսինքն երկրի կամ արտադրողի արտադրության դեղամիջոցը**, որը բացառում է այն անալոգով փոխարինելու հևարավորությունը: Դեղատների աշխատողների 48%-ը (2008թ.-ին՝ 18%-ը) հայտնել է, որ բժիշկների մոտից եկած **բողոք** հաճախորդներն ել հստակ ուղղողոված են, իսկ 40%-ը (2008թ.-ին՝ 76%-ը) հայտնել է, որ այդ երեւույթը կարելի է հանդիպել **ամեն երկրորդ** հաճախորդի դեպքում: Դեղատների աշխատողները համաձայն չեն այդպիսի դրվագի հետ՝ երկու պատճառներով.

- 1) Եթե բժիշկների նշանակած դեղամիջոցը նրանց դեղատանը չկա, ապա բնակիչ-սպառողների մեծ մասը նախընտրում է այն գնել ուրիշ տեղից: Ոչ բոլոր բնակիչ-սպառողներն են պատրաստ բժիշկի նշանակած դեղամիջոցը փոխարինել անալոգ դեղամիջոցով (Այլուսակ 41, Դարց 5);
- 2) Թանի որ բժիշկների կարծիքը (խորհուրդը կամ երաշխավորությունը) բնակիչ-սպառողների համար ավելի ծանրակշիռ եւ հեղինակավոր է, ապա դեղատների աշխատողները մեծ մասամբ գրկվում են բնակիչ-սպառողների վրա ազդեցությունից եւ հետեւաբար՝ այդ իրավիճակից օգուտ քաղելու հնարավորությունից:

Բժիշկների եւ դեղատների աշխատողների շահերի բախման խնդիրը որոշ հնարագետներ կարողացել են լուծել: Դավանաբար, դեղերի մատակարարի (Ներմուծողների կամ արտադրողների) նախաձեռնությամբ ստեղծվել են ընդիանուր շահերով իրար կապված եռանկյունիներ՝ «դեղերի մատակարարներ + բժիշկներ + դեղատների աշխատողներ» կազմով: Այսուհետեւ խնդիրը լուծվում է հետեւյալ կերպ. **բժիշկն իր դեղատումսում հստակ նշում է ոչ միայն դեղամիջոցի անունը (երկիրը, արտադրողը), այլ նաև այն դեղատան հասցեն, որտեղից հաճախորդը պետք է գնի դեղամիջոցը:** Դեղերի իրացման այս սցենարը հանգեցնում է այն ենթադրությանը, որ այդ գործընթացում դեղատների աշխատողները նույնպես պետք է բժիշկների

Նման ունենան որոշակի շահագրգռվածություն: Դա հաստատվում է դեղատների աշխատողների երկու պատասխաններով.

- 1) Դեղատների աշխատողների 34%-ը (2008թ.-ին՝ 20%-ը) հայտարարել է, որ որոշ դեղամիջոցների դեպքում անալոգների առկայության պայմաններում իրենք առաջարկում են միայն մեկը՝ որը որ իրենք հարմար են գտնում (տես Աղյուսակ 41, Հարց 6);
- 2) Դեղատների աշխատողների առնվազն 14%-ը (2008թ.-ին՝ 21%-ը) հաստատել է, որ կան դեղամիջոցներ, որոնց վաճառքից իրենք դրամական խրախուսում են ստանում այդ դեղերի մատակարարներից: Դեղատների աշխատողների 20%-ը պատրաստ է դրամական խրախուսման դիմաց համագործակցել դեղերի մատակարարների հետ (տես Աղյուսակ 41, Հարց 7): Մենք Ենթադրում ենք, որ այս թվերն իրականում ավելի մեծ են, քանի որ կան դեղատների աշխատողներ, որոնք «համագործակցում են» դեղերի մատակարարների հետ, սակայն թաքցրել են դա:

Այսպիսով, դեղատների աշխատողների մի մասը, բժիշկների նման, եւս ներգրավված է դեղամիջոցների վաճառքների խթանման գործընթացներին, հանդես գալով որպես շահագրգիռ եւ կողմանակալ կողմեր:

6 ՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԸ «ԱՌՈՂՋ ԱԶԳ, ԱՌՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ՔԱՐՈՉԱՐՃԱՎԻ ՄԱՍԻՆ

Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավը հայկական դեղագործական արտադրանքի ճանաչվածության բարձրացման տեսանկյունից լուրջ արդյունքներ է ապահովել: Նման եզրահանգումը կառուցված է այն տարրերությունների վրա, որոնք առկա են քարոզարշավի սեմինարներին մասնակցած բժիշկների եւ դեղերի մյուս բոլոր օգտագործողների միջև: Մի կողմից շատ դժվար է գնահատել, թե որքանով են այդ տարրերությունները պայմանավորված «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի միջոցառումներով: Մյուս կողմից փաստ է, որ սույն հետազոտության մեջ քննարկված հարցերի մասով քարոզարշավի սեմինարներին մասնակցած բժիշկների մոտ ցուցանիշներն ավելի բարձր են եւ դրական՝ հօգուտ հայկական արտադրության դեղերի: Դրանում համոզվելու համար մեկ անգամ եւս կարելի անդրադառնալ այն բոլոր տվյալներին, որոնք ներկայացված են հետեւյալ աղյուսակներում եւ նկարներում:


1. Հայկական արտադրության դեղերի ճանաչվածությունը, տես Աղյուսակ 8, Էջ 16;
2. Հայկական արտադրության դեղերի մասին տեղեկացվածության աղբյուրների կազմը, տես Նկար 3 (Էջ 20) եւ Նկար 4 (Էջ 21);
3. Հայկական դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածությունը, տես Աղյուսակ 16, Էջ 24;
4. Հայկական դեղագործական ձեռնարկությունների մասին տեղեկացվածության աղբյուրների կազմը, տես Աղյուսակ 20 (Էջ 28) եւ Աղյուսակ 21 (Էջ 29);
5. Դեղերի ծագման կարեւորությունը, տես Աղյուսակ 29, Էջ 38;
6. Դեղերին բնորոշիչներին տրված գնահատականները, տես Նկար 12, Էջ 44;
7. Դեղատոմսեր դուրս գրելու շարժառիթները, տես Աղյուսակ 40, Էջ 51:

Չնայած «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի ապահոված դրական արդյունքին, պետք է արձանագրել, որ այդ լայնածավալ միջոցառումը առանձնապես մեծ արձագանք եւ ճանաչվածություն չի ունեցել դեղերի մյուս օգտագործողների շրջանում: Դա ակնհայտ է ստորև բերված տվյալներից:

Նկար 16 - Բնակիչ-սպառողների

տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին

- Լսել են քարոզարշավի միջոցառումների մասին
- Չեն լսել քարոզարշավի միջոցառումների մասին




Աղյուսակ 42 - Բնակիչ-սպառողների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները

Քարոզարշավի միջոցառումները	%
Հեռուստահաղորդումներ	48%
Սեմինարներ	18%
Հեռուստատեսային նորություններ	16%
Հեռուստագովազդ	11%
Բացման արարողություն՝ «Գոյրեն թյուկիփ» հյուրանոցում	6%
Հոդվածներ թերթերում	6%
Ծանոթեր	5%
Մարզային միջոցառում Կանաձորում	3%
Հոդվածներ ինտերնետում	2%
Տեղեկություններ «Facebook» սոցիալական ցանցում	2%
Մարզային միջոցառում Գյումրիում	2%
Բրոյյուրներ	2%
Գովազդային պաստառներ	2%

Բնակիչ-սպառողների 60%-ը չի կարողացել պատասխանել, թե ինչ տպավորություններ է ստացել քարոզարշավի այս միջոցառումներից, որոնց նրանք ծանոթ են: Բնակիչ-սպառողների համար հիշարժան եւ շատ թե քիչ տպավորված միջոցառումները եղել են քարոզարշավի մասին պատմող հեռուստահաղորդումները (9%) եւ սեմինարները (9%): Վերջինիս բավարար ճանաչվածությունը պայմանավորված է նրանով, որ հարցված բնակիչ-սպառողների մեջ եղել են նաեւ առողջապահության ոլորտի աշխատակիցներ, որոնք անձամբ մասնակցել են այդ սեմինարներին կամ դրանց մասին լսել են իրենց ծանոթներից:

«Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին սակավ տեղեկություններ ունեն նաեւ այս բժիշկները, որոնք չեն մասնակցել դրա միջոցառումներին.

Նկար 17 - Սեմինարներին չմասնակցած բժիշկների տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին




Աղյուսակ 43 - Սեմինարներին չմասնակցած բժիշկների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները

Քարոզարշավի միջոցառումները	%
Հեռուստահաղորդումներ	20%
Մարզային միջոցառում Գյումրիում	20%
Բացման արարողություն՝ «Գոլդեն Թյուլիփ» հյուրանոցում	10%
Սեմինարներ	10%
Ընդրանութենական համաժողովներ (?)	10%
Սոցիալական համաժողովներ (?)	10%

(?) - Անհասկանալի է, թե ինչ նկատի ունեն

Այս փոքր թվով բժիշկները, որոնք լսել են քարոզարշավի միջոցառումների մասին, դժվարացել են որեւէ կերպ գնահատական տալ իրենց ծանոթ միջոցառումներին: Զգացվում է, որ նրանց տեղեկություններն այդ միջոցառումների մասին մակերեսային է, իսկ տպավորությունները՝ սակավ: Նման իրավիճակ է նաեւ դեղատների աշխատողների դեպքում:

Նկար 18 - Դեղատների աշխատողների տեղեկացվածությունը «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի մասին



Աղյուսակ 44 - Դեղատների աշխատողների շրջանում հայտնի քարոզարշավի միջոցառումները

Քարոզարշավի միջոցառումները	%
Մամլո ասուլիսներ	53%
Հեռուստահաղորդումներ	18%
Հոդվածներ թերթերում	18%
Հոդվածներ ինտերնետում	12%
Հեռուստատեսային նորություններ	6%
Հեռուստագովազում	6%
Բացման արարողություն՝ «Գոլդեն Թյուլիփ» հյուրանոցում	6%
Մարզային միջոցառում Վասածորում	6%

Դեղերի օգտագործողների շրջանում «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի միջոցառումների ցածր հանրային ճանաչվածությունը չի կարող գնահատական լինել այդ միջոցառումների արդյունավետությանը: Վերջինս գնահատելու համար պետք է հիմնվել **այն թիրախային խմբի արձագանքների վրա**, որոնց անմիջականորեն միտված են եղել այդ միջոցառումները: Խոսքը, մասնավորաբես, գնում է բժիշկների այն խմբի մասին, որոնք որ հնարավորություն կամ առիթ են ունեցել մասնակցելու այդ միջոցառումներին կամ տարբեր աղբյուրներից տեղեկություններ են ստացել դրանց մասին: Այդպիսի բժիշկների մի փոքր խումբ (թվով 30 հոգի) հարցումներին են ենթարկվել սույն հետազոտության շրջանակներում: Ստորև ներկայացված է վիճակագրություն, թե որ միջոցառումներին են նրանք մասնակցել, ինչպես նաև նրանց գնահատականները՝ կապված հայկական արտադրության դեղերի ճանաչվածության բարձրացման հարցում այդ միջոցառումների արդյունավետության հետ:

Աղյուսակ 45 - Սեմինարներին մասնակից բժիշկների կողմից մասնակցություն բերված միջոցառումները եւ դրանց արդյունավետության գնահատականները

Քարոզարշավի միջոցառումները	Մասնակիցների մասնաբաժինը	Արդյունավետության գնահատականը*, որտեղ՝ 5 = Շատ արդյունավետ 1 = Ոչ արդյունավետ
Բացման արարողություն՝ Գոլդեն Թյուլիփ հյուրանոցում	40%	3.9
Մարզային միջոցառում Վանաձորում	30%	4.0
Մարզային միջոցառում Գյումրիում	27%	3.6
Սեմինարներ	17%	4.1
Հեռուստագովազդ	10%	3.5
Հարցազրույցներ	10%	3.5
Հոդվածներ ինտերնետում	10%	3.7
Հեռուստատեսային նորություններ	7%	3.6
Հեռուստահաղորդումներ	3%	3.8
Մամլո ասուլիսներ	3%	3.7
Հոդվածներ թերթերում	3%	3.8
Տեսանյութեր YouTube-ում	3%	4.3
Ընորհանդես	3%	n/a

(*) - Հայկական դեղագործական արտադրանքի ճանաչվածության բարձրացման տեսանկյունից

Աղյուսակ 46-ի տվյալներից կարելի է հասկանալ, որ առավել մասսայականություն են ունեցել հանրային միջոցառումները (բացման արարողություններ, շնորհանդեսներ, սեմինարներ), որոնք ենթադրում են մասնակիցների ֆիզիկական ներկայությունը: Դրանք նաև հիշարժան են, ինչպես նաև արժանացել են համեմատաբար բարձր գնահատականի: Զարողարշավի այն գործողությունները, որոնք միտված են եղել միջոցառումների լուսաբանմանը, ավելի քիչ հանրահայտ են, քանի որ ոչ բոլոր բժիշկներն են հանդիսանում ՉԼՍ-ների միջոցով, հեռուստատեսությամբ կամ ինտերնետով սփուզող տեղեկատվության սպառող:

Առավել կարեւոր է այն հարցը, թե ինչ հետեւություններ են արել իրենց բժիշկները՝ մասնակցելով «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի միջոցառումներին: Ուրախալի է փաստել, որ բժիշկների մի մասը շատ ավելի լոյալ են դարձել հայկական արտադրության դեղերի նկատմամբ: Նրանց մեծ մասը (43%) հայկական արտադրության դեղերը սկսել է դիտել որպես ներմուծված դեղերին այլընտրանք, 10%-ը իր նախընտրություններում անցել է հայկական դեղերի կողմը,

Նույնքան բժիշկների մոտ ավելացել է հայկական դեղերի նկատմամբ վստահությունը (տես Աղյուսակ 46)։

Աղյուսակ 46 - Քարոզարշավի միջոցառումների արդյունքում սեմինարներին մասնակից բժիշկների շրջանում հայկական արտադրության դեղերի ընկալումների փոփոխությունները

Արձանագրված փոփոխություններ	Մասնաբաժին
Քարոզարշավից հետո բժիշկները սկսել են հիվանդներին առաջարկել ինչպես ներմուծված, այսպես ել տեղական արտադրության դեղեր	43%
Քարոզարշավից հետո բժիշկներն իրենց նախապատվությունը միանշանակորեն տալիս են հայկական դեղերին	10%
Քարոզարշավից հետո բժիշկներն ավելի լուրջ եւ վստահությամբ եմ վերաբերվում հայկական դեղերին	10%
Քարոզարշավից հետո բժիշկների նախընտրություններում փոփոխություն չի եղել	7%
Քարոզարշավից հետո բժիշկները նախկինի պես նախընտրում եմ միայն ներմուծված դեղերը	7%
Դժվարացել են պատասխանել	23%
Ընդամենը	100%

Այսպիսով՝ կարելի է արձանագրել, որ «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավն ապահովել է իր մասնակիցների շրջանում հայկական արտադրության դեղերի եւ դեղագործական ձեռնարկությունների ճանաչվածության աճ եւ ավելի բարենպաստ վերաբերմունք։ Սակայն գլխավոր ձեռքբերում ենք համարում այն բժիշկների դիրքորոշման փոփոխությունը, որոնք իրենց նախընտրությունները սկսել են տալ հայկական արտադրության դեղերին։ Իսկ թե ինչ է նշանակում բժիշկների այդ դիրքորոշումը բնակիչ-սպառողների (դեղերի օգտագործողների ամենամեծ խմբի) համար՝ մենք արդեն հասկացել ենք վերը բերված վերլուծության մեջ։

7 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

7.1 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՄԵՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱՆԻՃՆԵՐԻ ԴԻՆԱՄԻԿԱՆ

Հայաստանում դեղերի արտադրության բնագավառը ներկայացված է 17 ձեռնարկություններով: Դա **դեղերի արտադրության լիցենզիա** ունեցող ձեռնարկությունների թիվն է: Սակայն բնակչության եւ պրոֆեսիոնալ հանրության (բժիշկներ եւ դեղատների աշխատողներ) շրջանում դեղագործության բնագավառի ձեռնարկություններ են ընկալվում նրանք, **ովեր իրենց արտադրանքն իրացնում են դեղատների ցանցում:** Մասնավորապես դեղերի արտադրության լիցենզիա ունեցող հետեւյալ ընկերությունները՝ Վրեսիկում+ (արտադրանքը՝ Վրմենիկում), Լիզին (արտադրանքը՝ բժշկական սպիրտ 70% կամ 96%), Լեյկոալեքս (արտադրանքը՝ Կոշտուկային սպեղանի (Corn plaster)), որպես դեղագործական ձեռնարկություններ, չեն հիշատակվել բժիշկների եւ դեղատների աշխատողների կողմից: Մինչեւ Վիտամաքս-Ե-ն (արտադրանքը՝ կենսաակտիվ հավելումներ, մրգերի լիոֆիլացված փոշիներ), չոր կաթնաթթվային մակարդներ), Վնաշռամը (արտադրանքը՝ դեղաբույսեր), Հագենասը (արտադրանքը՝ կենսաակտիվ հավելումներ) չունեն դեղերի արտադրության լիցենզիա, սակայն ընկալվում են որպես դեղագործական ձեռնարկություններ: Սույն հետազոտության մեջ մենք կողմնորոշվել ենք բժիշկների եւ դեղատների աշխատողների ընկալումներով եւ որպես թիրախն ենք ընտրել այն ձեռնարկություններին, որոնք իրենց արտադրանքն իրացնում են առողջապահական հաստատություններում (հիվանդանոցներում) եւ դեղատների ցանցում:

Ծառ թե քիչ ճանաչված նման ձեռնարկությունների թիվը 14-15-ն է, որը մոտավորապես նույնն է, ինչ 2008թ.-ին: 2008-2011թթ.-ին դեղագործական ձեռնարկությունների կազմը նոր մասնակիցներով չի համարվել: Նկատի ունենալով ձեռնարկությունների ոչ մեծ թիվը, մենք որոշել ենք ձեռնարկությունների հետազոտության մեջ ներառել նրանց բոլորին: Սակայն տարբեր պատճառներով դա հնարավոր չի եղել: Արդյունքում հետազոտությունն իրականացվել է 9 ձեռնարկությունների հիման վրա: Խոշոր ձեռնարկություններից այդ ցանկում չեն հայտնվել միայն Էսկուլապը եւ Ֆարմատեկը, որոնց դեկավարները պատրաստ չեն բաց ներկայացման եւ հաղորդակցության:

Ստորեւ ներկայացված են հայկական դեղագործական ձեռնարկությունների գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշների դիևամիկան 2008-2011թթ.-ին: Նախքան այդ ցուցանիշների հիման վրա դատողություններ անելը պետք է մեկ անգամ եւս հիշել, որ դիտարկված ժամանակահատվածը համընկնում է համաշխարհային ֆինանսատեսական ճգնաժամի ամենասուր դրսերորման փուլի (2008թ. աշուն-2009թ.) հետ: Այդ ճգնաժամը խիստ ծանր հետեւանքներ է ունեցել Հայաստանի տնտեսության վրա. 2009թ.-ին արձանագրվել է ՀՆԱ-ի 14.4% անկում, արտահանումը կրճատվել է 30%-ով, աղքատությունը աճել է՝ հասնելով 34.1%-ի:

Մեկ կարեւոր հանգամանք եւս: Արդեն սշվեց, որ հետազոտության անցկացման համար ոչ բոլոր ձեռնարկություններն են պատրաստակամություն հայտնել տրամադրել իրենց գործունեության ցուցանիշները: Սակայն նրանք կարող են ստանալ եւ օգտագործել սույն հաշվետվության տվյալները: Ուստի մենք որոշել ենք ձեռնարկությունների գործունեության ցուցանիշները ներկայացնել ոչ թե բացարձակ թվերով, այլ դրանց փոփոխությունները բնութագրող գործակիցներով կամ տոկոսներով: Դրանով մենք համագործակցության համար ոչ պատրաստ ձեռնարկություններին զրկել ենք հանրության առաջ ավելի բաց ձեռնարկությունների մասին արժեքավոր տեղեկատվություն ստանալու հնարավորությունից:

1. Արտադրանքի ԻՐԱՑՄԱՆ ծավալների փոփոխությունը

Դեղագործական ձեռնարկություններ	2009			2010		
	Իրացման ծավալի ռեյտինգը	Իրացման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Աճ (↑) Ասկոփոխ (=) Նվազում (↓)	Իրացման ծավալի ռեյտինգը	Իրացման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Աճ (↑) Ասկոփոխ (=) Նվազում (↓)
Լիկոր	1	20%	↑	1	33%	↑
Արփիմեդ	3	6%	↑	3	28%	↑
Երեւանի ԶԴՖ	2	3%	↑	2	4%	↑
Վիտամաքս-Ե	5	-9%	↓	5	-36%	↓
Մեղիքալ-Յորիզոն	6	50%	↑	7	0%	=
Յագենաս	4	100%	↑	4	100%	↑
Բիզոն-1-1	8	163%	↑	8	-10%	↓
ՆՕԲԻ	7	25%	↑	6	40%	↑
Ինսի	9	40%	↑	9	36%	↑

2. Իրացման բաշխվածքն ըստ ՆԵՐՁԻՆ ՇՈՒԿԱ vs. ԱՐՏԱՀԱՆՈՒՄ

Դեղագործական ձեռնարկություններ	2008			2009			2010		
	Ներքին շուկա	Արտա- հանում	Իրացման միտվա- ծությունը	Ներքին շուկա	Արտա- հանում	Իրացման միտվա- ծությունը	Ներքին շուկա	Արտա- հանում	Իրացման միտվա- ծությունը
Լիկոր	70%	30%	▼	70%	30%	▼	65%	35%	▼
Արփիմեդ	70%	30%	▼	70%	30%	▼	65%	35%	▼
Երեւանի ԶԴՖ	39%	61%	▲	41%	59%	▲	43%	57%	▲
Վիտամաքս-Ե	60%	40%	▼	70%	30%	▼	70%	30%	▼
Մեղիքալ-Յորիզոն	-	100%	▲	-	100%	▲	40%	60%	▲
Յագենաս	80%	20%	▼	70%	30%	▼	50%	50%	▲
Բիզոն-1-1	88%	12%	▼	33%	67%	▲	37%	63%	▲
ՆՕԲԻ	20%	80%	▲	20%	80%	▲	20%	80%	▲
Ինսի	90%	10%	▼	80%	20%	▼	80%	20%	▼

որտեղ՝

- ▼ - հիմնականում **ԱԵՐՁԻՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԻՐԱՑՄՈՂ ՃԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**
- ▲ - հիմնականում **ԱՐՏԱՀԱՆՈՂ ՃԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

3. ԱՐՏԱՐԱՆՍՎԱՆ ծավալների փոփոխությունը

Դեղագործական ձեռնարկություններ	2009			2010		
	Արտահանման ծավալի ռեյտինգը	Արտահանման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Արտահանման ծավալի փոփ. Աճ (↑) Անփոփ (=) Նվազում (↓)	Արտահանման ծավալի ռեյտինգը	Արտահանման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Արտահանման ծավալի փոփ. Աճ (↑) Անփոփ (=) Նվազում (↓)
Լիկոր	2	20%	↑	2	56%	↑
Արփիմեն	3	6%	↑	4	50%	↑
Երեւանի ԶԴՖ	1	-1%	↓	1	1%	↑
Վիտամաքս-Ե	6	-32%	↓	7	-36%	↓
Մեղիքալ-Յորիզոն	4	50%	↑	6	-40%	↓
Հագենաս	5	200%	↑	3	233%	↑
Բիզոն-1-1	8	+ 15 անգամ	↑	8	-15%	↓
ՆօքԻ	7	25%	↑	5	40%	↑
Ինսի	9	180%	↑	9	36%	↑

4. Արտահանման ԵՐԿՐՄԵՐԸ ԵՒ ՊՐԱՆՑ Առաջին 10-ՆՅԱԿԸ (Ըստ պաշտոնական վիճակագրության)

Արտահանման ընդհանուր ցուցանիշները ↓	2007	2008	2009
Արտահանման երկրների թիվը	26	20	17
Արտահանման ծավալը, հազ. ԱՄՆ դոլար	3,080.0	3,658.7	3,849.0
Արտահանման ծավալում առաջին 10 երկրների մասնաբաժինը	92.9%	98.6%	99.4%

Արտահանման երկրներ	2008			2009		
	Արտահանման ծավալի ռեյտինգը	Արտահանման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Արտահանման ծավալի փոփ. Աճ (↑) Անփոփ (=) Նվազում (↓)	Արտահանման ծավալի ռեյտինգը	Արտահանման ծավալի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	Արտահանման ծավալի փոփ. Աճ (↑) Անփոփ (=) Նվազում (↓)
Վրաստան	1	34%	↑	1	28%	↑
Ուսւաստան	2	-3%	↓	2	-18%	↓
Ուզբեկստան	4	15%	↑	3	41%	↑
Բելառուս	3	135%	↑	4	-69%	↓
Ուկրաինա	5	67%	↑	5	2%	↑
Ղազախստան	6	+ 49 անգամ	↑	6	100%	↑
Տաջիկստան	7	(*)	↑	7	327%	↑
Մոլդովա	9	-76%	↓	8	578%	↑
Գերմանիա	10	-68%	↓	9	916%	↑
Բելգիա	8	850%	↑	10	207%	↑
Այլ երկրներ	11-20	-77%	↓	11-17	-54%	↓

(*) - 2007թ.-ին Տաջիկստան դեղագործական արտադրանք չի արտահանվել

5. ԱՃԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԻ ՓՈՓԻԽՈՒԹԵՅՈՒՆԸ

Դեղագործական ձեռնարկություններ	2009			2010		
	Աշխատողների թվի ռեյտինգը	Աշխատողների թվի փոփիխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Աշխատողների թվի փոփիխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Աշխատողների թվի ռեյտինգը	Աշխատողների թվի փոփիխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Աշխատողների թվի փոփիխու- թյունը նախորդ տարվա համեմատ
Լիկվոր	2	0%	=	2	0%	=
Վրիհմեղ	3	13%	↑	3	14%	↑
Երեւանի ԶԴՖ	1	0%	=	1	0%	=
Վիտամաքս-Ե	4	21%	↑	4	27%	↑
Մեղիքալ-Հորիզոն	7	5%	↑	7	0%	=
Յագենաս	5	-4%	↓	5	-13%	↓
Բիզոն-1-1	8	0%	=	9	-10%	↓
ՆՕԶԻ	6	0%	=	6	0%	=
Ինսի	9	14%	↑	8	63%	↑

6. ՄԱՐԿԵՏԻՆԳԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ ԵՒ ԴՐԱՆՑ Աշխատողների թվի ՓՈՓԻԽՈՒԹԵՅՈՒՆԸ

Դեղագործական ձեռնարկություններ	Մարկետինգային ստորաբաժանման առկայությունը, 2010թ.		Մարկետինգային ստորաբա- ժանման աշխատողների թվի փոփիխությունը (2010թ.-ը 2008թ.-ի համեմատ)	Աշխատողների թվի . . . Աճ (↑) Անփոփիխ (=) Նվազում (↓)
	Այո	Ոչ		
Լիկվոր	X		167%	↑
Վրիհմեղ	X		0%	=
Երեւանի ԶԴՖ		X	-	
Վիտամաքս-Ե	X		(*)	↑
Մեղիքալ-Հորիզոն	X		33%	↑
Յագենաս	X		0%	=
Բիզոն-1-1		X	-	
ՆՕԶԻ		X	-	
Ինսի		X	-	

(*) - 2008թ.-ին Վիտամաքս-Ե-ն առանձին մարկետինգային ստորաբաժանում չի ունեցել

7. ՄԱՐԿԵՏԻՆԳԻ ԲՅՈՒՋԵԻ ՓՈԽԻԽՈՒԹՅՈՒՆԸ

Դեղագործական ձեռնարկություններ	2009			2010		
	Մարկետինգա- յին ծախսերի ռեյտինգը	Մարկետինգի բյուջեի փոփոխիխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Մարկետինգի բյուջեի փոփոխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Մարկետինգա- յին ծախսերի ռեյտինգը	Մարկետինգի բյուջեի փոփոխիխու- թյունը նախորդ տարվա համեմատ	Մարկետինգի բյուջեի փոփոխու- թյունը նախորդ տարվա համեմատ
Լիկոր	2	0%	=	2	1%	↑
Արփիմեդ	3	14%	↑	3	13%	↑
Երեւանի ԶԴՖ	n/a	-		n/a	-	
Վիտամաքս-Ե	n/a	-		5	-	
Մեղքալ-Հորիզոն	4	33%	↑	4	63%	↑
Հագենաս	1	400%	↓	1	150%	↑
Բիզոն-1-1	n/a	-		n/a	-	
Նօրի	n/a	-		n/a	-	
Ինսի	5	-		6	33%	↑

Հայկական դեղագործական ձեռնարկությունների գործունեության հիմնական ցուցանիշների 2008-2010թթ. դինամիկան բնութագրող հիմնական եզրահանգումներն են.

- 1) Չայած համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամին, դեղագործության բնագավառի հայկական ձեռնարկությունները ապահովել են գործունեության տպավորիչ արդյունքներ: Հիմնական խոշոր ձեռնարկությունների իրացումները, բացառությամբ Վիտամաքս-Ե-ի, աճել են: Համեմատաբար խոշոր ձեռնարկությունների կազմի մեջ մտնելու լուրջ հայտ է ներկայացրել Հագենասը:
- 2) 2010թ.-ի արդյունքներով հետազոտված 9 ձեռնարկություններից 5-ի իրացումներում գերակշռում է արտահանումը:
- 3) Հետազոտված ձեռնարկություններից միայն Վիտամաքս-Ե-ի մոտ է նկատվում արտահանման ծավալների անկման միտում: Մյուս բոլոր ձեռնարկություններում առկա է հարաբերական կայունություն կամ արտահանման ծավալների աճ: Վերջին խմբի մեջ են մտնում նաեւ բնագավառի առաջատար ձեռնարկությունները՝ Լիկորը եւ Արփիմեդը:
- 4) Համաձայն պաշտոնական տվյալների, համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի տարիներին Հայաստանի դեղագործական արտադրանքի արտահանումն ավելացել է (2007-2009թ.-ին՝ 25%-ով): Նկատվում է արտահանման շուկաների կենտրոնացում: Հայկական դեղերի գլխավոր 3 շուկաներն են Վրաստանը, Ռուսաստանը եւ Ուզբեկստանը: Արտահանման աճի ցուցանիշով դեղագործության բնագավառը միանշանակ առանձնանում է Հայաստանի տնտեսության ճյուղերի մեջ:
- 5) 9 դեղագործական ձեռնարկությունների հետազոտության արդյունքներով, 2008-2010թթ.-ին բնագավառի աշխատողների թիվը աճել է 7%-ով: Նշված ձեռնարկություններից միայն 2-ում (Հագենաս, Բիզոն-1) է արձանագրվել աշխատողների թվի կրծատում:
- 6) Հետազոտված 9 ձեռնարկություններից 6-ն իրենց արտադրանքի իրացումը կազմակերպում են առանձին մարկետինգային ստորաբաժանումների միջոցով: 2008-2010թթ.-ին նշված բոլոր 6 ձեռնարկություններում աճել է կամ նույն է մնացել մարկետինգային ստորաբաժանման աշխատողների թիվը, բոլորի մոտ աճել է մարկետինգային ծախսերի բյուջեն:

7.2 ԴԵՂԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ԱՌՈՂՋ ԱՉԳ, ԱՌՈՂՋ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ» ԲԱՐՈԶԱՐՃԱՎԻ ՄԱՍԻՆ

«Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի վերաբերյալ դեղագործական ձեռնարկությունների գնահատականներն ընդհանուր առմամբ դրական են, սակայն ոչ միանշանակ: Ձեռնարկությունների դեկավարներից կարելի է հասկանալ, որ քարոզարշավի գլխավոր ձեռքբերում պետք է համարել հետեւյալը.

! Առաջին անգամ բնակչությանը եւ պրոֆեսիոնալ հանրությանը ներկայացվեց ոչ թե առանձին վերցրած մի ձեռնարկություն, այլ բնագավառի գրեթե բոլոր ներկայացուցիչները (արտադրողները), ինչը հրաշալի պատկերացում ստեղծեց հայկական դեղագործական ինդուստրիայի մասին: Նման հրապարակային միջոցառումներն ունեն նաև հոգեբանական ազդեցություն՝ առ այս, որ միայն հզոր եւ «ցույց տալու բան ունեցող» ձեռնարկությունները կարող են իրենց թույլ տալ նման հանդիսավորությամբ ներկայանալ հանրությանը:

Մյուս կողմից դեղագործական ձեռնարկությունների համար «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավը չի համարվում բացառիկ եւ յուրահատուկ շուկայավարման քայլ: Նրանցից յուրաքանչյուրը առանձին-առանձին իրականացնում են այս միջոցառումների մեծ մասը, որոնք ներառված են քարոզարշավի ծրագրում: Խոսքը գնում է բժիշկների շրջանում տեղեկատվական ակցիաների եւ շնորհանդեսների, հեռուստատեսային հաղորդումների մասին:

Համաձայն դեղագործական ձեռնարկությունների դեկավարների, որոնք անդամակցում են Դեղագործողների եւ Ներմուծողների միությանը (ԴԱՍ Միություն), «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավը կարող է լավ ուղեցույց հանդիսանալ հենց ԴԱՍ Միության համար: Այսինքն, եթե հայկական դեղագործական ձեռնարկությունները ցանկանում են միասին իրականացնել որեւէ լայնածավալ տեղեկատվական միջոցառում, ապա դա կարելի է անել ԴԱՍ Միության միջոցով եւ «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավի ձեւաչափով:

Ընդհանուր առմամբ համաձայն դեղագործական ձեռնարկությունների դեկավարները չունեն օբյեկտիվ հիմքեր, որպեսզի գնահատեն իրենց ձեռնարկությունների համար քարոզարշավից հևարավոր օգուտները կամ ձեռքբերումները: Քարոզարշավից շատ ժամանակ չի անցել (3-4 ամիս) եւ դժվար թե դրա հևարավոր արդյունքները այսպիսի կարծ ժամանակահատվածում հասցնեին նյութականանալ: Յնարավոր ազդեցությունը հասկանալու համար հարկավոր է իրականացնել ավելի երկարատեւ միևնույնականացնել:

8 ԱՄՓՈՓՈՒՄ

8.1 ԵԶՐԱՅԱՆԳՈՒՄՆԵՐ

Սույն հետազոտությունն ապահովել է 2 կարեւոր արդյունքներ. ա) 2011թ. սկզբի դրությամբ օգտագործողների շրջանում հայկական արտադրության դեղերի ընկալման եւ վերաբերմունքի վերաբերյալ շուկայական տեղեկություններ, եւ բ) 2008-2011թթ.-ի ժամանակահատվածում հայկական արտադրության դեղերի ընկալման եւ վերաբերմունքի փոփոխությունը (դիևամիկան): Այդ արդյունքների ամփոփումը թույլ է տալիս խնդրո առարկայի հանգել հետեւյալ եզրակացություններին.

1. 2011թ.-ի սկզբի դրությամբ հայկական արտադրության դեղերը վայելում են ավելի մեծ ճանաչվածություն, քան 2008թ.-ին: Հայկական դեղերի վերաբերյալ տեղեկացվածությունն աճել է բոլոր հիմնական օգտագործողների՝ բնակիչ-սպառողների, բժիշկների եւ դեղատների աշխատողների շրջանում:
2. Աղբյուրները, որտեղից դեղերի օգտագործողները տեղեկություններ են ստանում հայկական արտադրության դեղերի մասին, իրենց կազմով տարբեր են: Բնակիչ-սպառողների համար տեղեկությունների գլխավոր աղբյուրը հանդիսանում են դեղատները եւ բնակչության շրջանում միմյանց միջև տեղեկատվության փոխանակման արակտիկան: Երկու աղբյուրների կշիռը վերջին 3 տարիներին ավելացել է 2-2.5 անգամ: Բժիշկների եւ դեղատների աշխատողների համար հայկական դեղերի մասին տեղեկատվության գլխավոր աղբյուր են շարունակում մնալ արտադրողները, ընդ որում վերջին 3 տարիներին վերջիններիս կշիռն ավելացել է 1.5 անգամ: Ակնհայտ է, որ ներկայումս արտադրողները շատ ավելի ինտենսիվ են աշխատում իրենց արտադրանքի մասին տեղեկատվություն սփոթելու ուղղությամբ: 3 տարի առաջ նոյն արտադրողները գերակտիվության հարցում մատնացուց էին անում ներմուծողներին, իսկ հիմա իրենք եւս գործում են նոյն ինտենսիվությամբ: Դա, անշուշտ, դրական փոփոխություն է: Դեղերի օգտագործողների շրջանում արտադրողների մասին տեղեկատվությունը տարածվում է նոյն ուղիներով, ինչ-որ նրանց արտադրանքի դեպքում:
3. Իրենց արտադրանքի նման, դեղերի բոլոր օգտագործողների շրջանում ավելի ճանաչված են դարձել նաեւ դեղագործական ծեռնարկությունները: Պրոֆեսիոնալ հանրության (բժիշկներ եւ դեղատների աշխատողները) շրջանում գրեթե համընդհանուր ճանաչում են վայելում Լիկվորը, Արփիմենը, Եսկուլապը: 2008թ.-ին մեծ ճանաչում ունեցող երկու խոշոր ծեռնարկություններ՝ Երեւանի ՔԴՖ-ն եւ Ֆարմատեկը որոշակիորեն կորցրել են իրենց հոչակը:
4. Հետազոտության արդյունքները ցույց են տալիս, որ հայկական արտադրության դեղերի մասին տեղեկացվածության աճը չի հանգեցրել օգտագործողների դրական վերաբերմունքի աճի: Սա ցավալի հանգամանք է, քանի որ 2011թ.-ի հետազոտության ռեսպոնդենտները դեղերի օգտագործման տեսանկյունից եղել են ավելի փորձառու, ասել է թե՝ նրանց կարծիքները եւ գնահատականները կարող են ընկալվել որպես ավելի ծանրակշիռ եւ հիմնավորված: Տպավորություն է ստեղծվում, որ օգտագործողները որքան ավելի շատ են ճանաչում հայկական արտադրության դեղերը, այնքան ավելի են շատանում դժգոհությունները եւ ընսադատությունը: Նման եզրահանգման համար կան օբյեկտիվ հիմքեր: 2008թ.-ի հետազոտությունից կարելի է հիշել, որ հայկական արտադրության դեղերից քննադատության թիրախ էին հանդիսացել Արփիմենի արտադրած հոգեմետ դեղերը, Եսկուլապի փաթեթավորումը: 2011թ.-ին բժիշկների եւ դեղատների աշխատողների կողմից հնչեցվել է ավելի շատ քննադատություն: Ամենացավալին այն է, որ Արփիմենի հոգեմետ դեղերը ներկայումս եւս շարունակում են ցածր գնահատականի արժանանալ բժիշկների եւ դեղատների աշխատողների շրջանում: Քննադատվում են այդ դեղերի եւ որակական հատկանիշները եւ փաթեթավորումը: Քննադատություն է բաժին հասել նաեւ Երեւանի ՔԴՖ-ի դեղերի փաթեթավորմանը եւ ապրանքային տեսքին, Վիտամաքս-Ե-ի

արտադրած Նարիմաքսի համահոտային հատկանիշներին: Այս ամենը բացասաբար է անդրադառնում հայկական արտադրության դեղերի ընդհանուր հեղինակության վրա: Նաեւ սրանով կարելի է բացատրել այն, որ առ այսօր դեղերի օգտագործողների մեծամասնությունը շարունակում է իր նախապատվությունը տալ ներմուծված դեղերին: Իհարկե, դրական փոփոխություն պետք է համարել այն, որ ավելացել է այն օգտագործողների թվը, ովքեր կարողանում են համեմատություն անցկացնել ներմուծված եւ հայկական դեղերի միջև եւ որոշ դեպքերում նախընտրել ներմուծված դեղերը, իսկ որոշ դեպքերում՝ հայկականը: Սակայն մրցակցության մեջ հայկական արտադրության դեղերը դեռևս զիջում են ներմուծվածներին:

5. Հայկական արտադրության մրցակցային առավելություններն են հանդիսանում համեմատաբար ցածր գները եւ բարձր հասանելիությունը: Սակայն օգտագործողների համար առավել բարձր են գնահատվում դեղերի որակական հատկանիշները: Սա նշանակում է, որ դեղերի օգտագործողները պատրաստ են վճարել ավելի թանկ, միայն թե ծեռք բերեն արդյունավետ եւ որակյալ դեղամիջոց: Սա նաեւ նշանակում է, որ հայկական արտադրության դեղերի ապագա հաջողությունները կապված են լինելու առաջին հերթին բարձր որակական հատկանիշներ ապահովելու հետ, եւ միայն դրանից հետո՝ մրցակցային կամ եժան գների առաջարկման հետ:
6. 2008թ.-ի հետազոտությունը հաստատել էր մի իրողություն, որն առանձնապես չեր էլ վիճարկվում ընագավառի մասնակիցների կողմից: Դա բժիշկների եւ դեղատների աշխատողների բացառիկ ազդեցությունն էր ընակիչ-սպառողների դեղեր գնելու որոշումների վրա: Շատ բժիշկներ եւ դեղատների աշխատողներ այդ ազդեցությունը նաեւ շահարկում են՝ փոխշահավետ համագործակցություն հաստատելով մատակարարների (ներմուծողների եւ արտադրողների) հետ: Ըստ որում՝ նշվում էր, որ այդ մեթոդը հատկապես կիրառվում է ներմուծողների կողմից: 2011թ.-ի հետազոտության արդյունքներով կարող ենք արձանագրել, որ 3 տարի անց նշված երեւույթների մասշտաբներն ավելի են մեծացել: Նախ՝ մեծացել է բժիշկների եւ դեղատների աշխատողների խորհրդից (ուղղորդումից) ընակիչ-սպառողների կախվածությունը: Երկրորդ՝ հնարավոր է, որ «մատակարարներ-բժիշկներ կամ դեղատների աշխատողներ» փոխհամագործակցային շղթայում հայկական դեղագործական ծեռնարկություններն իրենց ակտիվությամբ արդեն չեն զիջում ներմուծողներին:
7. Հայկական դեղագործական 9 ծեռնարկությունների հետազոտությունը ցույց է տալիս, որ 2008-2011թթ.-ին նրանց մեծ մասի մոտ տեղի են ունեցել դրական զարգացումներ՝ իրացումների աճ, արտահանման աճ, արտահանման շուկաների կենտրոնացում եւ դրանցում իրացման ծավալների ընդլայնում, աշխատողների թվաքանակի աճ, շուկայավարման բյուջեների ընդլայնում: Եւ դա այն դեպքում, եթե նշված շրջանը եղել է Հայաստանի տնտեսության գրեթե բոլոր ճյուղերի համար ծանր ժամանակահատված:
8. Փորձելով իրար կապել Հայաստանի դեղերի շուկայում տեղի ունեցող մի քանի հիմնական իրադարձություններ, մենք հանգում ենք հետեւյալ ամփոփիչ եզրահանգմանը: Վերջին 3 տարիներին հայկական արտադրության դեղերի նկատմամբ օգտագործողների ճանաչվածությունը աճել է, սակայն դրանից նրանց վերաբերմունքը չի փոխվել եւ նախընտրությունները մնում են ներմուծված դեղերի օգտին: Այսօր ավելի հաճախ կարելի է հանդիպել հայկական արտադրության դեղերի ընդհատության: Մյուս կողմից ակնհայտ է, որ այդ ժամանակահատվածում հայկական արտադրության դեղերի իրացման ծավալները աճել են, չնայած տրամաբանական կլիներ հակառակը: Մեր եզրահանգումն այն է, որ հայկական դեղագործական ծեռնարկությունները մեծապես ընդլայնել են մարկետինգային միջոցառումների ծավալները, որոնց թվում նաեւ բժիշկների եւ դեղատների աշխատողների խրախուսման սխեմաները, որոնք ապացուցում են իրենց արդյունավետությունը: Դա հատկապես ուշագրավ է այնքանով, որ հայկական արտադրության դեղերը օգտագործողների շրջանում չեն վայելում այնպիսի հեղինակություն, ինչպիսին ունեն ներմուծված դեղերը:
9. «Առողջ ազգ, առողջ տնտեսություն» քարոզարշավը, ընդհանուր առմամբ, լուծել է օգտագործողների շրջանում հայկական արտադրության դեղերի եւ արտադրողների ճանաչվածության բարձրացման խնդիրը: Սույն հետազոտության մեջ քննարկված բոլոր

թեմաների գծով քարոզարշավի սեմինարներին մասնակցած բժիշկները ավելի տեղյակ են, գիտակ եւ դրական վերաբերմունքով, քան այդ սեմինարներին չմասնակցած բժիշկները: Ակնհայտ է, որ առողջապահական հաստատություններում (հիվանդանոցներ, առողջապահական հաստատություններ) դեռեւս կան բազմաթիվ բժիշկներ, որոնք ունեն հայկական դեղագործական ինդուստրիայի մասին ոչ լիարժեք կամ թերի տեղեկություններ:

8.2 ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դատելով դեղերի օգտագործողների արձագանքներից, հայկական արտադրության դեղերի խթանման եւ առաջմղման համար հարկավոր է լուծել 2 հիմնական խնդիրներ. ա) ապահովել հայկական դեղերի ճանաչվածության բարձրացում, թ) բարձրացնել հայկական դեղերի որակական հատկանիշները: Ընդ որում՝ այդ երկու խնդիրների բարեհաջող լուծումը սերտորեն կապված են միմյանց հետ:

Հայկական արտադրության դեղերի ճանաչվածության բարձրացումը եւ դրա հետագա պահպանումը կապված է շուկայավարման շարունակական գործողությունների հետ, որը ներառում է.

- **գովազդային արշավը**, որը ներառում է հայկական արտադրության դեղերի եւ արտադրողների լուսաբանումը հիմնականում հեռուստատեսությամբ,
- օգտագործողների շրջանում **սեմինարների եւ շնորհանդեսների** կազմակերպումը,
- **աշխատանքը բժիշկների հետ**, որը ներառում է նաեւ նրանց խրախուսման մեթոդների կիրառությունը:

Ուշագրավ հանգամանք. այն, որ արտադրողները պետք է շարունակեն կամ ընդլայնեն բժիշկների խրախուսման ծավալները, կարծում են ոչ միայն իրենց՝ բժիշկների 8%-ը, այլ նաեւ դեղատների աշխատողների 9%-ը եւ բնակիչ-սպառողների 3%-ը: Ընդ որում՝ վերջիններս արտադրողներին «խորհուրդ» են տալիս են ոչ թե անմիջապես խրախուսել բժիշկներին, այլ այնպես անել, որ բժիշկները դեղեր նշանակելիս նշեն հայկական դեղեր: Այսինքն՝ այդ բնակիչ-սպառողները պատրաստ են օգտագործել հայկական դեղեր, միայն թե դրանք նշանակեն բժիշկները:

Հետազոտության թիրախային խմբերի կողմից հայկական արտադրության դեղերի առաջմղման միջոցառումների փունջը ներառում է մի շարք գործողություններ: Ընդ որում՝ դեղերի օգտագործողները դրանք բոլորը հասցեագրում են հայկական դեղագործական ձեռնարկություններին:

Աղյուսակ 47 - Հայկական արտադրության դեղերի առաջմղման համար անհրաժեշտ գործողություններն ըստ դեղերի օգտագործողների

Առաջարկություններ	Բնակիչ-սպառողներ	Բժիշկներ	Դեղատների աշխատողներ
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է աշխատեն արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ	35%	45%	65%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է աշխատեն արտադրանքի փաթեթավորումը եւ ապրանքային տեսքը բարեկավելու ուղղությամբ	3%	14%	26%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է ել ավելի ինտենսիվացնեն իրենց արտադրանքի գովազդը	24%	25%	28%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է առաջարկեն ավելի մատչելի գներ	11%	13%	11%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է ավելի շատ աշխատեն բժիշկների խրախուսման ուղղությամբ	3%	8%	9%

Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է բարելավեն եւ մոդեռնիզացնեն իրենց արտադրության պայմանները (այդ թվում՝ ներդնեն GMP)	2%	6%	6%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է ընդլայնեն իրենց արտադրանքի տեսականին	2%	4%	1%
Հայկական դեղագործական ձեռնարկությունները պետք է կազմակերպեն սեմինարներ եւ շնորհանդեսներ	3%	7%	-

Հիմնվելով այսուսակի տվյալների վրա, մեկ անգամ եւս պետք է արձանագրել, որ հայկական դեղագործական արտադրանքի հիմնական խնդիրը մնում է անհրաժեշտ որակի ապահովումը: Ըստ որում՝ այսպիսի որակի, որը թույլ կտա միջակցել ներմուծված դեղերի հետ: Դեղագործության հայկական խնդուստրիան ունի արդեն հաջողված օրինակներ, երբ հայկական արտադրության դեղերը շուկայից դուրս են մղել ներմուծված դեղեր, կամ ել հաջողությամբ մրցակցում են որանց հետ: Նշանակում է՝ բարձր որակի արտադրանքի թողարկումը հայկական դեղագործական ձեռնարկությունների համար լուծելի խնդիր է: Դեղերի բարձր որակի ապահովման խնդիրը պետք է դիտել որպես առաջիկա տարիներին խնդուստրիայի առջև ծառացած գլխավոր մարտահրավեր: